

15

2837

ՄԱՆԿԱԿԱՆԱԿ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ի

Մ Ե Ղ Ո Ւ

ԹԻԻ 234 ՄԱՐՏ 7

1864

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ԴԱՏԱՔՆՆՈՒԹԻՒՆ

301(47.925)(09)

ԴԱՏԱՔՆՆՈՒԹԵԱՆՑ

ԵՒ ԽՕՍԲ

ԱՌ ԱՆԿԵԱԼՆ Ի ՃՇՄԱՐՏՈՒԹՆԵՆ

Մ-70
ԿԻԴ

9(47.925)

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՄՈՒՐՃԷԱՆ

ԵՒ

ԱՌ ԱԶԳԱՑԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՄՊՈՒԹԻՒՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ




ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ԹԱԴԷՈՍ ՄԻՀՐԴԱՏ Տ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՆԵԱՆ

ՄԻՀՐԴԱՏԵԱՆՑ

Սկսեալ 1865 Յունիս 4. ցվերջ Դեկտեմբերի:



ԼԱՐԴ ԳՈՐԾ
ՀԵՂԻՆԱԿԻՆ


ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ

Կ.-ՊՈԼԻՍ, ՖԻՆԱՆՍԱԿԱՐ

- 1864 -



A $\frac{1}{2}$
1454



Ներկայ գատաքննական աշխատութիւնս՝
Մէլ-- հանդիսին 202 , 203 , և 204 թիւերուն
միջոցաւ որքան ալ սկզբնաւորութիւն մը ըրինք
ալ նէ՝ բայց շարունակութիւնն ու վերջաւո-
րութիւնը նորա մէջ չի կրցինք հրատարակել ,
հետեւեալ պատճառներով .

Վախ՝ թէ տպագրական յայտնի սխալները՝
և մինչև անգամ բառերու պակաս շարուիլը
տեսներով , և թէ՛ խմբագրին հրատարակելիք
նիւթերուն շատութիւնովը մեր յօդուածին շա-
րունակութիւնը ընդմիջելուն համար՝ չի կամե-
ցանք . Արկրորդ՝ շատ մը բարեկամներ մեր նը-
ւաստութենէն խնդրեցին , որ գործը շարունա-
կելով առանձին տետրակաւ մը իբր **Յ--եւ--ձ**
Մէլ--ձ հրատարակենք . որպէս զի ընթերցող
հետաքրքիր անձանց դիւրութիւն մը ըլլայ ու-
չի ուշով կարգալու . վասնորոյ այս բարեկամնե-
րէն Առաքինի և Ազգասէր Անձին մէկը , քա-

Չալերելով զմեզ իր ծախիւքը տուել տալու բա-
րեհաճեցաւ, առ ՚ի տեղեկութիւն ներկայ և
ապագայ Ազգայնոց ։

Բայց միանգամայն սա կուզեմք խմայունել
արդոյ ընթերցողաց, թէ՛ որքան որ սոյն դա-
տաքննութեանս մէջ հեղինական ձևեր ու կծու
խօսքեր կան նէ՛ գիտնան նախ՝ որ Չամուր-
ձեան Պատուելիին մեզի դէմ առանց իրաւամբ
նետաճ քարերուն արձագանքն է, որմէ պար-
տաւորեցանք սոց կերպերը գործածել, մտա-
ծելով որ՝ դուցէ կարողանանք իրեն բան
հասկցնել ։ Արկրորդ՝ թէ՛ իրեն և թէ Աւթի-
ձեան Պ. Կարապետին 12 տարիէ ՚ի վեր լրագ-
բաց և հրատարակական գրութեանց մէջ
ներմուծաց սկզբունքնին՝ կամ լաւ ևս փոխունք-
նին է որ արտաշնչեցին վիճարանութեամբ ։ ու-
րով ոչ միայն տաղտկացուցին համեստաբարոյ
ընթերցողները, այլ և Հայ գրականութեան
պատիւն ալ աղարտեցին այս անմարդավայել
ընթացքներով, որն որ գլխաւորապէս ոչ թէ
միայն իրաւունք մը չունեցողի ու ազիտի գործ
կրնայ համարուիլ այնպիսի գրուածքները, այլ
և իրենց անմարդի բարքը ու խրոխտ ամբար-
տաւ անութիւննին կը յայտնեն այնպիսի անձինք ։

Ապաքէն եթէ մեր գրչէն ալ ըստ տեղւոյն այդ օրինակ ձևեր որ դանուին, անմեղադիր լինին ընթերցողք, գիտնալով որ գրութիւնը ու յանցանքը իմն չէ, այլ յիշեալ հեղինակներուն է. թէ և այն ալ իրենց նման առանց յարմարութեան չեմք գործածած. և ալ ըստ որում անոնց դէմ ուղղուած է ըստ մեծի մասին մեր գրութիւնը, վասնորոյ Արքազան Ապաքելոյն « Աղէ ընդ հրէայան հրէայ » ըսածին նման՝ ակամայ կամօք պարտաւորեցայ մեր սկզբան դէմ շարժիլ, ու անոնց ոճոյն և ընթացքին հետևիլ, յուսալով որ՝ գուցէ հաճելի դատուի մեր բանադատութիւնը իրենց աչքին

Ի վերջոյ սա ալ կիմացունեմք, թէ սոյն յօդուածոյս շարունակութիւնը ու շնորհուն համար, քանի մը խօսք աւելցուցինք դատաքննութեանս վերջը, կարելի է այն դիտողութիւններս ալ հաճելի ըլլալով Ազգային Անդրոնական Աշարժութեան Առատանդնուպօլսոյ, իրենց ուշադրութիւնը կը գրաւեն մեր դիտողութեանցը՝ ու տեղեկութեանցը վրայ .



“Ամենայն որ զչար գործէ, ասեայ զլոյս, եւ ոչ գայ առ
„ լոյսն, զի մի՛ յանդիմանեցին գործք նորա „ :

“ Իսկ որ առնէ զճշմարտութիւն , գայ առ լոյսն , զի
„ յայտնի լիցին գործք նորա՝ Թէ Աստուծով գործեցան „ :

ԱՒԵՏԱՐԱՆ ՊԱՏԳԱՄ ԱՍՏՈՒԾՈՅ. (ՅՈՎ. Է. ԳԼ. Գ. ՀԾԲ. 20—24) .



ԴԱՏԱՔՆՆՈՒԹԻՒՆ

ԴԱՏԱՔՆՆՈՒԹԵԱՆՑ

Մեր հրատարակած «Նկարագիր աղէտից Երուսաղեմի եւայն» մակագրով գրքին վրայօք՝ մինչեւ ցարդ եղած դատաքննութեանց կամ լաւ եւս անտեղի բարբաջմանց, եւ յատկապէս Երեւակ հանդիսի միջոցաւ հրատարակուած քննադատական յօդուածին դէմ մեր ընդհանուր պատասխանը:

« Որովհետեւ (բարեկամք իմ) անդգամեւ
« ցան յինէն՝ սակս յայտնելոյ իմոյ զճըշ-
« մարտութիւնն . սակայն ես զայսպիսի
« քրտամբ զմեծ վաստակսեւ բազում աշ-
« խատութեամբ զծախս՝ վատ վաճառաւ
« կանուութեամբ ընդ թեթեւ ընչի տալ ոչ
« կարեմ » :

(ՋԱՁ. ՓԱՐՊ. ԹՂԹ. ԲՈՂ. ՁԵՌ):

Յայտնի է արգոյ հասարակութեան, որ մեր հըրատարակած «Նկարագիր աղէտից Երուսաղեմի, եւայն» մակագրով գիրքը ընթերցողաց շատերուն հետաքրքրութիւնը շարժեց ալ նէ՛ բայց ոմանց ներքին շիղերուն եւ ուղեղներուն դպչելուն համար՝ սկսան ոմանք ծաղրել . եւ ոմանք նորա մէջը նըշանակուած անուրանալի եւ յայտնեալ ճշմարտու-

Թիւնները եւ իրողութիւնները կասկածելի եւ ան-
վաւեր ցուցնել : եւ ոմանք ալ մէջէն իբր թէ սխալ
կամ սուտ եւ դրսարտական բաներ նշմարելով ան-
հիմն եւ անտեղի հրատարակել որով եւ գիրքը
կասկածելի ու զմեզ խարդախ ցուցնելով՝ Ս. Երու-
սաղեմի հանգուցեալ Պատրիարքը անարատ երեւ-
ցնել . ինչպէս որ արդէն դուշակամ ըլլալով զասոնք՝
գրքին ճակատը Ազգով մը խնայուցեալ էինք . Տես
եր. է : Յիշեալ անձանցմէ մէկն էր , Խթիւճեան
կարապետ Մասիս անուն լրագրին խմբագիրը . եւ
միւսն էր՝ Սէր անուն հանգիսին մէջի հրատարակ-
ուած յօդուածին անանուն հեղինակը :

Առաջինը իր բնական ծաղրաբանութեամբը՝ կամ
լաւ եւս չար նախանձովը՝ շահախնդրութեան ող-
ւով գրքին մակագիրը իրեն մեջի գրուածոցը
համաձայն էր ըսելով վեր վար քաշկուտեց՝ իրեն
արժանի ծանր նախատական եւ անմարդավայել խօս-
քերով . . . եւ կողէր որ՝ « Ազիտից Երուսաղեմի »
ըսուելու տեղ չնոր նաբուգոզոնոսոր մը երեւան ել-
նելով՝ բոլորովին յարժանեկրօն քննաջինջ ըներ Ե-
րուսաղեմ ըսուէր . որ ինքն ալ գոնէ տեսնելով
Ազգիս ու Միաբանից Վրայ եկած եւ եղած ա-
ղէտալի հարուածները՝ քիչ մը հաւատայր ու սիր-
տը հանգչէր . . . : Այս ազգատենաց անձին բրած
բարբանջմանցը դէմ պատասխան մը չունինք տալ ,
որ իրեն չի նմանինք . քանզի մէկ մը որ՝ ինքնին
իր դրուածովը խայտառակ եղաւ . եւ մէկ մ'ալ որ
արդէն քանի մը ազգասէր անձինք զինքը անպա-
տասխանի ըրին հրապարակական թերթերու միջո-
ցաւ . Տես Մեհմուայի, Թիւ 425, 429 : Միւնատի ,

Թիւ 108. Սէր, Թիւ 16: Երկրորդը որ էր Սէր ա-
նուն հանդիսին միջոցաւ հրատարակուած քննա-
դատական յօդուածը . որն որ Ակամայ պարտքի մը
հատուցում վերնագրով սկսած էր՝ որուն մէջ հե-
ղինակը կերպովէ՛ր՝ որ մենք բաւականօրէն չու-
նեճալիս խոստովաներ էմք եղեր . բայց ուր տեղ
է եղեր այդ խոստովանօրէննիս՝ անի չէ ցուցու-
ցեր . . . (յաճնուս նայելով որուն հեղինակը յա-
ռաջ Հոսովէական կղեր մը ըլլալուն՝ գուցէ մեզի
իր խոստովանորդիներէն մէկը համարելով երեւա-
կայած պիտի ըլլայ , եթէ ոչ մենք գրքին մէջը ա-
տանկ բան մը խոստովանած չեմք , հետեւաբար
սուտ զրոյց է ըսելը աւելորդ է . . .) եւ կամ թէ
գրքին մէջի նշանակուած տեղեկօրէնները ա-
ռանց ապացոյցի է եղեր , վասնորոյ կը գրգռէ
Ազգն ու սուրբ Յակոբայ Միաբանութիւնը՝ որ ժա-
մանակ չանցնելով յիշեալ գրքին մէջի պարունակ-
ուած ճշմարտութիւնները եթէ կարելի է հերքուի .
որ յետ ժամանակաց ստոյգ եւ ժամանակակից պատ-
մութեանց կարգը չանցնի , եւայն , եւայն : Ասոր
ալ առանկ ըսել եւ հրատարակել կը վայլէր . ըստ
որում մէկ մը որ մենէ չէր անոր հեղինակը՝ քան-
զի ըստ առածին « Առաւել գիտէ տխմարն 'ի տան
իւրում , քան իմաստունն 'ի տան այլոյ » . եւ մէկ
մ'ալ որ՝ Ս. Փրկչի Հիւանդանոցը կը տպուէր յիշեալ
հանդէսը , վասնորոյ հաւանականաբար կրտենք թէ՛ եր-
բեմն Սուրբ Երուսաղիմայ եւ ասոյս Սուրբ Փրկչի հա-
ւերը ուսող Պատուելիին խնդրանօքը ու թելագ-
րութեամբը գրուած ու հրատարակուած պիտի ըլլայ
յիշեալ անկեղցիեղ յօդուածը , քանզի յիշեալ անձը

նոյն միջոցներուն գործակալութեան պաշտօն կը վարէր Հիւանդանոցին

Եւ երրորդ՝ վերջապէս բանը այս օրինակ կարգին դնելով երկու տարիէն ետքը յիշեալ գրքին մէջի նշանակուած կամ խայտառակութեան ենթակայ եղած անձինքը թեւ թեւի տալով իրենց հրաշակաւոր եւ երեւելի ու խելացի՝ փիլիսոփայ եւ աստուածաբան ու իմաստուն եւ զօրաւոր փաստաբան մը գտան այսօր մեր գիրքը դատաքննելով հերքելու, եւ երուսաղիմայ հանդուցեալ Պատրիարքը անարատ ցուցընելու . եւ յիշեալ փաստաբանին մէջ բերած հմտալից ու զօրաւոր ապացոյցներովը, գրքին մէջի նշանակուած իրողութիւնները՝ ինչպէս ըսինք իբր սուտ եւ անտեղի ու կասկածելի, եւ որով զմեզ ալ իբր տգետ եւ խարդախ ու ռխակալ անձ մը ցուցընելու աշխատեցան, եւ մինչեւ յաւիտեան ալ պիտի աշխատին անշուշտ Վերջապէս քսան ամիսէ՝ ի վեր աշխատելով աշխատելով եւ գիրքը վեր վայր գարձնելով գարձնելով, ու ամեն մէկ տողերը ու բառերը խոշորացոյցով նայելով, եւ շատ մըն ալ բարակ ալիւրին մաղերէն անցընելով իրենց խելքովը ու յիշեալ փաստաբանին՝ այսինքն Չամուրձեան Յովհաննէսի պէս անձին գրչովը հետեւեալ երեք հատ իբր սխալ ու անտեղի եւ զուր տեղը Պատրիարքը ամբաստանելնիս գտան, երեք հատուածի բաժնելով, (որոնք քիչ մը վարերը պիտի տեսնուի) . միանգամայն թէ մեր եւ թէ ուրիշներուն անձնական պատուոյն ալ դպչելով, որն որ իրաւունք մը չունեցողին ձեռքը իբր թէ մուր մըն է որ ուզածին պէս որով որ ուզէ նէ կը քսէ եւ

ջամուր մըն է՝ որսւ որ ուզէ նէ կընեաէ . . . եւ յայտնի է որ յիշեալ Չամուրճեանն ալ իր մականուանը համեմատ ատանկ բաներու մէջ ժիր եւ յաջողակ է . . . նա մանաւանդ պարտաւորեալ է ընելու ալ , որովհետեւ իրենն ներքին ջիղերուն դպչելիք իրողութիւններ ալ կան յիշեալ գրքին մէջ :

Արդ թէպէտ եւ մենք արհամարհոտ լուծեամք մը պիտի անցնէինք ալ նէ՝ ակնածելով իրեն զառամութեանը , բայց եւ այնպէս մտածելով որ՝ չըլլայ թէ իր գրած ցնորարանութիւններուն ինք անցնելէն ետքը հաւտացողներ գտնուին , եւ կամ մենք ալ իբր թէ անպատասխանի եղած գտնուինք , վասնորոյ քանի մը խօսք զբուցել հարկ եղաւ : Եւ ըստ որում Պատուելի Յովհաննէս Պրուսացի Տ . կարապետեան Չամուրճեան Տէրոյնցը՝ միւս շահատէրտըզէտներուն նման միայն անբաւականութեամբ ափեղցիլեղ խօսքերով եւ կամ միայն անձնական պատուոյ դպչելով եւ կամ թէ նախանձով մը վեր վայր քաշկոտելով առանց դատաքննութիւն մը ընելու հերքած չէ մեր գիրքը : Եւ որքան որ այդ կերպերը բանեցուցած ալ է նէ՝ դատաքննական ոճ մը բռնելով իր գիտցածին կամ իր խելքին հասածին չափ մէջէն իբր թէ սխալ ու անտեղի , կամ ինչպէս ինքը կըսէ ատելութեան եւ ոխակալութեան իրեր նըշմարած է : Ապա ուրեմն մենք ալ ակամայկը պարտաւորինք իր ըրած յիմարական շաղվաղիտութիւնները եւ իրենն ինչ ոգւծյ տէր ըլլալն ու իրեն գիտցած ու գրած դատաքննութիւնը ինչ արժէք ունենալն ալ մի առ մի յայտնել . եւ այս ալ այնու դիտաւորութեամբ որ՝ եթէ անոր խելքին ու գրուա-

ծոցը ուշադրութիւն ընող եւ ըսածներուն հաւատք ընծայող եւ անոր հրատարակական թերթերը մեր Հայ ազգէն տակաւին ընթերցող անձինք կան ու անով գայթակղութիւն մը պատճառած է նէ իրենց, գուցէ ներկայ գրութեամբս կը փարատի իրենց գայթակղած միտքերը, որով եւ հաւատք կընծայեն մեր գրութեանց . ապա թէ ոչ՝ եթէ Չամուրճեանին ամեն մէկ խօսածին ու դրածին ականջ դնելու որ ըլլանք՝ նախ հասարակութեան եւ ընթերցողաց ձանձրութիւն կուտանք . եւ երկրորդ՝ մենք ալ իրեն գաղտնաբերեալ եւ իրեն խելքէն եղած կըլլանք , յորմէ փրկեացէ զմեզ Աստուած , աղաչեմք . . . :

Ահա այսքանը իբր յառաջարան հասկցնելէն ու հատկացուելէն ետքը՝ դանք այժմ Չամուրճեան Յովհաննէսին մեզի ու մեր գրքին դէմ գրած տողերը մի առ մի մէջ բերելով մեր կողմէն խօսելիքնիս կամ թէ լուծմունքնիս առ ընթեր դնել :

Արդ իր հրատարակած յօդուածը երեւակայական երեւակիին միջոցաւ տարւոյս Մայիս 45 օրը երեւան ելաւ հրատարակութեամբ , որ ինքը 1862 Ապրիլ 4. եւ Ապրիլ 16. եւ Մայիս 4. թիւերով եւ թուակառնով տպած է . գուցէ իր թուականը ընդհանուր քրիստոնէից գործածած թուականէն տարբեր՝ կամ մէկ տարի մը ետքն է . եւ այսպէս Չամուրճեանին 1862 ըսածը՝ մեր 1865 թուականը հասկնալու է . . . *

*Եւ այս ալ գիտեմք ինչ գիտաւորութեամբ ըլլալը . քանզի իբր թէ հասարակութիւնը խաբելով անանկ մը պիտի ձեւացնէ՝ թէ տարի մը յառաջ յիշեալ գիրքը գատաքննած է . բայց իր Նշուելի կրնար հանելուն պատճառաւ՝ տարի մը

թէպէտ եւ ինքը գմեղ թուականի խարդախող
անձ մը կը համարէ՝ ակնոցը քթին վրայէն վար ձը-
գած ըլլալով մեր հրատարակած գրքին թուական-
ները նայած ժամանակը . . . : Եւ

Նախ՝ նախանձը չի տանելով մէկ երկու պար-
բերականներու խմբագիրները ծանծաղամիտ կը կո-
չէ՝ մեզի ու մեր գիրքը ազգասիրաբար գովելնուն
համար. որոնց մէկն է կըսէ Ծաղիկ ըսուածը. բայց
միւսին անունը չի տար, որ Միութեան հանդիսին
խմբագիրն է, եւ յատուկ իր ստորագրութեամբը
դրած է. (Տես թիւ 6. Բ. Տարի 1864. Նոյեմբեր 15),
Եւ այս այն անձն է, որ ութը տարի Պ. Երուսաղի-
մայ վանուց մէջ վարժապետութիւն ընելով եւ Չա-
մուրճիէն աւելի տեղեկութիւն ու գիտութիւն ալ
ունենալով մեր հրատարակած գրութիւնը ստոյգ՝ եւ

ետքի ձգած կամ տարի մը յառաջ իբր թէ պատասխանը տը-
ւած է. թէև ատանկ ալ ըլլար նէ՝ դարձեալ ութը ամիս մի-
ջոց կար գիրքը հրատարակուած թուականէն մինչև 1862
Մայիս ամիսն. ուստի դարձեալ չի զօրեր. քանզի Չամուրճեա-
նի պէս անձ մը՝ որ մէկ օրուան մէջ հազարաւոր խօսք կը
գտնայ զուրցելու, և մէկ կէտին ու խօսքին՝ հազարաւոր
խնդիրներ կը յարուցանէ՝ մի և նոյն ժամանակին մէջ. ար-
դեօք ի՞նչպէս կրնայ ըլլալ՝ որ ութ ամիս համբերէ . . .
ասի ընելու մարդ եթէ կայ նէ՝ Չամուրճեանին համար չէ .
ուստի կենթադրեմք, թէ՝ ինչպէս զուրցեր եմք ալ՝ քսանա-
միսէ ՚ի վեր աշխատելով՝ կամ իրենն ուղեւորը, և կամ գրքին
մէջը նշանակուած անձանց թելադրութեամբը ու խորհրդովը
այսօր ասպարէզ մտաւ, ու սկսաւ իր ճշմարտութիւնը յայտ-
նել . . . դուցէ այս զուրցածներս ալ Չիլիկիլիբեան վարդապե-
տէն՝ եւ կամ Թուրքի խմբագրէն առնելով դրինք . . . բայց
անոր ալ պատասխանը քիչ մը ետքը Աստուծով կուտամք:

եղելութեանց ականատես ըլլալը վկայելէն զսա՛րկ մեզ կերպով մըն ալ կը մեղադրէ, որ շատ մը ճշմարտութիւններ ալ՝ կամ ջենք գիտեր, կամ քէ գիտեմք ալ նե խոհեմութեամբ ծածկեր ենք. եւ այս ասանկ վկայող Անձն է՝ Տիրան Հայրապետ Սովալանեան Պատուելի Զմիւռնացին, որն որ Չամուրճեանէն եւ նորա համախոհներէն՝ կամ լաւ եւս Երուսաղիմայ Հանգուցեալ Պատրիարքին պատառաբոյժներէն ծանծաղամիտ կը կոչուի այսօր՝ գրքին մէջի սարունակութեամբ ճշմարիտ ըլլալը յայտնելով եւ ականատես վկայ լինելովը . . . : Բայց զարմանք չէ այս . քանզի ճշմարիտը խօսողին՝ եւ ճշմարտութեան վկայ կեցողին՝ իբր թէ ճակատագիրն է . . . :

Երկրորդ՝ ոչ թէ միայն իրեն՝ այլ եւ իրեն նրման Պատուելիին մէկուն սրտին ալ վէրք եղած է, որ մեր գիրքը հետաքրքրութեամբ մը ամենքը ձեռք ձգելով կարդալուն՝ եւ կամ մենք պէտք եղած տեղերը կամ գրամով եւ կամ ըստ մեծի մասին ձրի բաշխելով տարածմանը փոյք ունեցած ենք. որպէս զի եթէ Չամուրճեան Յովհաննէսին՝ կամ Տ. Պօղոսեան Գալուստին՝ եւ կամ Պօլսոյ Մայր Եկեղեցւոյ Տ. Գէորգին նման անձանց կեղծ ու պատիր եւ սուտ ու փուտ խօսքերնուն եւ տեղեկութիւններնուն հաւատք ընծայելով խաբուած են նէ՛ կարգան եւ տեղեկանան Սուրբ Երուսաղեմի վրայ եղած եւ Ազգիս ուրիշ վիճակներուն մէջ գանուած թէ՛ նիւթական եւ թէ՛ բարոյական կորուսաները ու ազէտքները, եւ ՚ի փառս Աստուծոյ անոնց դարմանին նախին՝ տարածայնութիւնը վերցնելով Ազգիս մէջէն եւ

Ազգիս իրաւունքները պաշտպանեն, եւ ահա այս էր մեր բուն դիտաւորութիւնը :


Բայց ասով մեզի ծագը կընէ . « Հեղինակը (գրքին) տարածմանը մեծ փոյթ ունի՞, սրճատուէնները եւ փողոցները մէկը տեսածին պէս ողջունելէն (իմա բարեւելէն . . .) անմիջապէս ետքը գրքէն մէկ հասմը ձեռքը տալով եւ դինը ուզելով, որով շատ օրինակներ ծախսած է », կըսէ . եւ ասով խարդախութեամբ մը իրեն նման շահասէր կուզէ ձեւացնել ըզմեզ . ընդհակառակն մենք ոչ թէ միայն շահ չեմք ըրած , այլ մինչեւ անգամ ծախքն ալ չեմք հանած , մեր անշահասէր բնաւորութեամբը շատերուն ձրի չնորհելով . ինչպէս եւ ասկէց յառաջ հրատարակած « Սեբեոսի պատմութեան » ալ ձրի բաշխելով ազգիս՝ օրինակը ցոյց տուինք , որմէ երեք օրինակ ալ ապերախտութեամբ դմեզ պարսաւող Չամուրճեանին տուինք , բայց ստակ չի պահանջեցինք . . . կուզէ նէ՝ ինքը անձամբ դայ մեզի ու անոնց յականէ յանուանէ ցուցակը ցուցընեմք . . . Ասոր համար շաբան կընայինք զուրցել իրեն՝ այս բնաւորութեանը համար , որ իր ունեցած պակասութիւնը այլոց բեռցընել կուզէ . բայց ամօթ կըսեն բան մը կայ , որն որ կը ցաւինք ըսել , թէ իրեն ծննդեանը մէջ գոյութիւն ունեցած չէ . . . վասնորոյ ինչ ալ որ զուրցենք այս մասին իրեն , պարապ է , եւ ընթերցողաց ալ ձանձրութիւն կուտայ , մենք դառնանք այժմ միւս խօսածները քննել :

Երբորդ՝ չար նախանձով մը կը դրզոէ երեւելի ու պատկառելի Ազգապետներնուս մէկը , որ իբր թէ ինքը հաւատք չընծայէ մէջի պատ-

մեռածներուն՝ դիրքը Երևն ընծայելնուս համար . եւ
կամ գրքին մէջը նշանակուած քաղաքուն համար յի-
շեալ Պայտաղատին անունը , ուրիշները կարգացած
ժամանակնին իրր ասոյդ չի համարեն մէջի պատմու-
ածները . եւս ասոր ծանօթութիւն մըն ալ աւելցը-
նելով դարձեալ կը շողոքորթէ յիշեալ Ազնուակա-
նը , երեւակայելով որ՝ տակաւին իրեն շողոքորթա-
կան գրութեանց եւ խօսիցը ակամջ գնող կայ . . . :
Եւ ահա այսքանը հասկցնելէն ետքը՝ կսկսի գրքին
հրատարակած թուականին եւ հրատարակութեանը
վրայօք բանդադուշել :

Չորրորդ՝ « Այս գիրքը թէպէտ 1861 թուին վեր-
ջերը հրատարակուեցաւ , քայց գրքին հակառը 1860
գրուած է , որ շատ չի միարանիր նոյն գրքին 199
երեսը գրուածին հետ , ուր 1861 Յունիսի 20ին ա-
սած մէկ տեղեկութիւնը կը պատմէ Ս կրտ . ու
կըսկըսի օրինակ քերելով Երուսաղիմայ միաբան Չի-
քինկիբեան վարդապետին՝ եւ Մասիս քաղկեր հը-
բատարակող Խթիւճեան կարապետին քզանձքներ-
նուն վակչիկ , նոր ՚ի նորոյ Ազգային վէճ մ'ալ յա-
րուցանել ուղելով , որպէս զի շահի շահապրօ-
թեամբ . . . : (Ա յն է Հաննէի պատմութեան մէջ
նգովք քալաուն կամ քքալաուն կտիւր . . .) : Անոնց
համար զուրցածը անոնց թողլով , կամ նոյն յարու-
ցած վէճին վրայօք մեր կողմէն չիապէս բացատ-
րութիւնը տրուած քալալով , թէ գինքը եւ թէ հի-
տաքրքիր բանասէրները 1861 Օգոստոս 25 , օրուան
ԵՐԿՈՒ ԽՕՍԲ մակագրով հանած յայտարարութեանս
ուղարկելով . կըսեմք թէ՛ Տէրոյնեց Յովհաննէսը՝
կամ ցնդեր է , եւ կամ աչացը կողմէն սկարութիւն

մը ունեցեր է, որով եւ ամենքն ալ կը կարծէ՝ թէ իրեն նման են . . . քանզի չէ տեսեր ու չէ հասկըցեր խեղճը . որ գրքին ճակատը դրուած Ազդին մէջ (որ ինքը ստէպ ստէպ Յառաջաբան կանուանէ . . .) յայտարարութիւն ըրած եմք՝ ըսելով թէ՝ « հրատարակութիւնը ուշանալուն համար . . . քանի մը խօսք աւելցուցինք, ինչպէս որ Յաւելուածներուն մէջ պիտի տեսնուի » . (Տես անդ երես 6) : Եւ այս այսպէս ըլլալն ալ գրքին ընթացքէն ալ կերեւի, որ երես 62 Ախպրոսի վանքը որքան որ յիշատակեր եմ ալ նէ՝ բայց Չամուրճեանին առարկայ բերած 199 երեսին Յաւելուած Գ. ին մէջ ըսեր եմ, թէ « Որքան որ վերոյիշեալ տեղեկութիւնը Միաբաններէն տեղեկանալով հոն դրինք ալ նէ՝ միանգամայն ուրիշ հետաքրքրական տեղեկութիւններ ալ իմանալով 'ի վերայ անշարժ կալուածոց Ախպրոսի, պարտանձին կը համարինք զանոնք ալ նշանակել, եւայն » . ըսելով հոն կրկին բացատրեր եմ : Եթէ առաջ տըպուած չըլլար գիրքը, եւ եթէ առաջ յիշեալ տեղեկութիւնները ունեցած ըլլայի՝ հարկաւ երես 62, Ախպրոսի վրայօք տուած տեղեկութեանս մէջ կը յարէի . ինչ հարկ կար նորէն Յաւելուածով մը կըրկնաբանել . ատի Չամուրճեանի պէս անձի մը գործք է, որ մէկ բանէն կամ մէկ խօսքէն քառսուն կերպ խնդիր հանելով կրկին եւ կրկին բծախնդրութեամբ իրեն ընթերցողները տաղտկացուցանելով՝ յօրինէ ու յօրինէ, տնօրինէ ու տնօրինէ եւ շարունակէ ու շարունակէ . . . Եւ ըստ որում 1861 Հոկտեմբեր 16ին գիրքը երեւան հանեցինք մամուլ տակէն ազատելով, վասնորոյ ուշանալուն համար, թէ նոյն ժամա-



նակի պատահած աղետալի պարագաներուն վրայօր, եւ թէ դրսէն առած նոր 'ի նորոյ ուրիշ տեղեկութիւններնուս վրայօր, (որոնք որ գրքին մէջի նրկարագրուածներուն կը վերաբերէին), բանի մը խօսք աւելցուցեր՝ կամ հանգանակեր էմ Յաւելուածներու միջոցաւ . (եւ այս ասանկ ըլլալն ալ Ազգին մէջ ծանուցեր էմ), որպէս զի ապացուցական ճշմարտութեամբ ստուգութի պատմուած իրերը . . . : (Բայց եւ այնպէս Սէր անուն հանդիսին մէջի յօդուածը հրատարակողէն՝ եւ Չամուրճեան Յովհաննէսէն՝ առանց ապացուցի եզած կը համարուի՝ մէջի գրուած տեղեկութիւններն ու պատմութիւնները , չի տեսնելով կամ չի տեսնելու զարնելով՝ գրքին մէջի նշանակուած անձանց անունները , որոնք որ մի առ մի նշանակեր էմք , ՚նակից , եւ որ ազբիւրներէն առած ըլլալնիս), եւ ոչ թէ միայն մեկ անձի մը խորհրդով կամ ոխակալ անձանց ունկն դնելով՝ մեր պատմութիւնը նկարագրած էմք . ինչպէս կերեւակայէ Չամուրճեանը . . . եւ անկից հետեւութիւն մըն ալ հանելով՝ հեղինակին կողմէն քուական խարդախել կըսեմք, կըսէ . Եւ այս խարդախութեանս պատճառն ալ զիտեմք ըսելով կսկըսի երազ մը պատմել , եւ անով գրգռել Բարձրագոյն Գուռը բանտարկութեամբ , թէ ինչպէս մէկ մատնիչ մը չի գտնուելով մատնութիւն մը չըրաւ, որով մենք ու մեր գրութիւնը չի դատապարտեցնաւ . . . անն գլխաւորապէս ցաւ քաշելն ու ճիգ թափելով սիրտը ճաթիւն այս տեղն է Չամուրճեան Տէրոյէնցին . . . : Քանզի կըսէ :

« Երբ այս գիրքը հեղինակը տպագրութեան տուաւ , Բ . Գուռը Ազգին մէջ մտած երկպա-

ուսկութիւնը խաղաղելու ջանքով խստիւ պատ-
ուէր հանեց որ ազգին մէկ կամ միւս կողման
գրգռութիւն տալով երկպառակութիւն տածող (ու-
րոնց գլուխը եւ պատճառը ինք ըլլալը մոռցեր է . . .)
Յայտարարութիւն կամ տետրակ կամ գիրք կամ լը-
րագրաց մէջ յօդուած չի գրուի», եւ այլն ըսելով
բանասարկութիւն մը ընել կը փափաքի, որն որ իրեն
մէջ բերած փաստը՝ նոյն միջոցին եղած Յայտարա-
րութիւններուն համար էր, եւ ոչ թէ Ազգային պատ-
մութեան վերաբերեալ գրքի մը համար, եւ որն
որ շատ առաջները գրոց Քննիչը տեսեր ու հրամանն
ալ տուած էր տպագրուելուն, եւ որն որ յիշեալ
արգելքը չեղած՝ մեր գիրքը 45 օրի չափ յառաջ ե-
րեւան ելած էր . . . : Բայց միայն այսքանով չի բա-
ւականանար բանասարկութեան հեղինակ Չամուրճին .
այլ տեսնենք թէ ինչ կըսէ, եւ կամ լաւ եւս ինչ
թոյն կը թափէ, ու կը տարածէ իր կծու գրչովը :

«Եւ թէպէտ գրքին Յառաջաբանութեանը (Ազ-
գին համար է ըսածը . . .) վերջը գրուած 4861ին
Հոկտեմբեր 46 թուականը գինքը կը դատապարտէր .
վասն զի Բ. Դրան հանած հրամանն ալ ճիշդ այն օ-
րերն էր . բայց մարդ հոգ չըբաւ ասոր անհնազան-
դութիւնը այն ժամանակը Կառավարութեան իմա-
ցընելու՝ որ մասնութիւն ըրած չըլլայ» . բայց հի-
մայ ինքը միայն այս անարգ պաշտօնը վրան առած
է, որ հոգեկ խալըսի՝ որով իր շահն ալ չի կորսըն-
ցընէ . . . ասանկ չէ մի, ո՞վ Չամուրճի . . . ուրեմն
վարձքդ կատար ո՞վ նոր Յուզն . . . գնա . մի ուշա-
նար, ժամ առաջ գնա, որ երեսուն արծաթը ուրիշ-
ներուն յափշտակել չի տաս . . . : Բայց եւ այնպէս այս

խնդիրը մէջ բերող եւ մատնութեան հետեւող կամ
բաղձացող Չամուրճեան Յովնանէսը նոյն միջոցին
Բ. Գրան անհնազանդ եւ անհաւատարիմ գտնուե-
լով « վարագոյրը բացուեցաւ » ըսելով մէկ չարա-
զրգիւ Յայտարարութիւն մը դուրս հանեց՝ իր ե-
րեսին վարագոյրը բանալով* . եւ այժմ ալ ելեր ո-
խակայութեամբ մը իր ներքին թոյնը թափել կը
նայի մեր վրայ՝ գրքին մէջի նշանակուած անուրա-
նալի ճշմարտութիւններէն պատկառելով . եւ գիրքը
քննելու պատրուակաւ՝ իբր պատեհ առիթ մը գտա-
ծի պէս՝ եթէ հնար է նէ՝ մեզի ալ Բ. Գրան կուզէ
մատնել բանսարկութեամբ . իբր խռովարարու զըր-
պարտիչ անձ մը . . . եւ կամ կուզէ որ՝ վերստին նոր
'ի նորոյ երկպառակութիւն մ'ալ տարածուի ազգիս

*Թէպէտև յիշեալ յայտարարութիւնը Նոյեմբեր 12 ին
ցրուեց՝ բայց խարդախութեամբ մը թուականը Սեպտեմբեր 28
հրատարակեց, իբր թէ յառաջուց տպուած ցուցնել ուզելով, ընդ
հակառակն միւսնոյն օրուան Քրիստոսի լրագրին մէջէն հա-
նած տեղեկութիւն ալ կայ վերջոյն մէջ: Եւ այս ալ այնու
դիտաւորութեամբ կամ լա՛ւ ևս խարդախութեամբ մը ըրաւ, որ
Բ. Գրան հանած հրամանին դէմ կամ ինքը անհնազանդ չի գըտ-
նուած համարուի, և կամ հասարակութեան կողմէն եթէ այն դը-
ժոխային վերջոյն դէմ բան մը գրող ըլլայ՝ իսկոյն կամ ինքը
մատնութիւն մը ընէ Գրան, եւ կամ Գոռնէն իմանալով՝ դատա-
պարտեն զնոյն անձը. և ահա այս օրինակ Ժեզեմի ղնէ Չամուր-
ճի Պատուելին . . . : Նաև յիշեալ գրոյն վերջը Սահմանադրու-
նը « Գործերէն զորոնք չեն գործուի և չեն ընելու . բայց կաւե-
տեմբ իրեն՝ որ Սահմանադրութիւնը այսօր ՅԱՐՈՒԹԻՒՆ Ա-
ՌԱՒ մեր գլխաւոր կայսեր շնորհիւր. ուստի կը մնայ այժմ ը-
սել, որ իր գործերէն չեն ընելու իր ղնէ ընելու բերանը գոցե
այսուհետև . . . »

մեջ՝ որ ինքն ալ խարազանը (զրիչը) ձեռքն առնելով՝ չարագրգիռ յօղուածներ դուրս հանելով շահի, եւ ուզածին պէս ալ՝ կամ Ազգը Բ. Դրան մատնէ, կամ դժոխոց ու գեհենի որդի կացուցանէ իր վարդապետական վճռովը, եւ կամ եթէ հնար է՝ բոլորովին կործանէ տարածայնութեամբ, որ ինքն ալ հոգեմ խալըսելով՝ փառաւորի ու հանգստանայ . . .

ասանկ չէ մի ո՞վ Տրոյէնց . . . եւ ահա կամ ըրերես, կամ զուրցեր ես, եւ կամ խորհեր ես ատանկ մէկ անօրէնութիւն մը ընելու, եւ այսօր ալ չի կրնար կուլ տալովդ երկու տարիէն վերջը բերնէդ ու գըրչէդ դուրս կը փսխես. հիմայ ո՞վ է վարագոյրը բացող եւ երեսին դիմակը վար առնող անխիղճ անհաւատը, որ դուն երբեմն յանիրաւի բերանդ ծըռմըսկելով կը գոչէիր՝ անմեղ ժողովրդեան դէմ յայտարարութիւն հանելով չի գիտնալով որ քու վարագոյրդ ո՛չ թէ հիմայ, այլ ինը տարիէ՛ ՚ի վեր բացուեցաւ, եւ երեսիդ դիմակն ալ վար առնուեցաւ. երբ որ 1855 թուականին Զօհալիդ մէջ սկսար մուար գաղափարներդ, եւ հերետիկոսական դրութիւններըդ, ու յիմաք շաղփաղփութիւններդ դուրս տալ . . .

այլ ո՞վ է որ այսուհետեւ քեզի հաւատք ընծայէ, եւ իբր հաւատարիմ եւ անկեղծ Հայ ճանաչէ զքեզ . . . :

Արդ՝ եթէ Աստուած կը ճանաչես նէ . . . կերդմեցուցանեմ զքեզ յԱստուած կենդանի, եւ կաղաչեմ քեզի, զնա բանդ զնա, մեր դուռը ափ մ'առներ. քանզի մեր դուռները գոց են քեզի համար. ըստ որում բաւական եւ բաւականէն աւելի է քու ձեռքէդ քաշածներնիս . . . :

Հինգերորդ, Ադդին* վերջը՝ « ոչ միայն մէջը եղող անձանցմէ տեղեկանալով գրեցի, այլ եւ ես ինքնս 'ի մանկութենէ անտի տեսանելով նկարագրեցի», ըսած խօսքէս՝ հետեւութիւն մը հասնելով կը հեղինարանէ, ըսելով թէ՛ « Ասով յայտնի կերեւի որ այս Թ. Միհրդատեանցը 'ի մանկութենէ անտի Սուրբ Երուսաղէմի աղետքը նոյն խկ ինքը տեսեր է»։ Եւ ապա կըսէ, « իր գրածը միայն մէջը եղող անձանցմէ (կամ աւելի ճիշդ խօսելով անձ մը) տեղեկանալով է. եւ այս անձս է որ 'ի մանկութենէ հետէ Սուրբ Երուսաղէմ էր, Չիլինկիբեան Յակոբոս Վարդապետը, որուն շարադրուելուն աշխատող եւ գործակից ըլլալը ծանուցանելու համար բաւական էր որ իրեն միայն պատշաճող եւ Միհրդատեանցին բարորակին չի յարմարելու նշան մը գտնուէր մէջը, երբ այս ալ գտանք եւ ցըցուցինք . . . » Ասոր համար վերը ըսինք թէ գիրքը Թադէոս Միհրդատին իբրեւ միակ յօրինուած ու միակ իր անունովը հրատարակուած է, եւ այլն»։

Այս դարմանալի փաստաբանին, կամ լաւ եւս դարձուս մէջ երեւան ելնող հայ Լանսպերկ** գու-

* Այս Աւր ըսածիս ալ՝ ինքը Յ————-ի թարգմանած կամ Յ————-ի հասկցած է, գուցէ իր բառարանը այնպէս սորվեցուցած ըլլայ . . . ուստի պէտք է որ հետաքրքիր անձինք մեր գիրքը քննած ժամանակնին՝ Աւրի մէջ բնագէտ անոր զրուցած խօսքերը և ոչ Յառաջարանին մէջը:

** Լանսպերկ Աւստրիացին, որ կտաւագործ (Չուլհայ) մըն էր, և իր արհեստը ձգելով ——-ի—-ի—-ի կարգը մտաւ և ընկերացաւ անոնց հետ. (ինչպէս որ մեր Հայ անունով Յովհաննէս Չամբարձին ալ իր հօրենական արհեստը ձգելով Ժեզ—ի—ի կար-

չակին (Ֆալճիին) կըսեմք թէ՛ մեր 'ի մանկուբե-
նէ անտի տեսանելով ըսածնիս՝ գուցէ այս մասին
ինքն ալ կրնայ վկայել, եթէ քիչ մը մտաբերելու
ըլլայ 1854 եւ 1855 թուականները. երբ որ ինքը
Պօլսոյ Երուսաղէմատունը երթեւեկութիւն ընելով
Փօթիչանցի տիրացու Գարրիէլին Ֆրանսերէն կամ
խտալերէն գասատուութիւն կրնէր նէ՛ կարծեմ թէ
մեզ հոն կը տեսնէր, որ քեռիներնուս (Մահաբի
Մկրտչին) քովն էինք միշտ՝ 1829 թուականէ 'ի
վեր. եւ այս թուականին 14 տարեկան էինք. եւ
իշեալ թուականէն մինչեւ 1844 թուականը որ
Քեռիս վախճանած տարին է, միշտ հոն երթեւե-
կութիւն ընելով եւ մեր 'ի բնէ անտի հետաքրքիր
ըլլալովը եղած անցքերուն ուշադրութիւն կրնէինք,
ինչպէս որ յականէ յանուանէ գրքին մէջն ալ նշա-
նակած եմք .

Բայց մէջը եղող անճանց, այսինքն Միաբանից
գալով, կըսեմք թէ՛ ոչ թէ միայն երբեմն երբեմն
Աթոռէն եկող Միաբաններէն տեղեկութիւն ստա-
ցած եմք, այլ եւ մենք եւս Ս. Երուսաղէմ անձամբ
չըջաղայելով 1858 թուին, եւ հոն անգի անցքե-
րուն վրայօք ալ արժանահաւաս Միաբաններէն տե-
ղեկանալով եւ գիշեր ցերեկ աշխատութիւն չի խը-
նայելով՝ ու գրիչը ձեռուընուս չի ձգելով* նոյն

գը մտաւ քանի մը տարիէ 'ի վեր . . .) և սուտ ու փուտ անճա-
նի գուշակութիւններ ընելով՝ պարզամիտները երբեմն կը վեր-
դովէր և երբեմն կը խաբէր՝ Չամուրճեանին նման՝ ու անով կապ-
րէր . . . :

* Ինչպէս որ ակնատես՝ կենդանի վկայ կրնայ լինիլ՝ Չամուր-

նկարագիրը հանեցինք, եւ ոչ թէ 1860 թուին Պօլիս գտնուող մեկ անձե մը, ինչպէս ինք Չամուր-ճեանը կըսէ, այսինքն Չիլինկիրեան Յակոբոս վարդապետէն իբր թէ հաւաքած ըլլանք մեր տեղեկութիւնները, կամ մինակ անոր գործակցութեամբը ու աշխատութեամբը գրած ըլլանք. որուն գէմկը բողոքեմ եւ բնաւ չեմ ընդունիր. վասնորոյ մեր բընարանին մէջի ակնարկած Երանելոյն խօսքը կը կրկնեմք այս տեղ ըսելով. « Ես զայսպիսի քրտամբ զմեծ վաստակս, եւ բազում աշխատութեամբ զճախըս՝ վատ վաճառականութեամբ ընդ թեթեւ ընչի տալ ոչ կարեմ » . այսինքն՝ իմ այնչափ աշխատութիւնս եւ պատիւս այդպիսի բանդագուշանքներու չեմ կրնար զոհել . . . : Այո՛ ինչպէս շատ միաբաններէն՝ նմանապէս ալ յիշեալ Չիլինկիրեան վարդապետէն նիւթեր տեղեկութիւններ հաւաքած եմք, որոնց համար ՚ի սրտէ շնորհակալութիւննիս կը յայտնեմք, եւ իր պարսաւած վարդապետին զալով ալ կըսեմք, թէ՛ թէպէտեւ յիշեալ Չիլինկիրեանը՝ միւսներէն աւելի մեզի տեղեկութիւններ տուաւ, այսու ամենայնիւ շիտակը խօսելով մենք այնչափ վստահութիւն չի ցըցուցինք. բայց յետոյ շատ ըստորջացանք յիշեալ Ազգասէր Վարդապետին մեզի հաղորդած տեղեկութիւններուն ամենուն ալ ականջ չի դնելով մեր հրատարակած գրքին մէջ չի նշանակելնուս համար. քանզի այնպիսի տեղեկութիւններ կար՝ որ մեզ անհաւատալի կը թուէր. ըստ ու-

Ճիին մտերիմ բարեկամ Տ. Գեորգ քահանայն Մայր Եկեղեցւոյ,
եթէ բանին ստուգութեանը վկայ լինիլ ուզէ նէ . . . :

բում աթոռին մերձ եւ անոր կալուածը ու Ազգիս իրաւունքներն էր . ուստի Չամուրճեանին սաէպըստէպ յիշած Սրբազան* Պատրիարքը չի տեսած կամ չի լսած չէր կրնար ըլլալ . որոնցմէ մէկը որ մօտերըս Երուսաղիմայ աթոռէն առժամանակեայ կերպիւ փոխանորդ եկող Արժանապատիւ Սիմոն Վարդապետէն ալ ստուգելով՝ ստիպուեցանք հաւատալ . եւ ան ցաւօք սրտի կը հաղորդեմք զանի ալ 'ի տեղեկութիւն վշտալի ազգասիրաց . թող ասիալ գըրքին մէջ հաշուած 50 հատ աղէտներուն ու կորուստներուն վրայ զարնելով՝ 51 հաշուեն այսուհետեւ , եւ ան ան այն է :

Սուրբ Սիմոնին հարաւային արեւելեան կողմը՝ ընդարձակ պարտէզ մը ունիմք 'ի նախնեաց անտի հանդերձ ձիթենիներով , եւ բաւական ժամանակէ 'ի վեր անխնամ եւ իբր անտերունջ մնալով քաղաքացի հասարակ տաճիկ մը տիրապետած է , ու մէջի ձիթենիներն ալ կը վայելէ , որուն հաստատագրըն** (հիւճէթը) Աթոռին թարգման եղող յիշեալ

* Թէ այս և թէ Աւետիքի ածականին յարգն ալ քանի մը տարիէ այնչափ ստըլի մը ըլլալով աղտոտեցաւ , որ եթէ այդ պատուանուններուն արժանաւոր անձինք գտնուելու որ ըլլան՝ չի գիտեմք թէ այսուհետեւ ի՞նչ անուն պիտի տամք . . . :

** Այս «էօէրօն» ալ՝ յիշեալ Սիմոն վարդապետը իր ձեռօքը տուեր է Յակոբոս վարդապետին՝ Պատրիարքին գանձատունէն հանելով . ինչպէս որ ինքը վկայեց : Որովհետեւ յիշեալ վարդապետը հանգուցեալ Երուսաղիմայ Պատրիարքին փոքրաւորն էր : (Յաւելուած) Բայց երբոր այս տեղեկութիւնը հրատարակեցինք Մեզմէ՛ 204 թուոյն միջոցաւ , կը լսեմք թէ՛ իր Մեծաւորը յանցաւոր շերեցնելու նպատակաւ՝ բերանը փո-

Չիլինկիրեան Յակոբոս վարդապետը գտեր ու ետ առնելու ջանք ըրեր է 1854 թուին . բայց Պատրիարքը դժկամակելով հոգ չէ ըրեր, եւ այսօր խեղճ Արարացիին ձեռքը անվաւեր սեճեալ մի ալ չի կայ, որով գոնէ տիրապետելու փոքր ինչ արտօնութիւն ունեցած ըլլայ . նա մանաւանդ յիշեալ անձը երեւելի անձանց մէկն ալ չէ՝ որ Պատրիարքը պատճառ

իւր է, ըսելով թէ՛ այն կորուստը 100 տարիէ 'ի վերեղած է, Յովհաննէս Պատրիարքը ի՞նչ յանցանք ունի այդ մասին, ինչպէս որ այս խօսքը մեզի ալ ըսաւ հրատարակելէս վերջը կրսեմք այդ վարդապետին որ 1840 թուականէն 'ի վերէ այդ յափշտակութիւնը, և ոչ թէ 100 տարիէ . ըստ որում յիշեալ թուոյն միջոցներուն՝ Ս . Համբարձման վանքը որ փուցին նէ՛ Չամուրճեանին կուսակիցները, այսինքն Լատինք . յայնժամ համարձակութիւն առնելով Տէր-Տէր, այս տեղն ալ կերպով մը իրենց իւրացնել ուզեցին՝ Միօնին մերձ ըլլալուն համար . և որովհետեւ յիշեալ աղէտալի եղեռնագործութեան վրայօք Միաբանութիւնը յուսահատեր և Չաքարիա Սրբազանը իր կսկիծէն բարձի թողի ըրած էր զայն՝ նոր 'ի նորոյ երկպառակութիւն մըն ալ չի ծնանելու մտօք . վասնորոյ յիշեալ Ֆէլլահներուն մեկուն արտօնութիւն տուած էր Չաքարիա Պատրիարքը՝ մէջի եղած ձիթենիները մշակելու համար, այնու գիտաւորութեամբ որ ուրիշները չի յափշտակեն զանի և ինքը իբր տէրը համարուելով խնամէ նոյն պարտէզը . բայց երբոր յիշեալ Սրբազանը 1846 ին վախճանեցաւ նէ, այն տեղն ալ երեսի վրայ կեցաւ նոյն Արարացիին ձեռքը . բայց երբ ժամանակ որ 1854 թուին յանդգնեցաւ նէ յիշեալ Արարացին ծախելու նոյն սեպհականութիւնը Ազգիս, պէտք էր որ բոլորովին անոր ձեռքէն առնէր Յովհաննէս Պատրիարքը . բայց հոգ չբրաւ կրսեն Միաբանք, և գուցէ յիշեալ Միմէօն վարդապետն ալ բերնով չէ նէ՛ գոնէ իր ներքին մարտովը կը վկայէ այսպէս ըլլալուն:

բերէր ըսելով թէ անոր հետ հմլ պիտի գլուխ ելնէ, եւ այլն : Այլ ինչպէս ըսինք չպիտոյ անձին մէկն է, եւ հաւատարմութիւն բոլորովին մնացած չէ . քանզի 1855 թուին 25000 զուրուշի կը ծախէր կոր Յոյներուն՝ յիշեալ Արարացին, բայց իմանալով յիշեալ թարգման վարդապետը՝ Յունաց վանքին իմաց տուեր է՝ թէ Հայոց վանքին սեպհական ստացուածքն է, ու հեօձեքը իրենց քօլն է, եւ այլն : Արդ՝ այսքան եղելութենէն ետքը պէտք չէր մի Պատրիարքին, որ այն պատուական տեղոյն պաշտպանութիւն ընելով վանքին ստացուած ժառանգութիւնը ձեռք բերէր, ոչ . . . այլ « ամենեւին հոգ չըրաւ » կըսէ յիշեալ Զիլինկիրեան վարդապետը, ու մինչեւ ցարդ այնպէս երեսի վրայ կեցած է . . . : Ասոր ինչ կը հրամանս Պատուելի Զամուրճեան . . . երանի թէ բոլոր նկարագրածներուս գոնէ կէսը անդամ սուտ եւ անտեղի ըլլար, եւ ես ալ թող սեւ երես ելլայի . բայց ամեն մէկ պատմուածներուն դժբաղդարար ստուգութիւնը երեւան ելնելով եւ անոնց թիւերն ալ քի ՊԱԿՍԵԼԷՆ դատ ԿԱԻԵԼՆԱՅ ԿՈՐ . . . ոչ, ըստ մարգարէին « դիր զցաւս 'ի վերայ ցաւոց » . նվսիրտըդ ճշմարիտ ազգասիրի . . . :

Վեցերորդ . « դրքին նպատակն է հանգուցեալ Տ. Յովհաննէս Արրազան Պատրիարքին յիշատակը ազգին ատելի ընել իբրեւ Ս. Երուսաղէմի աթոռոյն վնասակար », կըսէ : Ասոր համար կըսեմք թէ՛ մարդ մը իր գործքերովը կրնայ կամ արդարանալ եւ կամ պարտաւորիլ . ուստի եթէ բարի եւ եթէ չար՝ ինչ որ յիշատակ ունի նէ Աթոռոյն՝ ամենքն ալ աչք ունին կը տեսնեն՝ ու ականջ ունին կը լսեն . ուրեմն

չատ կըլլայ ըսել, որ ոչ մեր ատենի երեւցնելովը կրնայ պարտաւորիլ, եւ ոչ ալ Չամուրճեանին գովելի երեւցնելովը կամ շողոքորթութեամբ գովելովը հանգուցեալ Յովհաննէս Պատրիարքը կրնայ արդարանալ . այլ եղածները մենք նկարագրէր եմք ժամանակին զրքին մէջ . եւ եթէ զինքը չիճանչող ու չիտեսող անձինք կան նէ՝ կրնան անոր վրայօք նկարագրուած գիրքը ընթեռնելով դատել՝ նորա ունեցած յիշատակները . . . Այլ եւ մենք բնաւ զինքը ատենի ընելու նպատակ ու դիտաւորութիւն մը չունէինք ու չունինք ալ . ինչպէս որ քիչ մը ետքը Չամուրճեանը անշուշտ մէկ մաքրակրօն ու զիտնական եւ ճշմարտախօս անձէ մը իմացած պիտի ըլլայ . (չեա հաւատար՛նէ՛ տեա Հայաստան լրագրին մէջ թիւ 49) . որպէս թէ մեր Երուսաղէմէն ճամբուիլը առարկայ բերելով՝ որով մեզի հանգուցեալ Պատրիարքին հետ իբր թէ ոխ մը ունեցած կը ձեւացնէ . բայց ինչ բանի համար ու ինչպէս ճամբուելնիս չի՛զուրցեր . . . ինչպէս եւ այս խօսքը Չիլինկիրեան վարդապետին համար ալ կըսէ :

Արդ՝ Չիլինկիրեան վարդապետը եթէ հանգուցելոյն հետ ոխակալութիւն մը ունէր՛նէ՛ ինքը կըրնայ այն կամ ոչ ըսել, քանի որ ինքը կենդանի է . այլ մեզի ըրած զրպարտութեանը գալով՝ կըսեմք թէ՛ եթէ բանին էութիւնը պատմելու որ ըլլանք, յայնժամ ոչ միայն իրեն (Չամուրճեանին) եւ ոչ միայն Տ. Գէորգին, այլ առաւել եւս ստէպ ստէպ պաշտպանած Սրբազան Պատրիարքին փառքը եւ պատիւը կառաւելնայ . . . բայց մեր քրիստոնէական կրօնին չի վայելը՝ որ Չամուրճեանի պէս դա-

ուամեալ՝ մանաւանդ եւ աշխարհէս ալ հեռանալով
 յաւիտենականութեան մէջ մտնող հանգուցելոյ մը
 համար բան խօսինք . որով ճշմարտութիւնը երեւան
 ելնելով՝ գուցէ թէ յայնժամ մեր փառքը առաւել-
 նայ . սակայն մենք փափաքող չենք այսպիսի իրաց
 մէջ փառք ունենալու . այլ մենք փառքն ու սպա-
 տիւր երկնից կոպասեմք եւ ոչ 'ի մարդկանէ . . .
 Եւ ատանկ փառքերը ու մնապարծութիւնները կամ
 լաւ եւս ինքնապարծութիւնները Չամուրճեանին
 տրուած է , որ ոչ միայն փարիսեցիութեամբ « ոչ եմ
 զայլս 'ի մարդկանէ » ըսելով յարածամ մէկուն մէ-
 կալին հաւատոյն քննութեանը ձեռք զարնելով կը
 պարսաւէ , միմիայն ինքըզինքը ուղղափառ, ձեւա-
 ցընելով , այլ եւ թէ ինքըզինքը եւ թէ իր գրու-
 թիւնը կը գովէ . գուցէ ինքն ալ համոզուած ըլլա-
 լով որ իր անբարի կենցաղաւարութեամբը հասա-
 ըստութեանէն արհամարհած է . վասնորոյ ինքը մի-
 այն իրեն համար կաշխատի՝ որ համարում ստանայ
 խեղճը , ուչ չի գնելով այն հոգեչունչ խրատներուն
 որ կըսէ . « վկայութիւն անձին՝ չէ հաւատարիմ » ,
 եւ թէ՛ « այլք գովեսցեն զքեզ՝ զի մի բերան քո » :
 Եւ եթէ այս զուրցածներս՝ չափազանց թուի , ու-
 բեմն հետաքրքիրները կուզարկեմք Հայաստան լը-
 բագրոյն , որ անոր 1850 Փետրուար 6 առաջին թը-
 ւոյն՝ լրագրին վրայօք ըրած յայտարարութեանը
 մէջ կարդան , ուր այսպէս կը գրէ իրեն համար ,
 թէ՛ « Գերագոյն ժողովը յանձնեց Պրուսացի Պատ-
 ուելի պարոն Յովհաննէսին » . նաեւ նոյն լրագրին
 9 թուոյն վերջը զրած Համազգեսաց ընկերութեան
 վիճակահանութեանը վրայօք ըրած ծանուցումին

սկիզբը՝ իր լրագիրը պարծենկոտութեամբ գովելով մը կը գրէ այսպէս . « պատուական լրագրոյս հինգերորդ թերթովը , եւայլն » : Եւ ահա տեսանք , որ Չամուրճին ոչ միայն ինքըզինքը կը գովէ , այլ եւ իր գրութիւնն ալ . որով իրեն ինչ աստիճան անձնահաճ եւ սնափառ՝ չըսեմ զէվզէկ ըլլալն ալ կը յայտնէ . . . եւ որով կը կարծէ թէ՛ մենք ալ իրեն նման փառք եւ պարծանք պահանջող ենք . բայց կը սխալի Պատուելին : Այլ ինչպէս ըսինք , եթէ իրեն կարծածին եւ կամ լսածին հակառակը պատմելու որ ըլլանք՝ յայնժամ գուցէ ամչնայ ինքը , եւ իրեն այդ անհիմն լուրը հաղորդողն ալ , այսու ամենայնիւ եթէ պատմելու ալ որ ըլլանք՝ թէ՛ իրեն եւ թէ՛ ընթերցողաց ալ օգուտ մը չըլլար : Այլ միայն այսքան մը կըսեմք , թէ մինչեւ ցայս վայր տեսնուած երեւակայական տեսիլներուն ու դառանցքներուն եւ գուշակութիւններուն նման են այս կարծիքն ալ Չամուրճեանին : Եւ գուցէ իրեն անտեղի գրոյցները նշաւակելուս՝ ու իրեն ինչ բնաւորութեան տէր ըլլալը հասարակութեան ծանուցանելուս համար , այսուհետեւ ըսէ թէ՛ Միհրդատեանցը մէզի նետ ոխ ու ատելութիւն մը ունի . . . : Բայց ոչ իրեն հետ եւ ոչ ալ հանգուցեալ Պատրիարքին հետ եւ ոչ ալ ուրիշ նշանակած անձանցս հետ քէն՝ ոխ՝ ու վրեժ մը ունեինք կամ ունինք առնել . այլ սոսկ եղելութիւնները ուզեցինք յայտնել : Եւ քանզի ինչպէս որ ինքը « ասոնց վրայ մենք խօսք երկնցունելու միտք չունինք » ըսելով խորամանկութեամբ վրան ծածկելով փախուստ ալ տուած է , որ իրեն Պատրիարքին պատիւը չառաւելնայ , վասնորոյ մենք

ալ հոս ջեմք ուգեր երկարցնել. քանզի մենք երկրնցնելու խօսքեր շատ ունիմք իրեն ասկից ետքը, եթէ հասկցընելու բաղդաւորութիւնը պիտի ունենամք նէ . . . :

Եթե՛ն երորդ. « Հանգուցելոյն վրայ յանցանք կը գնէ (կըսէ) . Նախ՝ չի կրնալ ընելու բաները չընելը . Բ. իր ունեցած իշխանութենէն եւ իրաւարանութենէն վեր բան չընելը . Գ. անհիմն պահանջմունքներու չելլելը : Ասոնք հոս համառօտ մը կը ցուցընեմք » ըսելով, կսկըսի երեք հատ օրինակ բերելով գրքին մէջ ի նկարագրուած տեղեկութիւնները՝ իբր անտեղի ու կասկածելի ցուցնել՝ անզգուշութեամբ . որով նպատակին ալ չի կրնար հասնիլ Չամուրճեանը : Անզգուշութեամբ ըսինք . քանզի գոնէ ինքը ժամանակաւ հրատարակած առածին ալ մտադիր չըլար, որ կըսէր . « Անզգուշութեամբ եղած գործը՝ ակնկալութիւն ըրած նպատակներնուս բոլորովին հակառակը կը ներգործէ » . (Հայաստան լըրագիր թիւ 59) : Եթէ այս պատուէրը ինքը բռնելու որ ըլլար՝ շատ իրաց մէջ անտեղի տարաձայնութեանց պատճառ չէր ըլլար, եւ անզգուշութեամբ գործելով եթէ նպատակ մ'ալ ունէր նէ՝ բոլորովին իրեն դէմ հակառակը չէր ելներ ամեն իրաց մէջ, ինչպէս եւ այս վաստաբանական դատաքննութեանս մէջ ալ, որ պիտի տեսնուի : Եւ անա իմանալ պէտք է, որ այժմ կսկըսի գիրքը քննելու ըզելով մէջէն իբր թէ անտեղի խնդիրները նշաւակելու ձեռք զարնել՝ երկու տարիէն ետքը, կամ լաւ եւս երկու տարիէ ՚ի վեր աշխատելէն ետքը, միանգամայն միւս հարիւրաւոր գրուածներուն դէմ բան մը

խօսելու անպատասխանի ըլլալով՝ եւ ակնկալութիւն
 Երած նպատակին՝ բոլորովին հակառակը ներգոր-
 ծելով» . այլ միայն « գրեյիքնիս գրքին ամբողջ հեր-
 քումը ջե » ըսելով կանցնի :

Եւ թէպէտ մինչեւ ցայս վայր թէ մեր եւ թէ
 Չիլինկիրեան Յակոբոս վարդապետին անձնականին
 դպչելու կծու ու անվայել խօսքերուն հետ՝ շատ մըն
 ալ բանդագուշանքներով լեցուցեր էր իր պարբե-
 րականը, որ իր Երեւակը ընթերցողներ (եթէ կան . . .)
 հասկնան թէ ինչ գաղտփարի եւ ինչ ընթացքի տէր
 մարդիկ եմք , ու մեր նպատակը ինչ է : Բայց կար-
 ծեմ թէ՛ մենք ալ իրեն գրած բանդագուշանքները
 լուծելով եւ իր մեզի դէմ խօսածներուն ալ փոխա-
 րէնը թէեւ համառօտ՝ բայց կարծեմ քիչ մը կրցինք
 հասկցունել իրեն՝ թէ ինչ գաղտփարի տէր է եւ ինչ
 ընթացքի կը ծառայէ . մնացածն ալ վարերը պիտի
 հասկցընեմք իրեն՝ եթէ վրան ասնէ նէ . . . : Ուստի
 կը մնայ քիչ մ'ալ գրքին մէջի նկարագրուածներուն
 վրայօք ըրած անտեղի ու քաշկռտողական դատա-
 քննութեանցը համար խօսիլ , որն որ ինքը ասկից
 ետքը կսկըսի վերը յիշած երեք առարկային վրա-
 յօք՝ գրքին մէջի պատմուածներէն երեք օրինակ
 բերելով՝ զանոնք իբր թէ հերքել , հեռուաբար միւս
 աղէտալի նանցքերը ու նրեւելի կորուսաները ազ-
 գիս՝ իբր լռելեայն ընդունելով . . . : Բայց յառաջ սա
 կուզեմք իմացնել արդոյ հասարակութեան, որ մէջ
 բերած առարկաներուն երրորդին վրայ է գլխաւո-
 րապէս ճիգ թափելը Չամուրճեանին , որն որ իրեն
 ներքին ջիղերուն դպած կէտն է , եւ որն որ իրեն
 մեծ ցար ալ եղած է . . . մեզի անանկ կը թուի՝ թէ

միայն անօր համար գրիչը ձեռք առնելով այս դատաքննութեան աստղարկչը մտած է, թէ՛պէտ եւ անըզդու շուքեամբ . այն ալ որսւ թեւադրութեամբը կամ ինչ նպատակաւ ըլլալը՝ ընթերցողաց շատերուն ծանօթ է . . . ինչ եւ իցէ մենք հոն ալ պիտի տեսնուիմք իրեն հետ . հիմայ կը մնայ մեզի իր նշմարած ու հերքած խնդիրներուն քննութիւնը ընել ու տեսնել թէ՛ ինչ են եւ ինչ արժէք ունին . . . :

« Առաջին՝ ջի կրցած բաները ջընելը յանցանք է եղեր » Պատրիարքին ըսելով թափօր լերան վրայի ունեցած վանքերնուս համար գրածներնիս՝ կուզէ կերպով մը հերքել , եւ անանկ մըն ալ կը կարծէ՝ իբր թէ՛ « նոյն ստացուածոց այսօր տէր կենացու ըլլանք նե՛ կարծեմ մեր պահանջքը արդարացրնելու համար հաստատագիր (նիւճեք կամ սեւեւ) մը պիտի ջի կրնամք հանել » կըսէ : Ընդհակառակն յիշեալ սրբազան Տեղին համար՝ « հինգերորդ դարէն ՚ի վեր վանք ունենալնիս գիտեմք . մեր Ս. Նղիշէ վարդապետն ալ հոն գացած է, եւ տեղւոյն ու վանականներուն նկարագրութիւնը կընէ » , կըսէ : Բայց ջի մտաբերեր միանգամայն , թէ՛ մենք՝ « հինգերորդ դարէն ՚ի վեր վանք որ ունեինք, եւ այսօր Ռուսերը՛ իրենց ջունեցած , կամ լւու եւս երազնուն մէջ անգամ ջի տեսած յիշեալ սրբազան վայրը՛ կրցան տիրապետել ու ձեռք բերել նէ՛ արդեօք մենք ինչպէս ջէինք կրնար վերստին ստանալ՝ ու ձեռք բերել , եթէ ջանք ըլլուէր . . . ինչպէս ասօր համար գրքին մէջն ալ յիշած եմ , թէ՛ Ռուսաց հետ ընկերանալով՛ ինչպէս անիկայ տիրապետեց նե՛ կերպով մը մենք ալ մեր իրաւունքք

մէջ բերելով անոր հետ կրնայինք տիրապետել՝ մեր վաղեմի իրաւանցը եւ ստացուածոցը վերայ :

Բայց այս զուրցածներս ալ կը ծաղրէ եւ ուրիշ գոյներու կը ներկէ խնդիրը՝ տիրապետել բայր օտար իմաստներու տանելով՝ հնարագէտ Չամուրճեանը* . եւ ապա իր խելքովը շատ մը մտածելով՝ մէկ տեղէն միւս տեղը ցատկելու պէս՝ խկոյն խնդիրը կայլայլէ՝ սա՛ . զօրաւոր փաստովը, « աշխարհակալութիւնը ստացուածոյ սեպնականութիւնը կարե եւ յաղթողի իրաւունք մէջ կը բերէ » կըսէ . ուստի ըսել կուզէ թէ՛ որքան որ ստացուածքի տէր ալ եմք նէ՛ բայց այսօր Ռուսք՝ աշխարհակալութեամբ Պաղեստինու եւ Երուսաղիմայ վրայ պատերազմ բանալով ու բանակներ հանելով՝ նուաճեր, ու յաղթանակ կանգներ են , որոյ վասն « յաղթողի իրաւունք մէջ եկեր է » .

* Որն որ արդէն գուշակած ըլլալով՝ ۲۱-۲۲-۲۳ Ազդին վերջը նշանակեր եմ՝, ըսելով թէ՛ « մէջէն քանի մը բառ առնելով վեր վար պիտի քաշկատեն . . . որպէս զի (եթէ հնար է) կարենան իրենց վրայէն արատը բառնալ » . և ահա անոնցմէ մէկը էր վրայ կը ճշգրտէ այս մեր գուշակութիւնը . « ۱-۲-۳-۴-۵-۶-۷-۸-۹-۱۰-۱۱-۱۲-۱۳-۱۴-۱۵-۱۶-۱۷-۱۸-۱۹-۲۰-۲۱-۲۲-۲۳-۲۴-۲۵-۲۶-۲۷-۲۸-۲۹-۳۰-۳۱-۳۲-۳۳-۳۴-۳۵-۳۶-۳۷-۳۸-۳۹-۴۰-۴۱-۴۲-۴۳-۴۴-۴۵-۴۶-۴۷-۴۸-۴۹-۵۰-۵۱-۵۲-۵۳-۵۴-۵۵-۵۶-۵۷-۵۸-۵۹-۶۰-۶۱-۶۲-۶۳-۶۴-۶۵-۶۶-۶۷-۶۸-۶۹-۷۰-۷۱-۷۲-۷۳-۷۴-۷۵-۷۶-۷۷-۷۸-۷۹-۸۰-۸۱-۸۲-۸۳-۸۴-۸۵-۸۶-۸۷-۸۸-۸۹-۹۰-۹۱-۹۲-۹۳-۹۴-۹۵-۹۶-۹۷-۹۸-۹۹-۱۰۰ » . Տես՝ Նկար . Էջ Է . Ը . Թէև սխալմամբ մէկ բառ մըն ալ դրուած ըլլար, ինչ պէտք էր ծաղրել ու հեղինակներէ զէվզէկութեամբ , ատի երևելի հեղինակաց գրութեանց մէջ անգամ կրնայ պատահիլ . եթէ նկարագրուած իրողութեանց ու պատմութեաններուն մէջ մէկ սուտ մը կամ զրպարտական ու անտեղի բան մը կար նէ՛ թող անի ցոյց տար մեզի . . . 'ի վերայ այսր ամենայնի խնդալու բանը այն է, որ ո՞ր կէտին ու բառին վրայ որ Չամուրճին մեզի ծաղրեր է , ընդհակառակն նոյնը ինքը դործած էր է երկու տեղ՝ սոյն իր գատաքննութեանը մէջ . ինչպէս որ քիչ մը վարերը պիտի տեսնուի՝ իրեն բծախնդրութեան ու քերթողութեան արդիւնքը . . . :

անոր համար « այս կողմէն հանգուցեալ սրբազան Պատրիարքը բան չէր կրնար ընել » կըսէ՝ Եւն, ասոր ինչ կըսես . . . Այս հակասական՝ անտեղի ու ատասպելախառն զրուցուածքներուն ու դատողութիւններուն՝ կուզես խնդան կուզես խաղան՝ մի ընթերցող, եւ եկու աէ Չամուրճեան Տերոյննցը կամ ցնդեր է՝ եւ կամ խելքին եկեր է մի ըսեր . . . աղօթեմք, որ Աստուած յառաջիկայէն փրկէ զինքը, ամէն . . . Քանզի չէինք գիտեր, թէ՛ « Ռուսերը Պաղեստինի տիրապետելով, մեր սեպհականութեան իրաւանց վրայ աշխարհակալութեան իրաւունք եկեր է. որով մեր ստացուածոյ սեպհականութիւնը աւրեր է » . Հիմա հասկցար մի տղէա Ազգ Հայոցեան Չամուրճեանին չափ հմտութիւն չունիս . ու անցած դացած պատմութիւնները անոր պէս չես կարգար, որ հասկընաս թէ ինչեր եղեր են . . .

Անա աս կտորը՝ այս ապացուցական պատմութեամբ եւ գորաւոր փաստովը եւ կամ հասուն խորհրդածութեամբը, ինչ կըսես ըսէ . իր խելքովը իբր թէ հերքած՝ կամ իբր թէ եղելութիւնը ծածկել ուզած է . եթէ դու չես ընդունիր, ու չես հաւատարես ընդունցի՝ խոստովանիմ եւ հաւատամ . . . Բայց սակայն միայն սա կուզեմ իմացնել Չամուրճեանին . որ մենք ՚ի նախնեաց անտի եւ ՚ի սրբոյ Հարց աւանդութիւն մը ունիմք, որ այսպիսի զարմանալի կէտերուն պատահելու որ ըլլամք նէ՛ ինքըղինքնիս խաչակնքելով՝ ՅԱՆՈՒՆ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ՝ Օ՛Ն ԱՆՊԻ Ի ԲԱՅ ըսածներնուս պէս, եթէ իբօք ԴԵՆ ալ ըլլայ՝ իսկոյն կը հալածի . ուր կը մնայ անոր թելադրութեամբը կամ անոր ազդեցութեամբը գըր-

ուածները . . . , Բայց մենք՝ այս անտեղի առասպել-
 լով իրեն պէս Բ. Դրան մատնել չեմք ուզեր զին-
 քը . այլ միայն այսքան մը կըսեմք իրեն , թէ՛ այս
 պառաւական առասպելը Տաճկըները չիմանան՝ եթէ
 իմանան՝ անշուշտ կամ տիեզերական իշխանութեանց
 նոր պատմաբան մը կը կարգեն , եւ կամ իր բերնին
 չափը կուտան . . . որոնցմով իր աշխատութեանցը
 ու հմտութեանցը վարձքը առած կըլլայ . . .

Ութերորդ՝ այս պառաւական զառանցանքէն կամ
 խելացնոր փաստարանութենէն ետքը՝ յառաջ կը բե-
 րէ մեզի դէմ՝ իր գտած երկրորդ առարկայն . այն
 է՝ «յանցանք սեպեր ե իր ունեցած իշխանութեան
 եւ իրաւաբանութեան վեր բան չընելը » կըսէ : Եւ
 ասկից սա կը հետեւցնէ ըսելով թէ՛ «Երուսաղեմի
 Պատրիարքը Հայոց Ազգին վրայ ընդհանուր իրաւա-
 բանութիւն ունեցածի մը պէս կը ձեռացընէ՝ Նկա-
 րագրին հեղինակը » : Եւ ետքը գրքին մէջ եր . 409
 զրուցած մէկ խօսքս մէջ բերելով՝ կը քաշկոտէ ու
 անկէց սա հետեւութիւնը կը հանէ . « այս իրաւա-
 բանութիւնը Երուսաղեմի Պատրիարքները երբէք
 ունեցած չեն . ունեցեր եննէ գործածած չեն . (դար-
 ձեալ հակասութեան մէջ կիյնայ Չամուրճեանը . . .)
 կը մնայ Միհրդատեանցին եւ անոր գործակցին որ
 մեզի ցըցունեն թէ ո՞ր Կաթուղիկոսը Երուսաղեմի ո՞ր
 Պատրիարքին տուեր է այդ իրաւաբանութիւնը եւ
 այլն » :

Կըսեմք , թէպէտեւ Չամուրճեանը երբեմն Բողո-
 քականները կը պարսաւէր ըսելով թէ՛ « Բողոքա-
 կանք Ս . Գրքին մէկ երեսը կամ մէկ տողը կը կար-
 դան , եւ միւս երեսը չեն կարդար՝ իրենց նպատա-

կին դէմ գալու բան մը որ գտնան . վասնորոյ կու-
զեն որ եթէ իրենց նպատակը սաշտպանելու կտոր
մը կայ՝նէ՝ անի զըցունելով սարգամիտները խարենն» .
Ասկայն ընդհակառակն անոնց ըրածին ինքը կը հե-
տեւի այսօր , այնպիսի խնդիրներու մէջ՝ որով իր
յարգն ալ (եթէ կայ) կը կորսնցընէ եւ ամենուն ծի-
ծաղը կը շարժէ . ստոր կամ իմաստակութիւն եւ
կամ խարդախութիւն կրնամք ըսել եւ ոչ այլ ինչ .
Չոր օրինակ , գրքին մէջ Երուսաղեմի վանական
վարչութեան վրայօք խօսած ժամանակս՝ սա խոր-
հրդածութիւնը ըրեր եմ՝ անցեալ Աղգային վարչու-
թեան Պօլոսոյ ապօրինաւոր ընթացքին դէմ տրտն-
ջելով թէ «նաեւ թողուլ , որ իրեն իրաւաբանու-
թեամբը աշխատի ու դարման տանի , թէ իրեն վի-
ճակին , եւ թէ Ասիայի մէջ մնացեալ խեղճ եւ ան-
տերունչ վիճակաց , այլ ոչ միայն Պօլսեցւոց . . . վա-
սըն զի անոր ըրած ձեռնտուութիւնը բաւական է » .
Բայց Չամուրճեանը խարդախութեամբ մը՝ այլ ոչ
միայն Պօլսեցւոց եւ այլն զրուցուած տակի տողը
կլելով ու վերի տողին մէջ իրաւաբանութիւն բա-
ռը միայն առնելով վեր 'ի վայր դարձուցած՝ եւ իր
խելքին ալ վերոյիշեալ հետեւութիւնը հանած է՝ ինչ-
պէս զրինք . Եւ այն խօսքը ընելէն ետքը՝ գրքին
115 երեսին մէջ ակնարկած մէկ ուրիշ գիտողու-
թիւնս ալ մէջ բերելով (որն որ Երուսաղիմաց գան-
ձին ընդունայն տեղը վասնտեւրուն վրայ ցաւակցու-
թիւն մըն է) բոլորովին խնդիրը կայլայլէ՝ վարպետորդի
Պատուելին՝ չըսեմ ժեզուիրը . . . ու մէկ տեղէն կամ
մէկ խնդիրէն միւս տեղ կը ցատկէ , ու այս ըրած
իմաստակութեանը հետ կը խառնէ , ըսելով « Բայց

ենթադրելով թէ այդպէս իրաւարանութիւն մը ունեցած ըլլայ (Յրուսազեմի Պատրիարքը) ինչ ընելու է անով: Միհրդատեանցը կըսէ (եր. 115) Հաստատանու արգաւանդահող ու պարարտ երկիրնեւրուն մէջ գաղթականութիւն հաստատելու է »:

Եւ ահա ասով Չամուրճեանը թէ իրեն տգիտութիւնը եւ թէ իրեն խարդախութիւնը ու կերպով մըն ալ իրեն բանասիրութիւնը կը յայտնէ վերջինին վրայօք. քանզի ոչ թէ միայն կապակցութիւն չունին միմեանց հետ իր գրածները, այլ եւ զարմանալին է՝ եւ ոչ ալ յարաբերութիւն ունին մեր գրուածոցը ու գիտողութեանցը հետ. եւ անհար է՝ որ իր երազած խնդիրները ելնէ մեր զրուցածներէն, որն որ ընթերցողք լաւ կրնան իմաստասիրել. եթէ Չամուրճեանի աչքով չտեսնեն կամ անոր բերնովը չի կարդան մեր գիրքը, եւ կամ անոր խելքովը օտար իմաստներ չի հանեն մեր զուրցածներէն, եւ կամ թէ անոր ձեռքի ունեցած տղմաշաղախ գիտկովը (չամուրքիւրէյի) չի չափեն մեր գրուածները. այլ ուշագրութեամբ թող կարդան ու տեղեկանան թէ մենք ինչ բանի եւ ինչ խնդրոյ ու որո՞ւ համար զուրցեր եմք այդ խօսքերը, եւ Չամուրճեանը ինչ խնդիրներու կամ ինչ երազներու տարեր է. . . որով յայնմամբ բաւականէն աւելի կը հասկցուի Չամուրճեանին ունեցած արամարանութիւնը ու հակացողութիւնը. . . : Թէպէտ եւ մենք չատ բաներ կրնայինք զուրցել հոս իրեն առարկայ բերած՝ կամ լաւ եւս խնդիր յարուցած Յրուսաղիմայ Պատրիարքներուն իրաւաբանութեանը համար (որուն վերայօք իրեն ալ համառօտակի հազորդեր եմ 1857

թուին . . .) բայց մէջ մը որ խնդիրը պիտի երկարի՝ ու մեր դատաքննութենէն ալ դուրս պիտի ելնենք, մէջ մ'ալ որ մեր գրուածներուն ալ վերաբերութիւն չունենալով իրեն յարուցած կամ երազած խնդիրը, ուստի ընթերցողաց ձանձրութիւն չտալու համար չենք երկարցըններ մեր խօսքը . այլ կուղարկեմք ընթերցող հետաքրքիրները, որ մեր հրատարակած գրքին 108 երեսէն՝ մինչեւ 116 էջերը վերէն՝ ՚ի վայր կարգան ու հասկընան, թէ մենք ինչ գիտաւորութեամբ եւ ինչ խնդրոյ համար զուրցեր եմք այդ խօսքերը . ընդ հակառակն Չամուրճեանը իր գործունէութեամբը ու քաջ տրամաբանութեամբը որպիսի խնդիրներու տարած է զանոնք . յայնժամ հասկցուելով մեր դրածներուն ոգին, որով ՚ի հարկէ Չամուրճեանին այս զուրցածներն ալ ոչինչ է եւ ոչինչ կըլլայ . . .

Իններորդ . Եւ արդ ինչպէս վերը յիշեցինք, թէ Չամուրճեանին վերջին ճիգն ու իրեն ներքին ջիգերուն դպած կէտը՝ իր մէջ բերած երբորդ խնդիրն է, որուն վրայ կաշխատի երկարօրէն՝ ու լատիններուն գրոց խորշերը որոնելով անոնց կողմը պաշտպանելու հնարը կը վնասէ . որմէ կը մակարերեմք թէ՛ միայն այս խնդրոյն համար է՝ որ մեզի դէմ ասպարէզ բացած է : Աւտի եւ մենք ալ պիտի պարտաւորիմք ոչ միայն երկարօրէն բացատրել, այլ եւ երկարօրէն դնել իրեն յօդուածը, որպէս զի թէ փախուստ տուած չի համարուինք եւ թէ Չամուրճեանը ինչ նպատակի ծառայելը բացայայտօրէն հասկըցուի, ինչպէս ակն յայտնի կերեւի իր գրութենէն որ կսկըսի այսպէս .

« Գ . Հանգուցեալ Պատրիարքին յանցանք մըն ալ՝

անհիմն պահանջմունքներու չելլելը սեպեր է (Մի-
հրրդատեանցը) . այսինքն՝ անանկ բաներ կան որ չէ
պահանջեր ձեռք բերելու , որոց վրայ իրաւունք մը
չունի : Եւ այսպէս է Յովակիմայ եւ Աննայի տունը՝
որուն Լատինները տիրեցին 1856 թուին Տէրութեան
չնորհիւր , 'ի փոխարէն — Մալագոֆի մէջ իյնող Գաղ-
ղիացի զինուորաց — Ասոնց այս տիրապետութիւնը*
որ դատարանէն իլլամ աւանելով եղեր է , յաիշտա-
կութիւն կանուանէ Նկարագիրը » : Ետքը իբր թէ

* Վերը եօթներորդ հասուածին մէջը տեսնք , որ Պա-
տուելին մեր գրած «իւր-իւրէլ բայը մատին պլլելով մեզի
ծաղրելէն զինի՝ Ռուսաց ալ — շիւրհ-իւր-իւր-իւր — իւր-իւր — տա-
լով՝ մեզի անիրաւ դատեց մեր սեպհական ստացուածքը պա-
հանջելնուս համար . բայց այժմ՝ ինքը տեսնք որ մի և նոյն
բայը երկու անգամ կրկնած է հոս Լատինաց համար . զուցէ
կամ Լատինք ալ — շիւրհ-իւր-իւր-իւր — մի յիս Պ-իւր-իւր — իւր-իւր — լլ-
լալով՝ անոր համար «իւր-իւր-իւր-իւր» կանուանէ Յովակիմ Ան-
նայի տունը անոնք ձեռք բերելնուն , և կամ շատ հաւանա-
կան է որ իր գրածն ու խօսածը չը դիտնալով կամ չի մտկա-
բերելով՝ բերնին ու գրչին եկածը դուրս կուտայ . և կամ
թէ միայն ուրիշներուն գրածէն ու խօսածէն կերպ կերպ
հետեւութիւններ հանելու պաշտօնը վրան աւած՝ և յարա-
ժամ վէճ հանելու պատրաստուած է . սքով միայն ինքզինքը
գիտնական ու քերթող ու աստուածաբան կամ լաւ ևս կը-
սուարար ըլլալը ցոյց տալ կ'ուզէ յարածամ՝ . այս ինքնապանծ
ու կասարար քննիչը և «զուր-իւր-իւր-իւր» մատենագիրը . . . և շատ
հաւանական ալ է , որ այս զուրցածներս ալ աւարկայ մը բռ-
նելով՝ ինքզինքն աղդարացնելու աշխատի երկարօրէն օտար
խմատներ ու կցկտուր բացատրութիւններ տալով . որով թէ
իր ընթերցող ազէտները խարէ , և թէ իր «իւր-իւր-իւր-իւր» լի-
ցունէ , մինչեւ ցարդ հրատարակած շատ մը՝ անտեղի դու-
թեանցը նման :

մեղի դէմ գոչելով մը, (գուցէ աչքին երեւցած եմք . . .) կամ հարցնելու ձեւի մը խօթելով կաղաղակէ, թէ՛ « Բայց ինչէ՞ն հայերը (իմա Հայքս . . .) իրաւունք կունենան (կարդա՛ կունենանք . . .) եղեր ասոր վրայ, եւ որ ժամանակէ 'ի վեր այս տեղս աթոռին ստացուածքն է եղեր, տեղեկութիւն չտար (Միհրդատեանը) . այլ ետքը ուրիշ տեղ մը կըսէ թէ — ասկէց քանի մը դար յառաջ Սալահատտինը յափըշտակած է եղեր — . որի ձեռքէն յափշտակելն ալ չըսեր (Միհրդատը) . բայց պատմութեան տեղեակ եղողները գիտեն որ Սալահատտին Հայոց հետ բան չունէր . Լատինները Սուրբ Երուսաղէմէն եւ Պաղեստինէն հանեց, որ ժամանակէ մը 'ի վեր այն տեղին (իմա տեղերուն) տիրեր՝ եւ նոր թագաւորութիւն մըն ալ հաստատեր էին . եւ անոնց ձեռքն եղած տեղերը ինքն առաւ . ուրեմն Յովակիմ Աննայի տունը այն ատենը Լատիններուն էր, եւ Սալահատտին անոնցմէ առաւ, չէ թէ Հայերէն » կըսէ : (Գոհութիւն Աստուծոյ, որ իրեն խօսքերուն ու գրութեանցը մեր ազգէն, եւ կարծեմք նոյն իսկ Լատինաց ազգէն անգամ հաւատք ընծայող չի կան, եւ եթէ ըլլար՝ անշուշտ պիտի հաւատային՝ Չամուրձեանը Հայ կարծելնուն համար . . . թէեւ Հայ ալ ըլլար, պատմութենէն հարկաւ տեղեկութիւն ստացեր էին, թէ ինչ Վասակներ երեւան ելնելով իրենց Ազգին եւ Եկեղեցւոյն վնասներ հասուցեր են ժամանակ առ ժամանակ . բայց միայն անուննին երբեմն տարբեր եղած՝ այլ գործքով մի եւ նոյն են . . .) :

Ետքը իր խօսածին հաստատութիւն տալու հա-

մար մեր ազգի պատմիչներէն իբր թէ օրինակ բերելու ջանալով «անոնց ցրցուցած սրբազան տեղեաց ցուցակին մէջ Յովակիմ Աննայի տունը յիշուած չէ (կըսէ), ոչ իբրեւ վանք եւ ոչ իբրեւ Եկեղեցի, եւ ոչ իբրեւ հայոց ստացուած . . . ուստի անձանօթ կը մնայ Միհրդատեանցին եւ անոր գործակցին աղբիւրը, որկէց առած են ըսելը թէ յիշեալ տունը Հայերունն էր » ըսելով կը դառնայ անհարազատ եւ անտեղի ու արդէն մեր նկարագրին մէջը քանի մը տեղ սխալները ուղղած ու ստուծիւնները նշուակուած՝ իրեն պէս լատինամոլ եւ ուխտագրուծ անձի մը գրուծիւնը մէջ բերելով հաստատելու ջանալ իր նպատակը . ըսելով թէ՛ « Սալահատտինը այս տեղս լատիններուն ձեռքէն յստիշտակելը եւ իրենց վարժարան ընելը կը դրէ հանգուցեալ Տ. Մկրտիչ Արծրունի վարդապետը, (Ստորագրութիւն սրբոյ քաղաքին նրոսաղէմի . եր. 176) . ժամանակն ալ կը նշանակէ որ է Փրկչին 1487, եւ Հայոց ՈւԶ թըւականը, Հոկտ. 2. ՚ի հարկէ այսպէս գտած ըլլալով Ս. Երուսաղեմի արձանագրութեանց մէջ » . (կարդա Վիքտորիանու կամ Հռովմէական արձանագրութեանց մէջ . . .) :

Եւ սպա խօսքը մեզի դարձընելով ու իրեն մըտերիմ քահանային մէկը պաշտպանել ուղելով կը զարմանայ, ու դարմանալովը աւելի լափիւրբինդոսին մէջը կիցնայ՝ մեր Չամուրճի աղբարը . այսպէս, « ասիկայ Միհրդատեանցն ալ տեսեր է եւ կը յիշէ (եր. 55) . եւ կըսէ — Արծրունեան Մկրտիչ Միարան վարդապետը՝ կամ անոր գրոյն գործակից գտնուող

Պօլսոյ Մայր Եկեղեցւոյ Տ. Գէորգ քահանայն* կամ
 գիտնալով եւ կամ չը գիտնալով յիշեալ Եկեղեցին
 Լատինաց կրնծայենք, Գարձեալ կրսեմք այժ...
 Եւ ահա ասոնք ըսելէն ու հիմ ձգելէն ետքը՝ հի-

* Չամուրճեանը շարժանքով մը ծանօթութիւն մը կը յաւելու
 այս տեղ, ըսելով թէ՝ « այս քահանայիս անունը հոս գտնուիլը
 մեղի զարմանք կը բերէ. մինչև այն ատենը Կոստանդնուպօլսէն
 բնաւ դուրս չելող մարդ մը՝ Ս. Երուսաղեմի վրայ տեղեկութիւն
 դրող՝ Ս. Երուսաղեմի միաբան վարդապետի մը գրոյն ինչպէս
 գործակից կրնայ ըլլալ, և այլն » : Յիրաւի մենք ալ Չամուրճեա-
 նին պէս զարմանալու տեղի կուեննայինք, եթէ Տ. Գէորգը լաւ
 մը չի ճանչնայինք, և կամ յիշեալ գրքին Գ. երեսը յառաջաբա-
 նին մէջ իր անունը գրած ըլլալը Տէրոյեցիցին պէս չի տեսնուիլ
 կամ չի տեսնելու զարնէինք՝ կեղծաւորաբար զանի պաշտօնան-
 լու համար . բայց դժբաղդաբար այս գործին մէջ ալ մտտ ունե-
 ցաւ Տ. Գէորգը՝ և այս գործին մէջ ալ գոռոզութեամբ մը իր ա-
 նունը գնել տուաւ . որ խեղճ Չամուրճեանը կարելի է ակնոցը քը-
 թին վրայէն կարգացած ժամանակը ձգած ըլլալով՝ և կամ շատ
 շաւղած ժամանակը աչքին վրայ կտոր մը ցնիլ ցատկելով չէ՛ տե-
 սեր ու չէ՛ կարգացեր՝ յիշեալ գրքի մէջ անունը յառա-
 ջաբանին մէջ : Թէպէտեւ Երուսաղէմ ալ գացած չըլլար Տ. Գե-
 օրգը՝ կրնար գարձեալ իր անունը գնել տար . քանզի ո՞ր իրողու-
 թիւնները Երուսաղեմի անոր խորհրդովը ու կամօքը չէր ըլլար
 նոյն միջոցներուն, դուցէ տակաւին մինչև ցայսօր ալ . որ իբր
 միաբան Երուսաղեմի իր քահանայական և վարժապետութեան
 պաշտօնը երեսի վրայ ձգած՝ գիշեր և ցերեկ Պօլսոյ Երուսաղի-
 մայ տանը մէջ կը մըմնջէ . . . ասոնք չեմ կարծեք որ չի գիտցած
 ըլլայ տղամարդ Պատուելին . ըստ որում կարելի է որ ինքն ալ
 բաժին մը ունի նոյն եղբայրութենէն, որ յարածամ երթեկեկու-
 թիւն կրնէ հոն, ու շահասիրութեամբ կուսակցութիւն ալ կը յա-
 բուցանէ ազգիս մէջ, և եղած ազգային տնօրէնութիւններուն
 ալ թէ գրով և թէ բանիւ արդեւք ալ կրնայ . . . չի մտնանք
 անցածները Չամուրճի աղբար . . . :

ըստ բողոքովին իր ներքին թոյնը թափել
• իրաւանցը ու սեպհականութեանը վերայ .
պէս որ ասկից ինը տարի յառաջ ալ՝ Ազգիս կը-
րօնիցը վերայ որ թափել ուզեց . այն ժամանակը
Հոովմէականաց դրութիւններէն հաւաքելով, այժմ
ալ անոնց դրութիւններէն առնելով կը գրէ այսպէս .
«այս չը գիտնալ ըսածը աւելի Միհրդատեանցին կը
վայլէ . որ չը գիտեր թէ 1698 թուին , երբ Օսմանե-
ան մեծագոր տէրութիւնը Աւստրիացիներուն հետ
Քարլովիչի դաշնակցութիւնը կընէր , Ղատին կրօնա-
ւորները գիր մը տուին՝ որով Ս . Երուսաղեմի մէջ
հին ատենը իրենց ձեռքն եղած եւ ետքը տաճկը-
ներուն անցած տեղերը նորէն իրենց որուիլ կուզե-
ին . եւ անոնց կարգը ՔԱ . երորդ կը գնեն — սրբոյն
Աննայի տունը՝ ուր ծնաւ Երանուհի կոյսն Մարիամ,
եւ ատենով Քլարխեան կուսանաց վանք մըն էր ,
եւ հիմայ Տաճկաց ձեռքն է , յիշեալ կուսանաց տըր-
ուի . հրաման ալ ըլլայ որ Վանքը եւ Եկեղեցին
նորէն շինեն » : (տէ Համմէր Պատմ . Օսմանեան կայ-
սեր . Հատոր ԺԲ . եր . 547) , Այս խնդիրը այն ատե-
նը ուրիշ ժամանակի ձգուեցաւ . . . Ղատինները ան-
կէց ետքը քանի որ առիթ կըլլար՝ խնդիրնին կը
նորոգէին . Տաճիկը միշտ կը զլանար՝ ուրիշ ժամա-
նակի ձգելով » : (Յայտնի է թէ անոնց չըլլալը ըս-
տուգած ըլլալով . . .) «այսքան ժամանակի մէջ 1698
էն մինչեւ 1856 . որ ըսել է 158 տարի , ոչ Հայոց
ազգէն եւ ոչ ուրիշ կողմէ մը ձայն մը չելաւ որ
Ղատիններուն պահանջումը կասկածելի ընէր » , կը-
սէ , կըսէ՝ եւ դարձեալ կըսէ , եւ Քըստղն ալ Չամուր-
էի Պատուելին է

Այս մէջ բերած պատմութեան առջի կտորին անտեղութիւնը ցրցունելը քիչ մը ետքի լթողով, առ այժմ վերջի դիտողութեանը համար կըսեմք թէ՛ յայտնի է որ մենք տէրութիւն չունէինք նոյն միջոցներուն՝ որ գիտնայինք թէ՛ տէրութեանց մէջ ինչ դաշնակցութիւններ եղեր են ու կըլլան. նաեւ այն միջոցներուն Հայոց Ազգէն լրագիր կարգացող եւ կամ անունը անգամ լսող չիկար՝ որ կարդալով գոնէ տեղեկանային՝ թէ լատինք դադտագողի ինչ խարդախութիւններ բանեցուցած են ու կը բանեցընեն, որմէ տեղեկանալով Հայք՝ բողոքէին յայնժամ լատինաց պահանջմանը դէմ. նա մանաւանդ եթէ գիտցած ալ ըլլային՝ նոյն միջոցներուն այն զօրութիւնը եւ համարձակութիւնը չունէին Հայք, որ մզկիթ դարձած տեղ մը պահանջէին Տաճկաց կառավարութենէն. վասնորոյ կը մակարեբեմք՝ թէ Տաճկաց տէրութիւնը ո՛չ միայն արդարադատ գտնուեցաւ նոյն միջոցներուն, այլ եւ անշուշտ Չամուրճեանէն աւելի ազգիս իրաւանցը ու սեպհականութեանը պաշտպան լինելով՝ եւ ուսկից ձեռք բերուած ըլլալը կամ գիտնալով եւ կամ իմանալով Տէրոյնեցին զուրցածին պէս՝ « ՏԱՃԻԿԸ ՄԻՇՏ ԿԸ ԶԸ-ԼԱՆԱՐ ԵՒ ՈՒՐԻՇ ԺԱՄԱՆԱԿԻ ԿԸ ԶԳԷՐ ԼԱՏԻՆԱՅ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔԸ » : Բայց վերջապէս Գաղղիոյ Տէրութեան իբր թէ շնորհ մը ընել ուզելով՝ միանգամայն ըրած շնորհն ալ դատաստանի կերպարան մտցրնելով՝ դու կարդա մեղքը վկայողին վիզը քսելով՝ (ինչպէս տաճկաց սովորութիւնն է) լատինաց տուաւ 1856 թուին : Սակայն կարծեմ թէ մեր նկարագրին մէջը եր. 54. ընդդէմ հանգուցեալ Յով-

հաննէս Պատրիարքին՝ այս կէտին համար էր միայն մեր բողոքը ու ցաւակցութիւնը, թէ ինչպէս չի կրցաւ աչալըջութեամբ հասկանալ՝ որ Ղատինք Երուսաղիմայ դատարանէն վկայագիր հանել տուին, ու ինքը հող չի տանելով ազգիս իրաւունքը կորուսու... Ասով ոչ հոն տեղի դատարանը բոլորովին ամբաստանել է, եւ ոչ ալ Օսմանեան տերութիւնը զրպարտել է՝ որ խորամանկութեամբ եւ ճիգովութեամբ մը բերանը ծամուկելով մուր կը քսէ մեզի՝ մեր Հայ անուանող եւ Համուռ նետող Տէրոյնաց Յովհաննէսը... ըսելով թէ՛ « այս յօդուածիս վրայ խօսելով Մինրդատեանցը՝ կամ իրաւի լատիններուն իրաւունքը ժխտելով Ս. Երուսաղեմի հանգուցեալ Սրբազան Պատրիարքը բամբաստելով՝ որ իրենը չեղած մէկ բանը իմն է չէ ըսեր, եւ Օսմանեան տէրութիւնն ալ զրպարտելով իբրև մարդահաճութեամբ մէկին իրաւունքը յափշտակող եւ ուրիշին շնորհող այն ալ արդար դատաստանի կերպարան մտցնելով. որով զրպարտութիւնը աւելի կը ծանրանայ. վասն զի դատարանէն արուած իլամ մը սուտ եղած կըլլայ » :

Կրսեմք, տէրութիւնը ինչ յանցանք ունի ո՞վ Չամուրճի, քանի որ քեզի պէս շահաւէր էֆէնտիններ կրնան դտնուիլ շատ ազգերու մէջ. եւ քանի որ քեզի պէս անուամբ միայն Հայեր՝ կամ լաւ եւս իրօք վնջեր ալ կան՝ ազգիս մէջ, բայց գործքով եւ հաւատքով Ղատին են՝ եւ Ղատինաց պաշտպան, որ ասանկ ազգիս արդար իրաւանցը պաշտպանութիւն չընելով՝ կամ տղիտութեամբ կամ շահաւիրութեամբ եւ կամ ազգատեցութեամբ օտարաց

կրնձայեն իրենց կրօնը եւ սեպհականութիւնը . . . այլ ընդհակառակն երբեմն ազգին իրաւունքը յայտնել եւ պաշտպանել ուղղ անձինք գտնուելու որ ըլլան՝ ճիգութեան հնարքով մը կը պախարակեն զանի . ու կերպ կերպ որոգայթներ լարելով կը մատնեն զնոյն անձը , եւ եթէ հնարը գտնեն՝ այնպիսւոյն կեանքը մինչեւ անգամ ալ բառնալ տալ կը խնդրեն : Ասանկ չէ մի՛ ո՞վ հաւատարմնիք է . ուղղափառ , զուտ քրիստոնէայ է . բերան անխալ աւտեհին Հոովմի . . . :

Եւ ահա Չամուրճեանը՝ այս Գ . րգ խնդիրն ալ այսպէս լուծելով՝ կամ լաւ եւս մտտելով՝ կը վերջացրնէ իր դատաքնութիւնը . միանգամայն մեզի դէմ յորդորներ եւ խրատներ ալ ուղղելով՝ որ ասանկ բաներ չի գրենք , եւ 'ի վերջոյ կերպիւ մ'ալ Նքուսաղիմայ միաբանութիւնը կը գրգռէ՝ որ մեր հրատարակած դիրքը բոլորովին հերքեն :

Այս վերջի յորդորին , եւ Միաբանութեան վրայօք խօսածին լուծումը , կամ անոնց վրայօք խօսելիքնիս վերջի թողլով՝ գանք այժմ Սալահատոյնին մեր սեպհական ժառանգութիւնը եզած Յովակիմայ եւ Աննայի տունը մեր ձեռքէն ինչպէս յափշտակելը , եւ երբ ժամանակէն մերը ըլլալը , ու գեռայժմանն կանգուն կեցած շինութիւնը՝ մեր նախնեաց շինածը ըլլալը՝ համառօտակի նկարագրել : Որպէս զի՝ նախ՝ Չամուրճեանին գրածին անտեղութիւնը՝ հասկցուելով՝ բանին ստուգութիւնը երեւան ելնէ . երկրորդ՝ ասկալին եթէ նորա գրուածոցը եւ խօսիցը հաւատք ընծայող թէ՛ օտարամոլ եւ թէ՛ օտարազգիներ կան նէ՛ բանին ստուգութիւնը հա-

կանալով համոզուին . եւ երրորդ՝ տեղեկութիւն չունեցող հոգւով եւ մարմնով ճշմարիտ հայեր կան նէ՝ տեղեկութիւն ստանալով՝ եթէ կարելի է՝ իրենց սեպհական իրաւունքը պահանջելու ձեռք զարնեն , եւ միանգամայն բոլորովին անզգայ չըլլալով՝ այսուհետեւ իրենց ձեռքը մնացած միւս սեպհականութիւններն ալ՝ բոլորովին չի կորսնցունեն . հետեւաբար օտարամոլ եւ շահասէր ու ազգատեաց անձանց տարածայնութիւններուն ականջ չի դնելով՝ մեղի ալ անմեղադիր թողուն՝ այսպիսի Ազգային իրաւունքները հետաքրքրութեամբ մը ստուգապէս երեւան հանելնուս համար :

Արդ՝ երբ ժամանակ որ Սալահատտին Սուլթանը Երուսաղէմ կը մօտենայ , դեռ քաղաքը չի մտած հեռուէն մեր սուրբ Յակոբայ տաճարին փառաւոր գմբեթը եւ անոր հակայաչինութիւնը տեսնելով՝ կը կարծէ թէ Էօմէրին մզկիթն է . եւ խսկոյն, երկրպագութիւն մատուցանելով փառք կուտայ Արարչին՝ որ իր ձեռքը յաղթութիւն տուաւ ու արժանացաւ սուրբ Երկրին տիրասկետելու եւ Սէյրէթուլլահը տեսնելու : (Ըստ որում մինչեւ ցայսօր քաղաքը չի մըտած 'ի հեռուստ կերելի մեր հակայաչէն վանքը . քանզի ոչ միայն մերձ է դրան Նաֆայի եւ աշտարակին Գաւթի , այլ չի կայ քաղաքին մէջ անոր պէս մեծակառոյց եւ մեծադիր շէնք մը , նա մանաւանդ գետնի բարձր դիրքովն ալ երեւելի ձեւացուցած է տաճարը . որովհետեւ Սիօն լեռան վրայ կառուցուած է) : Բայց երբ ժամանակ որ քաղաքէններս կը մըտնէ՝ կը տեսնէ որ խաբուած է՝ եւ իր կարծիքը պարսպ . ուստի անոր երկրպագութիւն մատուցանելով

աղօթելուն (նամաղի կայնելուն) համար, զայրանալով մը կը հրամայէ նոյն ժամանակի Հայոց Հայրապետին՝ (որ Երուսաղէմցի Աբրահամ Պատրիարքն էր) որ կամ Վանքը ձգեն ու դուրս ելնեն որ մըզկիթ գարձնէ Մար Եագուպը, եւ կամ եթէ յանձնառու չըլլան՝ հիմնայատակ պիտի ընէ Մանասթըրը ։ Յայնժամ երանելի Հայրապետը իր բոլոր միաբանութեամբը ու ժողովրդովը ճիշ կը բառնան եւ աղիողորմ արտասուօք Սուղթանին ոտքը կը փարին գոչելով եւ պաղատելով՝ որ ողորմի եւ խնայէ վանքը ու իրենց պարգեւէ ։ Նոյնժամայն բարկութենէն փոքրը ինչ զիջանելով վերստին կը հրամայէ՝ որ գոնէ հրամանը տեղը գտնելու համար տաճարին գրմբեթը իջեցընեն ՚ի խոնարհ . իսկոյն զիջանելով այս որոշմանը՝ կը քակեն կաթողիկէն (կամ նոյն է գագաթն կամ սկաւառակն Ս. Յակոբայ տաճարին), որով եւ կը հանդարտի փոքր ինչ յաղթողին սիրտը ։ Եւ կը պատուիրէ՝ որ մէյմ՝ալ գմբեթը չի բարձրացընեն . ըստ որում կըսէ՝ ինծմէ ետքը եկողները՝ կամ եղելութիւնը իմանալով կամ տաճարին փառքը տեսնելով յայնժամ կամ ձեռուընուդ կը յափըշտակեն եւ կամ հիմնայատակ կընեն . այս ըսելով Ս. Յակոբայ վանքը կը թողու ու կեւնէ Հայրապետին հետ մէկտեղ քաղաքը շրջել ու Սէյրէթուլլահը (Էօմէրին մզկիթը) տեսնել, ուր իրենց կրօնին համեմատ յարգութիւն տալէն զկնի, երբ ժամանակ որ դուրս կեւնէ՝ կը տեսնէ որ նոյն իրենց տաճարին գլմացօքը երեւելի Յկեղեցի մը կայ . — այս որո՞ւ է, կը հարցնէ Հայրապետին . նա ալ կըսէ թէ՝ — Մէրեմ Անային ծնողացը տունն է, եւ Յովակիմ Աննա կը

կոչուի : Արդառնայ բարկութեամբ մը պատասխանել , թէ՛ — ես որուն անուամբը կառուցուած ըլլալը չեմ հարցներ քեզի , այլ որ ազգինն է այդ Եկեղեցին՝ որ համարձակեր է մեր տաճարին (հարէմի շէրիֆին) զրան գէ՛մ հոյակապ Եկեղեցի կառուցանել :

Յայնժամ Պատրիարքը ռաքը իյնալով մը կըսէ . — Տէր , Ազգիս Հայոց ու քու նուաստ ծառայինդ է , եւ եթէ արժան դատես՝ ինձ պարգևէ , ապա թէ ոչ կամք քո է՝ որպէս կամիս նոյնպէս արա . — իսկոյն կը հրամայէ Սալահատտին՝ որ անի սօֆտաններուն մէտրէսէ ըլլայ իր անուամբը . քանզի չէ արժան կըսէ՝ մեր տաճարին գէ՛մը Եկեղեցի լինել՝ եւ եթէ ես չառնում իմ յաջորդներս անշուշտ կառնուն . նա մանաւանդ Մար Եագուպը ձեզի բաշխեցի վասնորոյ անոր տեղ անպատճառ պիտի առնում ասի , որ յաղթութեանս նշան մը ըլլայ՝ ու ինձ համար աղօթեն յիշեալ սօֆտանները : Ասկըսի Սրբազան Պատրիարքը դողալ ու սարսափիլ եւ շուարիլ (ինչպէս իր գրութենէն առնելով՝ երկու դար ու կէս յառաջ՝ իր Ս. Երկրին պատմութեանը մէջ կը գրէ , Տ. Յակոբ քահանայն Ամասիացի) . « մտածեցի թէ՛ եթէ հրաման բռնաւորին վերստին չի կատարելու որ լինիմ , յայնժամ թէ Ս. Յակոբ ձեռացնուս պիտի երթայ , եւ թէ Յովակիմ Աննան . ապա ուշի եկեալ մտածեցի թէ զինչ արարից . ուստի երկու չարեաց փոքրագոյնն է ընտրելի ասելով՝ երբ բռնաւորն թախանձեաց վերստին , իսկոյն առաջի նորա անկայ՝ եւ ասացի՝ կամք քոյին տէրութեանդ է . զայս ասելով յանձնեցի տունն Յովակիմ Աննայի : Եւ այս

եղև ուձ. Հոկտ. Ժ. Թուականին* » : Որ անկից ,
այսինքն՝ 1187 Թուականէն մինչև 1856 Թուակա-
նին , որ ըսել է՝ 669 տարի՝ Սալահատտին մետրե-
սեսի կամ Սալահիյէ կը կոչուէր , նոյն իսկ Յովա-
կիմ Աննայի տունը** :

*Եւ ոչ Հոկտ. երկուքին . և ոչ ալ ՈՁԷ հայ Թուականին ,
ինչպէս կը գրէ Չամուրճեանին վկայ բերած Արծրունի Մկրտիչ
Վարդապետը , Ստոր. եր. 15. և 176 : Առջի սխալը կարծեմք
Թէ հեղինակին , և վերջի սխալն ալ կարելի է գործ-վէց Տ. Գեորգի
ըլլալու է . ըստ որում գործ-վէց գործ-վէն՝ ուրեմն կամ իր կար-
ծիքը գրած է , և կամ յիշեալ հեղինակին աշխատութիւնը «ը-
բ-գործ ժամանակը»-ը զ-է եր. 15ին մէջը . Թէպէտև երես 176
ին մէջը Ուձ ալ եղած է . բայց փաստ չունի : որովհետև նորո-
ւն գործը իրորոցնէ կըսեն . . . :

**Թէպէտ երբեմն ՌՉԸ Թուին , այսինքն՝ 1629 ամին , նոյն
Յովակիմ Աննայի եկեղեցւոյն հարաւային կողմը գտնուած մա-
տուաք՝ ուր սուրբ կուսին Մննդեան տեղն է . Լատինք կարացին
ձեռք բերելով զանի իրենց կուսանաց ճգնութեան տեղի ընել .
սակայն Եկեղեցին բոլորովն չի կարացին իրենց իւրացնել . ինչ-
պէս որ կը գրէ ժամանակակից և ականատեսնոյն Յակոբ քահա-
նայն Ամասեացի . և կըսէ՝ « այս եղև սակս Թողելուն Արարաց-
ւոց ամայի , ուր երբեմն մերս կուսանք ճգնէին , սպա յօրինակ
առեալ ՚ի նոցունց Լատինք , յիւրեանց կուսանան բնակեցուցին՝
քանի ինչ խրճիթս շինելով անդ . Թէպէտև ոչ երկարատևեաց
զայն . քանզի ոչ միայն ոչ Թոյլ ետուն Արարացիք , այլ և Հովին
մեր արթուն , (սյն է Գրիգոր պարոն Տ. հոգելոյս Հայրապետն)
ըստ իւրում արթնութեամբն՝ առ իթս առեալ նա ևս Թախան-
ձեաց զեկեղեցին հրաշակաւոյց բերել ՚ի ձեռս , որ բազմօք յա-
ռաջ ամօք՝ յափշտակեալ էր Սալահատին ՚ի ձեռաց նախնեաց մե-
րոց : (Պատմ. սրբոյ Երկրին ձեռ.) : Բաց ՚ի սոյն պատմութենէն ,
այլ և և Հաննէյի պատմութենէն ալ կերկէի , ուր կըսէ , Թէ՝ « յո-
րում բնակէին (կուսանք) ՚ի ժամանակս խաղաղութեան , և այժմ
աւերք են (իմա խրճիթը կուսանաց) եւ ոչ ոք բնակի ՚ի նոսա » :

Եւ ահա՛ բանին իսկ եղելու թիւնը, մեր ձեռքը
դանուած յիշատակարաններուն եւ արձանագրու-
թիւններուն, նաեւ մինչեւ ցարդ բերնէ բերան ան-

(Պատմ. Հն. եր. 229. Տեղ Պօլ. 1782): Այս «իժամանակս խա-
ղաղութեան բնակէին կուսանք» ըսածն ալ՝ Լատինաց համար
հասկընալու չէ, այլ նախնեաց ժամանակի եղածը կակնարկէ
Հաննէին զուրցածը. թէպէտեւ ինքը չորոշէր որ ազգին կուսան-
քը ըլլալը Ասոնցմէ 'ի զատ Չամուրճեանին մէջ բերած պատմու-
թեանն ալ կը հասկըցուի, որ Լատինք քիչ ժամանակ կրցեր են
հոն բնակիլ. քանզի ինքը կըսէ. թէ՛ 1698 թուին Օսմանեան
մեծագոր տերութիւնը Աւստրիացիներուն հետ Գարլովիչի դաշ-
նակցութիւնը կընէր, Լատին կրօնաւորները գիր մը տուին՝ որով
եւ միւսպահանջած տեղերուն հետ Յովակիմ Աննայի տունն ալ
դահւճեցին հին տէնը երէնց յերոն եւս ըլլաւ հաւոր » : Ըսել
կըլլայ թէ՛ վերոյիշեալ թուականէն 70 տարի ետքը վերստին ձեռք
բերելու աշխատեր են Լատինք, պատճառ բերելով երէնց երբեմն
զանի յերոն յիշուած հաւոր. ուստի կենթադրեմք, թէ անշուշտ
օր մըն ալ պիտի ելնեն՝ ոչ թէ միայն Ս. Յակոբայ վանքը, այլ եւ
Ս. Փրկչի վանքն ալ ձեռուընուս պիտի պահանջեն Լատինք. առ-
ջինին մէջ տարին անգամ մը Յուլիս ամսոյն դալով Պատարագը
նեղուն ու տօնախմբութիւն կատարելուն համար, եւ ետքինին
մէջ ալ՝ իրենց Հոգեգալըստեան կիրակի երեկոյին նախատօնակ
ընելով եւ հետեւեալ օրն ալ հանդիսիւ Պատարագ մատուցանել
նուն համար՝ 200 տարիէ 'ի վեր. եւ այս ալ միմիայն սուրբ սիրով
խորոզութիւն չընենուն մեր կղերները թոյլտուութիւն ըրած
են. թէպէտեւ անխոհմութեամբ . . . քանզի Ս. Համբարձման
վանուց եւ տաճարին համար ալ թոյլտուութիւն ըրած էին
Հայք. բայց առիթ առնելով եւ կամ նախանձելով՝ իրենց բոյո-
րովին չի կարացին իւրացընել նէ՛ իսկոյն կործանել տուին հե-
թանոսաբար. . . բայց գուցէ աս զուրցածներուս խնդիրն ալ մին-
չեւ ցարդ գործի դրած են Լատինք. եւ այս ալ Չամուրճեանէն
հասկընալու է՝ քանզի անոնց գաղտնիքներուն տեղեակ ու խոր-
հուրդներնուն խորհրդակից կամ մատակարար է . . . :

ցած աւանդութիւններուն նայելով : Թեպէտեւ ասով չի շատացաւ , Չամուրճեանին իբր փաստ բերելով պաշտպանած « Հայոց ազգին հետ բան ջոնեցող Սալաճատտինը , այլ եւ վերստին Ս. Յակոբայ վանքը պահանջելու ձեռք զարկաւ . ինչպէս որ յիշեալ պատմաբանէն զատ , Հաննա Երուսաղեմացի վարդապետն ալ կը պատմէ՝ ասկից դարուկէսի չափ յառաջ . բայց անի մեր խնդրոյն ու մեր դատաքննութեանը չի վերաբերելուն համար՝ այն կտորը կը թողունք . այլ միայն խնդրոյ տակ ձգած յիշեալ Յովակիմ Աննային տանը համար՝ սա հետեւեալ դիտողութիւնները եւ ապացոյցները ու պատճառներն ալ կաւելցնեմք եւ կըսեմք :

Նախ՝ սոյն պատմութեամբ կարծեմք ապացուցուեցաւ մեր նկարագրին մէջ դրած Յով. Աննայի պատմութեան ստուգութիւնը , որով եւ մեր ցաւակցութիւնը ու պահանջքն ալ՝ գուցէ արդար եւ իրաւացի դատուեցաւ Չամուրճեանէն : Երկրորդ՝ բաց 'ի սըմանէ այլ եւ մինչեւ ցայսօր Երուսաղեմի մեր միաբաններէն ու ժողովրդէն զատ , նաեւ երկրացի օտար ազգի քրիստոնեայք եւ Արարացիք անգամ աւանդութեամբ այնպէս դիտեն եւ այնպէս կը վըկայեն 'ի նախնեաց անտի , թէ՛ Սալահատտին Հայոց ձեռքէն առնելով իրեն անուամբը վարժարան ըրաւ : Երրորդ՝ Չամուրճեանին վկայ բերած Անաստաս վարդապետին ցոնցակիւն մէջն ալ կը գտնուի , որն որ իրեն խուզարկութենէն եւ հմտութենէն գուրս մնացած է , եւ չը գիտեր որ կը գրէ յիշեալ վարդապետը՝ թէպէտեւ առանց անունը տալու այսպէս . « 20րդ՝ Արշակունեաց վանքն՝ որ առ պրօպատիկէիւ »

կրսէ . որ եւ այս տեղեկութիւնը առաւել եւս կըս-
տուգէ մեր վերը դրած պատմութիւնը , եւ որով
յիշեալ Եկեղեցին մերն ըլլալը յայտնի կը ցըցունէ .
քանզի Սալահատտինին յափշտակութենէն՝ գրեալ թէ
հինգ դար յառաջները գրուած է՝ յիշեալ ցուցակը
ու տեղեկագիրը . եւ որովհետեւ պրօպատիկէ աւա-
զանին մերձ 'ի նախնեաց անտի մինչեւ ցայսօր՝ ու-
րիշ ոչ վանք մը , ոչ եկեղեցի մը կայ ու եղած է ,
բաց 'ի Յովակիմ Աննայի տունէն . վասնորոյ առանց
տարակուսութիւն մը յարուցանելու կենթադրեմք
թէ՝ անպատճառ յիշեալ Յովակիմ Աննայի տունն է՝
Անաստաս վարդապետին ցուցուցած վանքը , եւ ա-
նոր շինութիւնն ալ մեր Արշակունի տէրութեանց
շինածն է , եւ ոչ դշխոյն Հեղինէի . ինչպէս որ ան-
գիտութեամբ՝ միայն օտար ազգաց չափազանցօրէն
եւ անտեղի գրուածներուն ու խօսածներուն նայե-
լով Հաննա Երուսաղեմացին իր պատմութեանը մէջ
բոլոր Երուսաղեմի վանքերուն շինութիւնը անոր
ընծայելէն զատ՝ նմանապէս այս Յովակիմ Աննային
տանը շինութիւնն ալ անոր կընծայէ . որոնց անտե-
ղութիւնն ալ Երուսաղեմի ճանապարհորդութեանս
մէջ կրնայ տեսնուիլ , եթէ 'ի լոյս ընծայի հրատարա-
կութեամբ, Չորրորդ՝ վերոյեղեալ պատմութեանս իբր
ապացոյց եւ հաստատուն վկայութիւն կրնայ համար-
ուիլ՝ Ս. Յակոբայ տաճարին կաթուղիկէին բաց եւ
կիսակործան մնալը՝ 1187 թուականէն մինչեւ 1856
թուականը . որ աս վերջի թուոյն կանանց վերնա-
տունը շինուած ժամանակը շինուեցաւ . թէպէտեւ
այժմեան շինութիւնը առջի կաթուղիկէին չափ բար-
ձրը ելած չէ Հայաստանեայց Եկեղեցւոյ սովորու-

թեանը պէս, այլ միայն սկաւառակին լուսամուտը (քելիե ճամիւն) գմբեթածեւ գոցուեցաւ. եւ ահա ասով ալ կապացուցուի Սալահատտինին ըրածը՝ ու մեր պատմութեան եւ աւանդութեան ստուգութիւնը: Եւ հինգերորդ՝ այս օրինակոր փաստերէն ու պատճառներէն եւ ապացոյցներէն ու վկայութիւններէն զատ՝ ուրիշ նիւթական արտաքին պատճառներ եւ երեւելի վկայներ ալ ունիմք՝ նոյն իսկ Յովակիմ Աննայի Եկեղեցին մերն ըլլալուն, որով Քրիստոսի «մարդիկ երե լուեն՝ քարինը կաղաղակեն» ըսածին նման՝ անոր շինութիւնը կաղաղակէ թէ՛ Հայոց շինութիւն եւ Հայոց Եկեղեցի է. որով եւ ուրիշ վկաներու կարօտութիւն չի ձգեր՝ քանի որ կանստն կայ: Որովհետեւ նախ՝ Եկեղեցիին ձեւը ինքնին կը յայտնէ թէ՛ Հայոց Եկեղեցի է. երկրորդ՝ անոր կաթուղիկէն՝ թէպէտ փոքր, բայց մեր սուրբ Յակոբայ տաճարին մի եւ նոյն ձեւն ունի, եւ գիտես թէ մի եւ նոյն ճարտարապետին ձեռքէն ելած է. ըստ որում Ս. Յակոբայ տաճարն ալ Արշակունեաց շինածն է. երրորդ՝ դէպ 'ի արեւելք միայն շինուած է անոր խորանը կիսաբոլոր կամարի մը մէջ, որն որ Հայոց Եկեղեցւոյն վերապահեալ է միշտ. չորրորդ՝ Աւագ սեղանի երկու կողմի փոքրիկ խորաններն ալ կապացուցանէ՝ թէ Հայոց է, որն որ ըստ մեծի մասին Հայոց Եկեղեցւոյն յատկացեալ է այս ձեւը. հինգերորդ՝ Եկեղեցւոյն թէ հարաւային եւ թէ հիւսիսային որմերուն մէջ կամ անոնց առջեւ խորանաձեւ տեղի եւ սեղան չունի, ուր ընդ հակառակն Վատին Եկեղեցեաց սովորութիւնն է միշտ, որն որ իրենց բոլոր Եկեղեցիներն ունին նոյն ձե-

ւերը . վեցերորդ՝ Եկեղեցւոյն աւազանը դեռ 1857 թուին կանգուն կեցած էր հիւսիսային որմին մէջ ըստ նախնի սովորութեան հին Եկեղեցւոյն Հայոց, որն որ ընդհակառակն Վատին եկեղեցեաց մէջ չի կայ . եօթներորդ՝ տակաւին 1857 թուին՝ Աւագ Սեղանին վարագոյրին երկաթին օղակները կեցած էր, որով առաւել եւս կապացուցուի Հայոց շինութիւն եւ Հայոց Եկեղեցի ըլլալը . քանզի Վատինաց Եկեղեցին բոլորովին վարագոյր չունի՝ որ երկաթի օղակներ ունենայ . . . Բայց սն ալ կըսեմք, թէ 1858 թուին՝ նորոգելու ժամանակնին եթէ նոյներկաթին օղակները, եւ յիշեալ Մկրտութեան աւազանը՝ խարդախութեամբ մը հանեցին ու անյայտ ըրին նէ Վատինք՝ Հայոց յիշատակը կամ լաւ եւս Հայոց նշանները խապառ ջնջեցին նէ՝ անի չեմք գիտեր . ըստ որում յիշեալ թուին նորոգութեան ժամանակնին՝ որմերուն առջին սեղաններ աւելցուցին իրենց սովորութեանը համեմատ, որով եւ մեր Հայկաչէն Եկեղեցին՝ Հռովմէաչէն դարձուցին . . . :

Եւ ութերորդ, թողունք այս օրինաւոր եւ ապացուցական պատճառներն ու վկայութիւնները մէկդի, եւ ասոնց բոլորն ալ մեր կողմէն առատաձեռնութեամբ իբր պարգեւ մը թող եղած ըլլայ Չամուրճեանին . . . : Բայց սակայն ասպաքէն սէր թողունք հետեւեալ ամենակարեւոր եւ անջրելի պատճառներուն մէկն ալ, որ այն է, թէ՝ Վատինք դեռ 1099 թուականին Նրուսաղեմի տիրեցին խաչակրաց ժամանակը, եւ յիշեալ թուականէն շատ առաջ այս Եկեղեցին շինուած էր՝ ինչպէս որ վերն ալ ասպացուցինք . արդ (ի բաց առնելով առաջին դարերը)

այլ յիշեալ տիրապետութեան թուականէն առաջ ար-
դեօք ուր էին Ղատինք, եւ ով շինեց նոյն Եկեղե-
ցին, եւ թէ երբ ձեռքակալեցին նոյն Յովակիմ Ան-
նայն՝ որ Սալահատտին ալ անմնջմէ յափշտակած ըլ-
լայ . . . կարծեմ թէ ասոր վրայօք ապացուցական պատ-
մութիւն մը տակաւին չի կայ Ղատինաց մէջ, եթէ
ըլլար՝ անշուշտ մեր Ղատինամուկ եղբայրը անի ալ մէջ
բերելով մեր աչքը կը խօթէր . բայց ասով չըլլայ թէ
իրենց պահնջը բացած ըլլամք, որմէ ստիպուելով
Հոովմայի արձանագրութեանց մէջէն՝ կամ դրատանց
մէկուն խորշերը մնացածներէն որպէս թէ հանելով մէկ
աւանդութիւն մըն ալ ասոր համար դոյացընեն այ-
սուհեաւ Ղատինք . . . եւ եթէ Ղատինք չի կրնան ը-
նեւր նէ՝ էհ, մեր հայուրաց Ղատինը բաւական է այս
ճարպիկութիւնը ընելով դոյացընել անանկ մէկ պատ-
մութիւն մը այսուհեաւ՝ եթէ հարկը ստիպէ . . .

Վերջապէս կըսեմք, թէ՛ եւ ահա Ղատին հեղի-
նակները իրենք կը վկայեն հոչակաւոր Մարինոս Ղա-
տին պատմիչին բերնովը, թէ՛ իրենց Երուսաղիմայ
մէջ Վանք եւ Եկեղեցի ունենալին տակաւին 4249
թուականին դոյութիւն ունեցած է (այսինքն Սալա-
հէտտինին տիրապետութենէն 52 տարի ետքը), ձե-
ռամբ իրենց Ս. Յրանչիսկոս առաջին Մեծաւորին Ս.
Տեղեաց . եւ այն շինած ու հաստատած վանքն ալ Ս.
Սիօնի վանքն էր, որուն մէջէն 1294 թուականին,
(այսինքն 72 տարի ետքը) արտաքսեցան առաջին
անգամ Աբաբացիներէն* . (Մարինոս Պատմ. Ս. Տեղ.

* Ըստ որում 1515 թուականին վերստին մէյմ՝ ալ ձեռք բե-
րին Ռուպերթոս Միկիլեոյ թագաւորին ձեռքը, բոլոյ 1564 թը-

Գիրք Ա. Գլ. Ը. ձեռ.) : Եւ դարձեալ , եթէ դնելու որ ըլլամք թէ Լատին թագաւորները շինած ըլլան Յովակիմ Աննայի Եկեղեցին՝ 4187 թուականէն առաջները , (այսինքն 90 տարիի չափ տիրած ժամանակնին) . կըսեմք , միթէ միայն Յովակիմ Աննայի Եկեղեցին շինեցին՝ եւ ուրիշ Եկեղեցի ու վանք մը չի շինեցին արդեօք . որ ո՛չ նոյն ժամանակին եւ ո՛չ ալ նոյն ժամանակէն 'ի վեր նոյն ձեւով եւ նոյն շինութեամբ ո՛չ Եկեղեցի մը ունեցած են եւ ո՛չ ալ ունին . եթէ ըլլար՝ անշուշտ անոր նման մէկն ալ կեցած կըլլար մինչեւ ցարդ , ինչպէս որ Յովակիմ Աննայի Եկեղեցին կեցած է : Այլ սպասութեանց եւ աւանդութեանց տեղեկութիւն ունեցողները քաջ դիտեն , թէ Լատինք միայն Ս. Յարութեան տաճարին տիրեցին Խաչակրաց ժամանակը եւ անոր մէջ տնօրինական տեղերէն՝ թէ Յունաց եւ թէ Հայոց բաժանորդութենէն իրենք ալ մաս մը ունեցան , (եւ այս ալ թէ սիրով եւ թէ բռնութեամբ) , եւ ասոր ապացոյց ալ այն կրնայ համարուիլ որ իրենց թագաւորներուն գերեզմանը անգամ Ս. Յարութեան տաճարին մէջն էր , ինչպէս որ արդէն մէկ երկուքը կերեւայ :

Եւ ահա մեր արդարացի եւ օրինաւոր իրաւունքը . եւ ահա մեր ձեռքը դանուած հաստատուն եւ անուրանալի վկայութիւններն ու ստուգութիւնները եւ ահա մեր անդիմադրելի ճշմարտութիւններն ու

ւին բոլորովին արտաքսեցան անտի Ս. Ասնէն և տիրեցին Աբաբացիք , որք ունին մինչև ցարդ , և ապա բազում գրամ վատնելով քաղաքին մէջը Շամայ դրան մերձ վրաց Ս. Գեորգոյ Եկեղեցին սեպհականեցին , և հետզհետէ անոր բոլորտիքը վանք ու բնակարան շինելով մեծցուցին , որ մինչև ցարդ իրենց վանքն է :

անհերքելի ապացոյցները . . . :

Հիմայ կը մնայ հարցընել, թէ արդեօք ո՞վ որ՞ու իրաւունքը ժխտեր է, արդեօք Միհրդատեանցը Լատիններուն չունեցած իրաւունքը յայտներ է, չէ՞ նէ Տէրոյենցը Հայոց իրաւունքը ժխտե՞ք է . . . թող ընթերցողք վկայեն :

Ուրեմն կըսեմք Չամուբճեան Տէրոյենցին, թէ՛ եւ թէ՛ Աստուծմէ բոլորովին անը եւ երկիւղը վերուցեր եւ Հայ ազգին պատիժ եւ պատուհաս ըլլալու ամենաանարգ պաշտօնը վրան առեր է՝ նէ՛ ուրեմն խայտառակութիւնը յանձն առեր ու վերտաին խաղք ըլլալ կուզէ՛ նէ՛ ուրեմն բան գործ չունի՛ նէ՛ թող կըրկին եւ կրկին աշխատի ու Հոովմէական արձանագրութեանց խորշերը մտնէ՛ եւ ուրիշ կարկատուն ձեռնարկութիւններ ալ գտնելով հերքելու ջանայ մեր ապացուցած օրինաւոր պատճառները եւ վաւերական պատմութիւնները . որով յայնժամ առաւել եւս վառաւորութի՛ թէ աստ եւ թէ՛ ՚ի հանդերձելումն Լատինացիմէն, եւ Հայոցմէն ալ օրհնութիւն լսելու եւ ողորմիս հանել տալու արժանանայ միշտ . . . :

Այժմ կը մնայ Չամուբճեանին այս խնդրոյն վրայօք մէկ վաստն ալ կամ լաւ եւս մէկ տգիտութիւնն ալ լուծել, որ Սալահատտինին համար կըսէ թէ՛ «պատմութեան տեղեակ եղողները (իրեն պէս) գիտեն՝ որ Սալահատտին Հայոց հետ բան ջուրներ » . եւ այս խօսքը իբր ապացոյց բերելով՝ Յովակիմ Աննայի տունը Լատիններէն առած կը համարէ : Կըսեմք այն՝ թէպէտ եւ Սալահատտին յատկապէս Լատինները Պաղեստինէն եւ Երուսաղէմէն հանեց, եւ միայն անոնց հետ բան ուրեր. ՚ի վերայ այսր ամենայնի անոր խը-

րոխա կառավարութենէն թէ Հայք եւ թէ ուրիշ քր-
 րիստոնեայ ազգերն ալ քիչ վիշտեր աւ հարստահա-
 րութիւններ չի կրեցին անկից . որուն օրինակ ըլլալու
 բաւական է մեղի բրածը որ ցըցուցինք , թէ եւ մե-
 զի հետ բան մը ջուճեք Սալահատտին, բայց քիչ
 մնաց Ս. Յակոբայ վանքը ձեռուընուս պիտի առնէր
 ու մղկիթ դարձունէր, միայն թէ Յովակիմ Աննայով
 բաւականացաւ եւ անով յագեցուց իր փառամօլու-
 թիւնը . թէպէտ³ եւ քանի մը ուրիշ⁴ եկեղեցիներ ալ
 թէ ինքը եւ թէ իր յաջորդները յափշտակեցին , ո-
 րոնց տեղեկութիւնն ալ ճանապարհորդութեանս մէջ
 կրնայ տեսնուիլ՝ եթէ հրատարակի : Բայց կըսեմք
 Չամուրճեանին՝ թէ Սալահատտին Յունաց հետ ալ բան
 ջուճեք , սակայն Ս. Յարութեան զանգակատունը
 փլցնել տուաւ, եւ մինչեւ⁵ անգամ Ս. Յարութեան տա-
 ճարն ալ պիտի կործանէր , բայց քրիստոնէ թագաւո-
 րաց խնդրանօքը⁶ եկեղեցին չի⁷ քակեց , որուն փոխա-
 նակ Ղալաթիոյ Արապ ճամխսին նորոգել⁸ տուաւ՝ այն
 ժամանակի Յունաց թագաւորին՝ եւ այնպէս զիջաւ
 բոնութենէն : Ինչպէս եւ այս⁹ տեղեկութիւնը իրեն
 պաշտպանած Արծրունի Մկրտիչ վարդապետն ալ դը-
 րած է . Ստոր. եր. 44. իբր թէ Միւհէնտիս Պ. Գէորգէն
 առած ցըցունելով . կըսեմք թէ սուտ է բոլորովին ,
 եւ կեղծաւորութեամբ հեղինակին աշխատութիւնը ու
 յիշատակը բնաջինջ ընել է , որն որ պատիւ չէ Միւ-
 հէնտիսին . այլ նոյն դրութիւնը Պալատցի Գէորգ Պատ-
 ուելւոյն է , եւ ոչ Սամաթիացի Միւհէնտիս Գէոր-
 գին . որուն ինչպէս ըլլալն ալ¹⁰ եւ¹¹ Մկրտիչ վարդա-
 պետին ուսկից¹² ձեռք բերելն ալ¹³ մեղի յայտնի է :

Կըսեմք դարձեալ Չամուրճեանին , թէ Սալահատ-

տին Ասորւոց հետ ալ բան ջուներ. բայց Ասորւոց Տէ՛ր Ատաա կամ Տէ՛րը Ատես (ոսպնավանք կամ ոսպնակերաց վանք) կոչուած փառաւոր Եկեղեցին ալ յափշտակեց, որն որ Թուրքերէն Մերձիմէկ մանասըրը կը կոչուի մինչեւ ցարդ, ու մինչեւ ցայսօր Թէրքէ է Տաճկաց, որուն որմերուն վրայի նկարուած եւ փորագրուած սպտակերներն ալ իբր հաստատուն վկայութիւն գետ Եկեղեցւոյն՝ մէջ կեցած է կըսվի. եւ յիշեալ Եկեղեցին քաղաքին հիւսիսային կողմը ու Սուլթան համամիին դէմը կիցնի, եւ Յովակիմ Աննայէն ուղղակի դէպ՛ի Շամայ դուռեր թալու որ ըլլաս՝ աջ կողմը կիցնայ. Ուրեմն տեսանք թէ Չամուրճեանին մէջ բերած այս փաստն ալ չի դօրեր մեր դրած տեղեկութիւնը հերքելու, մանաւանդ տեղի մ՛ալ չունի իրեն կարծիքը. քանզի տեսանք, որ Ասորւոց հետ ալ բան ջուներ Սալահատին, բայց ինչպէս ցըցուցինք՝ անոնց վանքն ալ յափշտակեց, որն որ տեղն ՚ի տեղը նկարագրեցինք :

Կը մնայ քիչ մ՛ալ այս մասին դատարանէն տրուած իլամին սուտ կամ իրաւ. ըլլալուն, եւ արդար դատատանի կերպարան մտցընելով Օսմանեան Տէրութիւնը (իբր թէ) գրպարտելուս վրայօք խօսիլ ու վերջ ալ այս ամենափափուկ խնդրոյն. որով Չամուրճեանին մեղի դէմ նետած ջամուրն ալ վրաներնուս թոթուելով՝ դուրէ իր բերնին վրայ նետուելով բերանը կը դոցուի, ու մէյմ՛ալ չի յանդգնիր ուրիշի վրայ ալ բերան բանալով ջամուր նետելու :

Կըսեմք, յայտնի է՝ որ ամեն Տէրութեանց մէջ կրնայ սպատակիլ այնպիսի իրողութիւններ եւ այնպիսի դարձուածքներ, որ հասարակութենէն ծածկեալ ու իրենց միայն վերապահեալ է, եւ որուն վրայօք իր

նպատակներէն մէկը ելնէ յանդգնելով որոնել ու
 հասկընալ ուղէ՝ քրէական յանցանաց ենթակայ կըլ-
 լայ . ուստի մեր բարեխնամ մեծազօր Տէրութիւնը
 ով գիտէ ինչ խորհրդով ու նպատակաւ մը՝ յիշեալ
 եկեղեցին Վատինաց ընծայեց 1856 թուին , բայց 'ի
 վերայ այսր ամենայնի՝ նոյն միջոցին միայն այս-
 քան մը իմացուեցաւ թէ՝ — Մալաքօֆի պատե-
 րազմին մէջ իյնող Պաղղիացի զօրաց համար՝ Վատի-
 նաց շնորհ մը ըրաւ Տէրութիւնը — . ինչպէս որ հը-
 րովարտակը կարգացուած ժամանակը Երուսաղիմայ
 դատարանին մէջ՝ նոյն միջոցին Աթուոյն թարգմա-
 նութեան պաշտօնը վարող Չիլինկիրեան Յակօբոս
 վարդապետը հոն ներկայ գտնուելով այդքան մը
 իմացած ըլլալով մեզի հաղորդեց , ու մենք ալ ան-
 կից աննելով՝ Նկարագրին մէջը դրինք : Այս մա-
 սին մենք Տէրութեան դէմ բան մը չեմք կրնար ը-
 սել , եւ ըսելու ալ իրաւունք չունինք . քանզի Տէ-
 րութիւնը՝ Հայոց Ազգէն կամ Վատինացմէն յամիրըշ-
 տակելով մեկուսն իրաւունքը ժխտելով միւսին տը-
 ւած չէ , ինչպէս որ Չամուրճեանը մեր վրայ մուր
 քսելով մը կը գոչէ . այլ իր Նախնիքներէն իրեն
 մնացած՝ եւ ինքը ստացուածոց եւ երկրին տէրը
 ըլլալով որով եւ իրաւանց տէր՝ որով որ ուզեց ա-
 նոր պարգևեց . ատոր ըսելիք մը չունիմք : Բայց
 մեր ցաւակցութիւնը միայն թէ ինքը հանդուցեալ
 բայց գործքերը կենդանի մնացեալ Յօհաննէս Պատ-
 րիարքին վրայօք էր , որ իմանալով Վատինք յիշ-
 եալ տեղը պահանջելին՝ ու ինքը զանցաութիւն
 ընելով ձեռքէն փախուց՝ քանի որ առիթը ձեռքն
 էր . ուստի եթէ ջանք ընէր՝ գուցէ մեր արդարա-

տէր Տէրութիւնը Ղատինաց ընծայելուն տեղը՝ մեզի կը շնորհէր յիշեալ Եկեղեցին։ Այսու ամենայնիւ մեզի ալ չի պարգեւեր նէ՝ ինչ պիտի կրնայինք ըսել, քանի որ ինքը Տէրութիւնը իրաւանց տէր է այսօր, ոչ թէ միայն երկրին տէր ըլլալովը՝ այլ Նախնեացմէն իրեն մնացած սեպհականութեանը մասին ալ . արդեօք ինքը Տէրութիւնը ու նորա դատարանը չը գիտէին անոր դեռ կանգուն կեցած դմբեթաւոր շէնքը, նաեւ կէօզլիւքլիւ Ռէշիտ բաշային 20 տարի առաջները՝ նոյն Եկեղեցին քովը շինել տրւած կիսականգուն միմարեկն . այլ եւ Սալահիյէ միտրիսի կոչուիլը, նա մանաւանդ անոր բոլորտիքը ունեցած վախըՖները . ասոնք հարկաւ գիտէին . բայց ինչպէս ըսինք, Տէրութեան ազատ կամքէն կախեալ է այս խնդիրը, որու որ ուղէնէ անոր կը պարգեւէ . ինչպէս որ նոյն միջոցներուն Ղատինաց ըրած պահանջմունքէն զրգռուելով Բ. Գոնէն Յոյներն ալ պահանջեցին, սակայն անոնց չի տուաւ, այլ Ղատինաց պարգեւեց . 'ի վերայ այսր ամենայնի մենք մեր իրաւունքը մէջ բերելով բանին եղելութիւնը պատմելու որ ըլլամք, կամ Տէրութենէն խնդրելու որ ըլլամք՝ միթէ յանցաւոր եղած կըլլամք, եւ միթէ Տէրութիւնը ու դատարանը սուտ հանած ու զրպարտած կըլլամք . . . ոչ ապաքէն այդ օրինակ իրողութիւններ ամեն ժամանակ եւ ամեն տէրութեանց մէջ ալ կրնայ պատահիլ, բայց ասով ոչ Տէրութիւնը եւ ոչ ալ դատարանը զրպարտած կը համարուի զանոնք պատմողը եւ ստուգապէս նկարագրողը . . . զիցուք թէ Պօլսոյ մէջ մզկիթ զարծած Եկեղեցի մը Օսմանեան Տէրութեան Նախնիքը

է. Մովը ինկողը օձի կը պլլուի. դատը վաստըկե-
լէն յոյսը կտրողն ալ սուտի կասաւինի » : Եւ հե-
տեւարար « անզգուշութեամբ եղած դործը՝ ակըն-
կալութիւն ըրած նպատակին բոլորովին հակառա-
կը կը ներդործէ » , ու խապար չունի խեղճը : Եթէ
ինձ չի հաւատար նէ՝ թող կարգայ ուրեմն եւ յա-
ճախ կարգայ այս առածներն ու խրատները , Հայաս-
տան լրագրոյն 59 թուոյն մէջ , որ շատ անգամ օգ-
տակար կրնայ ըլլալ իրեն . . . :

Հիմայ գանք Չամուրճեանին՝ մեղի դէմ ուղղած
յորդորին , եւ Երուսաղեմի միաբանութիւնը կերպիւ
մը գրգռելով մեր գիրքը հերքելուն վրայօք՝ ըրած
բանգագուշանքներուն համար խօսիլ :

Տասներորդ . Չամուրճեան Պատուելին վերոյիշեալ
դառանցանքները արտասիտիկէն եւ իր խելքովը
յաղթանակ կանգնելէն ետքը՝ կսկըսի վերստին իր
խելքին ու հմտութեանը ասաւինելով մեղի խելք
սորվեցընելու ելնել ու ըսել . թէ՛ « Միհրդատեան-
ցը կը յորդորեմք սիրողաբար , որ մինչեւ մէկ բան
մը գրելու չափ բաւական խելք եւ հմտութիւն
վաստըկի նէ՛ իր արուեստովը շատանայ . առ այժմ
գրիչը թող ձեռքէն ձգէ . աւելի աղէկ կընէ թէ որ
ատելութիւնը իր մտքէն ձգէ . այն ատենը գրիչը
ինքնին ձեռքէն կլինայ . որ մինչեւ հիմայ գրածնե-
րէն՝ որոնցմէ խիստ քիչ բան հրատարակած է բա-
րեբաղդաբար , յայտնի կերեւի որ ամեն գրածնե-
րուն թելադիր եղած է չէ թէ ազգին տեղեկութիւն
վաստըցընելու եւ վարժելու կամքը , այլ երբեմն մէ-
կի մը երբեմն մէկալին դէմ ունեցած կիրքը » :

Այս սուած խրատներէն եւ յորդորներէն շատ

Յոյները նուաճած ժամանակը իրեն դրաւած ըլլալով այսօր Տէրութիւնը ուրիշ մէկ աղգի մը շնորհ մը ընել ուղելով պարզեւելու որ ըլլայ, եւ նոյն իրողութենէն գրգռուելով Յոյնք կամ աղերս մատուցանելով մեծաղօր Տէրութեան խնդրելու որ ըլլան, եւ կամ նոյն իրենց նախնեացը ժամանակը ձեռքերնուն ինչպէս ելած ըլլալը պատմելով իրաւունք մէջ բերելով սահանջելու որ ըլլան՝ միթէ Տէրութիւնը գրպարտած կըլլան, ո՛չ ասպաքէն խնդիր մըն է ըրածնին, եւ ալ ո՛չ ասպաքէն անցած դացած եղելութիւն մըն է պատմածնին. եւ ահա սոյն օրինակաւ ու սոյն նպատակաւ էր եւ է մեր Յովակիմ Աննայի Եկեղեցւոյն վրայօք գրածնիս ալ :

Կարծեմք մինչեւ ցայս վայր բաւականէն աւելի հասկցուեցաւ եւ կամ կըցինք հասկընել մեր նպատակը Պ. Զամուրձեանին, թէ՛ ո՛չ Լատինաց իրաւունքը ժխտել էր Ե. Կ. ո՛չ ալ Երուսաղեմի հանգուցեալ Պատրիարքը բամբասել էր Ե. Կ. եւ ո՛չ ալ Օսմանեան տերութիւնը գրպարտել էր Ե. Կ. . . . ալ սոսկ իրեն բնական եղած սովորութիւնն է, որ շահասիրութեամբ կամ աղգատեցութեամբ եւ կամ ամարդի կենցաղաւարութեամբ որո՞ւ որ ձեռքը հասնի՝ կամ ջամուր կը նետէ եւ կամ մուր կը քսէ . . . Ե. ահա այսպէս բաներ Են իրեն խելիքն դատած ու քննած յօդուածներն ու գուրցածներն ալ: Բայց կըսեմք Զամուրձեանին, թէ՛ « թող գիտնայ այն բանը, որ ըտոր աշխարհք գիտէ. այսինքն՝ ստութիւնը եւ գրպարտութիւնը կաղ է՝ երբեմն ինքըզինք կը մատնէ եւ երբեմն խայտառակ կընէ. եւ վաստաբան մը անյաղթելի ընողը ճշմարտութիւնն

չնորհակալ եղանք . եթէ Նարեկացի սուրբ Հօր
« զայլս խրատեմ, եւ ես ինքնս անխորձ եմ », ըս-
ածին պէս յարածամ չի գտնուէր մեր Հայրապատիւ
եղբայրը, քանզի միշտ ուսանի եւ ուսուցանէ .
բայց երբէք 'ի գիտութիւն ճշմարտութեան ոչ ու-
սեալ է եւ ոչ ուսանի եւ ոչ եւս ուսուցանէ՝ մեր
տղմագործ վարժապետը :

Արսեմք եւ գոնէ մեր խրատներուն եւ յորդոր-
ներուն ալ խոհեմութեամբ քիչ մը ուշ գնելու ըլ-
լար նէ տասը տարիէ 'ի վեր, որն որ ոչ մեր նուա-
տութիւնը միայն, այլ եւ զինքը ճանչցող շատ մը
բարեկամներ ալ՝ թէ առանձին բանիւ եւ թէ հրա-
պարակական գրութեամբ իրենն տուեր եմք . բայց
եւ այնպէս ինքը յամառ ու շահատէր բնաւորու-
թենէն ետ կեցած չունի ու իր կամքը եւ նպատա-
կը պաշտէ . . . որով գժբազդաբար ցաւելով կըսեմք,
թէ իր վարկումն ստրկի մը ընելով եւ իր համա-
րումն ալ ազգին առջին կորսնցուց, ու մինչեւ ան-
գամ երեկեան տղայոց ու ագիտաց գրիչներուն ալ
խաղալիկ եզաւ՝ անհանդարտ եւ անկայուն ու ան-
սանձ գրչովը յարածամ իր ատելութիւնն՝ ազգա-
տեցութիւնն ու ագիտութիւնն եւ շահատիրութիւ-
նը յայտնելով ամեն իրաց մէջ, ինչպէս նաեւ այս
դատաքննութեանս մէջ : Արեւմտեան մեզք իրեն . . . :

Աստի փոխադարձաբար եթէ մեր խրատին եւ
յորդորին մասիկ կընէ նէ՝ ահա վերստին կըսեմք ի-
րեն, թէ շատ աղէկ կընէ, որ այսուհետեւ գրիչը
նեոքեմ ճգելով՝ իր հօրենական ժառանգութենէն
մնացած արուեստովը շատանայ . ըսել կուզեմ թէ
իւր ջամուրճիութիւնը նայի եւ անով սարսափ ու իր

ջամուրը շահէ. մինչեւ որ օրինաւոր մէկ բան մը գրելու ջախ բաւական խելք է. հմտութիւն վաստըկի նէ՛ գարձեալ կըսեմք իր արուեստովը շատանայ. (ինչպէս որ մենք ալ մինչեւ ցայսօր մեր արուեստովը շատացեր ու կը շատանամք կոր). եւ ոչ թէ իր հին արհեստին ու մականուանը ապերախտ եւ անհաւատարիմ գտնուելով իր նոր մականուանը համեմատ տրտուոցներ ընելով՝ հասարակութեան ձանձրութիւն տայ, եւ ալ իր տգիտութիւնը յայտնէ. քանզի բաւականէն աւելի եզաւ, որ իրեն երբեմն նետած ջամուրները թոթուեցինք վրաներնու՝ իր արհեստը ու իր հին մականունը իր վրայէն թոթուելով նետելուն նման. այժմ ալ եւ լեր շամչնալով իր նոր մականուանը համեմատ իր տրտուոցները հրատարակելով գլխացաւութիւն կուտայ յարածամ եւ հասարակութեան անդորրութիւնն ու հանգստութիւնը կաւրէ. որն որ մտիկ ընելու ժամանակ չունիմք, քանզի գլուխնիս ուռեցաւ . . . :

Եւ ահա ասոնք գիտնայ մեր Չամուրճեան Տրոյննց կամ գրոյննցը. եւ երբ ժամանակ որ այս խրատներս ընդունելու որ ըլլայ՝ յայնժամ կարելի է որ իր օջի ունեցած վարկումը փոքր ինչ տեղը գալով եւ իր ունեցած հմտութիւններն ալ իրեն մնալով ամենքըն ալ գլխի ցաւէն կը խաղըսին. եւ ալ սոս աղէկութիւնն ալ կըլլայ իրեն՝ որ իր տգիտութենէն զատ՝ աղղին թշնամի ըլլալն ալ այս օրինակ չի յայտնուիր մէյմ՝ ալ . . . :

Ուստի կրկին կըսեմք, եթէ խելք ունինէ՛ մէյմ՝ ալ ատելութեան, ազգատեցութեան եւ շահասիրութեան մտքով գրիչը ճեռք ջառնու ու այսպէս

խայտառակ չի հանդիսանայ . . . Այլ եւ սիրողաբար ամենահարկաւոր ու ամենաօգտակար խրատ մըն ալ կուտամք իրեն . այն է , որ քսան եւ հինգ տարիէ 'ի վեր աշխատութիւնը յանձն առնելով չինսած ուրուական Եկեղեցական պատմութիւնն ալ եթէ չէ լմնցեր նէ՝ թող դադրեցունէ այսուհետեւ գրելիքները . եւ պատրաստի եղածներն ալ (եթէ կան) թագելով զանոնք , ըստ որում Եկեղեցոյ վերաբերեալ գրութիւն՝ ուրեմն իրեն բարեկամ եւ դադափարակից եղող Հայ քահանայներէն զատ՝ Լատին միաօնարներն ու վիքարները եւ արքաները՝ ձիգութիւնն ու Բէնէդիկեան կարգին մեծաւորները եւ Հռոմի կարգինալներն ալ մէկտեղ հաւաքելով՝ անոնց վրայ վառաւորապէս հանգստեան ու հոգւոցներ ըսել տալով պաշտօն կատարել տայ . . . քանզի պատուհները երբեմն Զօնալի, երբեմն Երեւակի, եւ երբեմն հրապարակական թերթերու , նաև այժմ սոյն դատաքննական յօդուածին մէջ յայտնի երեւցաւ , եւ ասով առաւել եւս հասկըցանք ու համոզուեցանք՝ ազգին տեղեկութիւն վաստկցընելու եւ վարժելու կամքը ինչ ըլլալը . եւ նոյն տեղեկութիւնները ու անոնցմէ գոյացած պտուղները իրեն հետ մէկտեղ հօտելով գէշ գէշ բուրեց հօտը , ու ամենուս ալ ձանձրութիւն տուաւ . . . որոնցմէ կը մակարերեմք , թէ արդեօք տակաւին ինչ եւ որքան անտեղի եւ առասպելախառն գրութիւններով եւ տեղեկութիւններով ու վարժելու կամքով լեցուցած է իրեն պատմութիւնը . . . Ռեբեմն ինչպէս ըսինք ժամանակ չանցունելով քանի որ ողջ է նէ՝ ժամ յառաջ յիշեալ պատրաստութիւնները ընելով բաղժան կարգը կա-

տարել տայ. որպէս զի ժամանակին անոնք ալ երեւան ելնելով՝ այս օրինակ թէ խայտառակութեան ենթակայ չըլլայ, թէ ազգիս գրիչները չի հոգնեցընէ, եւ թէ տարածայնութիւն մ'ալ չի սերմանէ ազգիս մէջ. քանզի ինչպէս ըսինք, բաւականէն աւելի եղաւ, որ իրեն ջորնայու պտուղները վայելեցինք . . . ու ազգը այս օրինակ յետին շունչին հասուցինք . . . :

Մետասաներորդ. կը մնայ այժմ Երուսաղեմի միաբանութիւնը կերպիւ մը գրգռելուն վրայօք ալ խօսիլ ու վերջ տալ մեր դատաքննութեանը. ինչպէս որ Չամբարձեանն ալ զանոնք գրգռելով՝ կերպով մը վերջ տուած է իր դատաքննութեանը այսպէս ըսելով, « մեր միտքը՝ Նկարագիր, աղետից Երուսաղեմի գրքին ամբողջ հերքումը գրել չէր. ասիկայ Ս. Երուսաղեմի միաբանութիւնը աղէկ կըրնայ ընել. միայն գրքին ոգին հասկցընել էր, որով իմացուի ասոր օգտակար կամ անպիտան ըլլալը » . կեցիր ուրեմն, որ Երուսաղեմի ո՛չ թէ նորեկ միաբաններուն մեր գրքին հերքումը ցըցունեմ, եւ այս ալ ո՛չ միայն քեզի, այլ եւ քեզի պէս տգէտ ու ազգատեսոց եւ շահասէր պտտառարոյծներուն ալ . . . որ մեր ազգասիրարար աշխատութիւնը՝ շահասիրական ոգւով իբր թէ անկից շահ մը վնտռելու ելնելով՝ վեր վար քաշկռտեցին, որով իբր թէ անտեղի սուտ՝ յանդուգն՝ առանց ապացուցի եւ զրպարտութիւններով յեցուած կարծեցին եւ համարեցին մեր գրած աղէտալի նկարագիրը. եւ միանգամայն անոնք ալ քեզի պէս գրգիռներ տալով կուզէին՝ որ Ս. Երուսաղեմայ միաբանութիւնը ժամ յառաջ

հերքէ մեր գրածները . որպէս զի կըսէին՝ ժամանակին ճշմարիտ եւ ստոյգ պատմութեանց կարգը չի սեպուի մեր պատմութիւնը : Բայց սակայն զըմբողջաբար այս կարծածներնուդ հակառակ եւ ընդդէմը ելաւ , որոնք համեստութեամբ եւ երկայնմըտութեամբ ու խոհեմութեամբ մինչեւ ցարդ մեր գզրոցը պահեր էինք . սակայն այժմ հարկ կը համարիմք նոյն ազգասէր եւ ճշմարտասէր ու Երուսաղիմայ տնօրինական սուրբ Տեղեաց եւ ազգիս սեպհականութեանը եւ իրաւանցը համար հին առուրց աշխատող եւ գործակատար ու ներքին ցաւոց եւ անցքերուն վրայ տեղեկութիւն ունեցող կենդանի նահատակներուն ու վկայներուն առ մեզ ուղղած շնորհակալութեան ու ցաւակցութեան գրութիւնները հոս դնել . 'ի լուսաւորութիւն մտաց խաւարելոց եւ 'ի տեղեկութիւն վշտալի Հայրենասիրաց :

Բայց սա կուզեմք արդէն իմացընել մեր հակառակորդաց , որ եթէ անոնց մէջ առ մեզ ուղղեալ պատուասիրական ածականներ ու գովեստներ գրուին՝ չըլլայ թէ իրենց չար նախանձը չի տանելով զայրոյթ պատճառէ եւ խօսք մըն ալ անոր համար փախցունեն վերտոխն իրենց գրչէն : Այլ անոնց համար կըսեմք , թէ մենք այդ պատուանուններուն ոչ ցանկացող ենք , եւ ոչ ալ արժանաւոր . եւ քանզի գիտեմք իմաստասիրական առածն ալ որ կըսէ՝ — պատիւն ոչ է 'ի պատուեալն , այլ 'ի պատուողն — . նա մանաւանդ եթէ բովանդակապէս չի դնելու որ ըլլայինք՝ դարձեալ կասկածանաց եւ գրուցատրութեանց տեղի կուտայինք , վասնորոյ մեր դատաքննութեան վերաբերեալ խնդիրներն ու վկայու-

թիւններն ամբողջ գրինք, ինչ որ այն մասերուն վրայօք գրած էին մեզի :

Եւ ահա անոնց պատճէնը :

« Անձնանուէր նահատակիդ՝ Ազգիս սիրելւոյ նը-
ւիրեմ սէր հայրական եւ ողջոյն օրհնութեան :

« Զմատանցդ չքնաղ գործին ասեմ « Նկարագիր աղետից Երուսաղիմայ » անուն զթարգմանն ճշմարտութեան՝ հանդերձ քարտենիւ միով ընկալաք՝ շքնորհիւ մերս յատկեղ սիրելի Յարութիւն աղայ Ֆինկեանցւոյ . որոյ վասն ահա՝ նախ զ'ի խոր սրտիս մակարդեայն խինդ եւ ցինձ 'ի յայտ ածեալ ձերդ իրաւստո՞ իմաստասիրութեան՝ փութամ եւ 'ի ձօն շնորհակալութեան սրտիս՝ որպէս յառաջուստ 'ի ձեռքն Մասիս պատուական Խմբագրասպետի : Պատանիդ ուշիմ, չէ եւ չէ ինձ երբէք իրրեւ դամանս Եկեղեցականս ընդ մառախլապատ մշուշաւ մտացութեան անհետ առնել զիրաւագիծ գրչիդ դայս դիւցազն գործի առ ազգ մեր Հայկաժին . Հապան, որպէս ցարդ սոյնպէս եւ առ յապայտ շտեմարանել շտեմարանեցից 'ի ներքսնեակ սրտիս զերախտիսդ այդ անմոռաց, մինչ ցրարեհաճել երկնի ոչ եւ եթ յածումն 'ի լոյս սոյնպիսի փոքրագոյն տետրակացդ բաղձալեաց, այլ եւ մեծամեծացդ լինել ձեռնհաս . որպէս եղեալ է իմ 'ի մտի, բայց անմարթ առ այժմ :

« Արդարեւ կարի բարուք « Նկարագիր աղետից » հանդիսացուցեալ է ձեր դայս տետրակ պանծալի, եւ զզլխովն հիքոյս զանցիցն ըստ բաւակոնն ճառեալ թէպէտ, բայց իձիւ թէ ծանուցեալ էր ձեր

նախ քան զայս գրքոյկ զսկիզբ կանուղ զայսպիս-
 ւոյ աղետից, իցիւ թէ խորհրդակցեալ էիր միով քար-
 տենիւ եւ եթ առ մերս նուաստութեան. ահա յայն-
 ժամ էր լինել տետրակիս հայելի՝ նա մանաւանդ կա-
 տարեալ պատկեր աղետից. զի չեւ է ձեր նկարագ-
 րեալ զընդդէմ հաւատոյ՝ օրինի՝ վարուց՝ եւ բարուց
 արարան, որք յաւէտ քան զայսոսիկ աղգեցութիւ-
 նըս գործէին 'ի սիրտս Ազգասէր ընթերցողաց, բայց
 որպէս եւ իցէ զայնոսիկ ընդ պատեհագոյն առթիւ
 իւրք արկեալ՝ բարձրացուցից առ Հայրն խաղաղու-
 թեան զաղօթս մեր բանաքի՝ գէթ 'ի խաղաղացու-
 մըն խոտովութեանց յուղելոց այժմու եւ յընտրութիւն
 այնպիսի իրաւախոհ գլխոյ միոյ, որ զշահ եւ զօգուտ
 Աթոռոյն նա մանաւանդ Ազգիս քաջ գիտացեալ
 մարթիցի վարել զմիաբանութիւնսն ողջոյն ըստ հա-
 ճոյս կառավարութեան երկնից . . . » :

« Մնամ աղօթկեր ձերդ անգին կենաց երկարա-
 տեութեան » ,

1864 Դեկտ. 8

'ի Լիւստրա:

Խ. Մ. Տ. Մկրտիչ Եպիսկոպոս
 Միաբան Սրբոյ Երուսաղէմի եւ
 այժմ Գաղատիոյ Ս. Վանուց:

« Ի Քրիստոս Ամենասիրելիդ իմ Պ. Թաղէոս Մի-
 հրրդատ Տ. Աստուածատուր Միհրդատեանց ,

« Ներկայիւս ողջունել փութալով զՁեր մեծա-
 յարգ սիրելութիւնը, անհնարին է ինձ գովեստ գրը-
 ուատեաց չի հիւսել այն աղգասիրական ոգւոյն զոր
 դուք 'ի տղայ տիոց 'ի ձեզ կը կրէք, մանաւանդ
 ուրախ իսկ եմ քանի որ օր ըստ օրէ արդիւնաւո-
 քեալ փայլած կը տեսնեմ ձեր քրտնաջան երկասի-

սիրութիւնքը յօգուտ եւ 'ի յառաջադիմութիւն ազգիս :

« Անպատուակ կըսեմ ազնիւ սիրելիս . դուք Միհրդատեան տոհմին ընտրելագոյն զաւակ . այնպիսի հայրենասիրութիւն մը 'ի ձեզ կը տածէք , որ ինքնին դրուատեաց արժանի է . եւ հարկ չէ բնաւ մտացածին գովեստներ հիւսել ձեր ազգասիրական ջանիցը , որ պայծառ կը փայլի . եւ ահա մինչեւ ցարդ 'ի լոյս ընծայած ազգօգուտ երկասիրութիւններդ իսկ եւ իսկ կատարեալ ապացոյց են ձեր հայրենասիրական ոգւոյն վեհութեան եւ ազնուութեանը . եւ արդէն ճշմարիտ ազգասիրաց խումբ ձեր ազգասիրական ջանից մեծապէս շնորհակալ է . զի միշտ յօգուտ եւ 'ի յառաջադիմութիւն ազգիս 'ի բարին եւ 'ի գեղեցիկն թեւակոխել վաստակարեկ կը տքնիք :

« Ապացոյց խօսքերուս ձեր այս օրերս 'ի լոյս հրատարակած եւ մէկ օրինակ առ իս ընծայած « Նըկարագիր աղետից սրբոյ Նրուսագեմի » անուն պատուական երկասիրութիւննիդ , զոր բերկրանօք ընդունելովս՝ ոչ երբէք անփոյթ կըլլամ իմ շնորհապարտ զգացմանցս հետ փութալ եւ անկեղծ յարգանքներս հանդերձ սուրբ օրհնութեամբ կանխաւ յայտնելու :

« Եւ որովհետեւ 'ի զաւակաց սրբոյ Աթոռոյն եւ 'ի միաբանութենէ սրբոյ ուխտին եմ , չուզեցի պարզ ընթերցմամբ շատանալ , այլ ծայրէ 'ի ծայր երկիցս եւ երկիցս կարդալով ձեր սրբոյ Աթոռոյն նկատմամբ բրած աղետից նկարագրութիւնը ըստ ամենայնի ճշմարիտ դտայ (վասն զի մեծ մասին ականատես

խակ եմ) ուստի եւ անզուգական գովեստից արժանաւոր :

« Սակայն Ս. Աստուածածնայ Արովբէասպաս դերեզմանին կից Հայոց ազգիս սեպհականեալ Ս. Սեղանին վրայօք եղած բանակոռութիւնները եւ դըրամավատնութիւնները, ձեր 'ի «Նկարագրիդ» անյիշատակ թողելը կարծեմ եւ վստահ իսկ եմ որ յանգէտս եղած չէք . ուստի կը փափաքիմ որ անշուշտ օր մը եւս զայն ալ ձեր մէկ ուրիշ աշխատութեանց մէջ կը յիշատակէք, առաւել 'ի յայտ ածելով այն անցքերը որ բազմիցս Ս. Աթոռոյն վրայ տեղի ունեցած է . եւ այն կորուստները որ 'ի Նկարագրիդ յիշատակած էիք . վստահ եմ, ուստի եւ կը վստահայնեմ զձեզ, եթէ Ազգային օրհնեալ Սահմանադրութիւնը 'ի շնորհս Օգոստափառ եւ Մեծազօր Կայսեր մօտ օրերս վաւերանայ, անշուշտ Ազգային Կեդրոնական Վարչութեան ձեռնհաս իշխանութիւնը կարող պիտի ըլլայ ոչ երբէք ջանք խնայելու նոյն կորուստները գտնելու համար, մանաւանդ՝ այն գիտողութիւններդ (Ս. Աթոռոյն եւ Քիւրտիստանի նկատմամբ) որոնք որ ճշմարիտ եւ լուսաւոր ոգւով բրած էք . չունիմ ինչ գրել ձեր սիրելութեան անոնց վրայօք . միայն զանոնք եւս կը յանձնեմ Ազգային կեդրոնական Վարչութեան եւ միանգամայն ուսումնասէր ազգասիրաց ուշադրութեանը, որք գիտեն բարեք խորհիլ եւ ըստ արժանւոյն տնօրինել յօգուտ սրբոյ Աթոռոյն եւ 'ի բարեկարգութիւն եզկելի եւ տարտամ վիճակին այնմիկ . որոց վասն սըն միշտ բազկատարած կամ ազաչաւոր առ յաւիտենականն Աստուած :

« Հուսկ ուրեմն իմ շնորհակալութիւնքս առ ձեզ
դարձեալ կրկնելով կամ եւ մնամ վասն Ձեր եւ վա-
սըն Ազգիս բարեացակամ եւ ազօթարար ,

1862 Մարտ 5,

Արիստակես Եպիսկոպոս

ի Խարբերդ :

Խարբերդի :

« Արժանամեծար եւ ուսումնապերճ Միհրդատ-
եան Պ . Թադէոս պատուական սիրելւոյն Տիրա-
նուէր ողջոյն :

« Առ մեզ զրկած սիրալիր նամակդ ընկալայ ,
որով ըստ օրինի ձեր ազգասէր մտաց դատողութե-
նէն գոհ եմք : Թէպէտ մեր կողմէն զիր չէք ստա-
ցած — կը գրէք — որուն համար տարակոյս էք ,
թէ մեք ձեզմէ վշտացած ըլլամք . կամ ժամանակի
պատահմունքներէն . . . այլ դուցէ հասած չէ ձեզ
դժբազդաբար մեր երկու շնորհակալութեան նա-
մակները : Նաեւ ձեր աշխատանքը ՚ի մասին սրբոյ
Աթոռոյս թէ հաճելի եւ թէ ոչ՝ ազգասիրաց սրտին
արձագանքները թող երթան լուսեայն վկայեն , ո-
րուն համար շնորհակալութեան նամակնիս գրեցինք .
վասն զի օրինաւոր եւ վաւերական գծագրութիւնք
միշտ ազգի օգտին սիրելու եւ անոր հեղինակն պա-
տուելու է , որով ազգի պատիւն ու իրաւունքը ճա-
նաչուի :

« Ապաքէն միաբանութեանս կողմանէ պատաս-
խանատուութեան իրաւասութիւնը տակաւին մեզմէ
կախում չունեցաւ , որպէս զի բացարձակ պատաս-
խան ստանայիք եւ որով հակառակօրդք կորագլուխ
ըլլային . . . :

« Այլ այսու ամենայնիւ սուրբ Տեղեաց սէրը մե-

բազնեայց ամեն մէկին սրտին մէջ խոր տպաւորուած՝ կրնայ խմացունել միաբանութեանս պատիւ՝ կամ անոր հակադարձը . սակայն ճշմարտութեան եւ ազգի օգտի համար աշխատողաց պատիւ պէտք է արդեօք, թէ անարդանք . . . թէպէտ եւ հակասական է դրութիւնս . . . :

« Եսայի վարդապետ եղբօր եւ մեր առնինն եղած անձնական զբաղմունքը ժամանակիս համեմատ շատ բանէ ետ ձգեցին զմեզ . բայց ներգութիւն կը խնդրուի » :

Ի վերայ այսբ ամենայնի ձեր աղօթքուտ յառաջադիմութեան եւ բարեմասնութեանը յաւէտ փափաքող՝ յաւել քան զայս, ողջ լեր 'ի Տէր » :

Ի սուրբ Երուսաղեմ. 1865 Մարտ 54 :

յԱռաքելական Արոռս Սրբոց Յակոբեանց :

Ն. * * * միաբան

Սուրբ Երուսաղեմի :

Ահա ասոր մէջն ալ երեցաւ մեր գրած աւելուկութեանց ճշմարիտ եւ ստոյգ ըլլալը, եւ միանգամայն մեր Նկարագրին (54 թիւ) ծանօթութեանս մէջ նշանակուած ճիշդութեան վերստին գործածուիլը, եւ սոյն նամակաւս յայտնուիլը, որ երկու անգամ շնորհակալութեան նամակներ գրեր են առ մեզ, բայց տակաւին չէ հասած մեր ձեռքը . բայց կարծեմ ասոր մէջի գրուածներն ալ բաւական է . գուցէ հակառակորդք վերի դրուած նամակներուն տիրոջ սրբազան Հարց համար կարկատեն վերըստին թէ՛ անոնք Միաբանութենէն ելած են . . . :
Կրտսեմք ահա միաբանից մէջը տակաւին գանուող

Արժանատուաբար Անդամոց մէկուն առ մեզ ուղղած
ցաւակցութեան նամակին օրինակն ալ . գուցէ ա-
սով կը բաւականնան ճշմարտութեան դէմ աքացող
դժոխորտլայն լախիլիզողները եւ Ազգիս տունը քըր-
քըրող պատառարոյծ եւ շահասէր խաբեբաներն ու
անհաւատները եւ գուցէ ասով կը սթափին
իրենց թմբութեան եւ մահու քունէն արթննալով եւ
միանգամայն ասի կարգալով կարելի է ամհնանայն
համառօտ բայց վսեմ գրցուած քէն , թէ « ճշմարտու-
թեան եւ ազգի համար աշխատողաց պատիւ սէտք
է արդեօք , թէ անարգանք . . . » : Որն որ դժբաղ-
դարար այս վերջինը պատահեցաւ մեզի աղգատեաց
անձանց երեսէն . բայց յամենայնի տարայց , դի ըզ
Քրիստոս շահեցայց . . . :

Նաեւ հետեւեալ վկայագիր յայտարարութիւնն
ալ արժան կը համարինք դնել , որն որ մենք խմա-
նալով շուգեցինք նոյն միջոցին հրատարակել տալ .
քանզի մէյմը որ ցաւած էինք . մէյմալ որ ասանկ
գրութիւններ ուրիշ անձինք ալ նոյն միջոցին աղ-
գասիրաբար գրելով լրագրաց տունն ալ նէ՛ բայց
իրենց արհեստակից խթիւճեան Աբրապետին մէջի
գրուածները դպչելուն համար , չընդունեցին , որ-
սպէս զի առաւել եւս հակառակութեան տեղի չի
տրուի , եւ կամ ինչ եւ իցէ ուրիշ նպատակմը կար
որն որ իրենց վերապահեալ էր . . . վասնորոյ այս
գրութիւնը մենք ձեռք բերած ըլլալով յայնժամ
մեր քովը կեցած էր իբր պահեստի , որ է այս :

« Արժանայարգ խմբագիր Միւնստրի Էրճիաս
լրագրոյ »

՚ի Կոստանդնուպօլիս . 4862 յունվար 24.

« Սէր անուն հանդիսին 44, եւ Մասիս լրագրոյ
548 թիւերուն մէջ Միհրդատեան Պարոն Թաղէոսին
« Նկարագիր աղետից երուսազեմի » գրքին մէջ յիշ-
ուած անուրանալի ճշմարտութիւններուն համար
« անտեղի յանդուզն եւ առանց ապացոյցի են » ըս-
ուած, եւ այսու պատճառաւ նոյն գիրքը ազգայնոց
մէջ վէճի նիւթ դարձած ըլլալը ցաւօք սրտի տես-
նելով, ՚ի խղճէ եւ ՚ի ճշմարտութենէ շարժեալ՝ յի-
շեալ գրքին վրայօք բացուած վէճը ողջմտաբար
բաճնալու եւ տարակոյսները ջնջելու համար, կը
փութանք ներկայիւս վկայել բարեմիտ հասարա-
կութեան առջեւ, թէ նոյն գրքին Հեղինակին բո-
լոր պատմածները անժխտելի եւ աներկբայելի ճշ-
մարտութիւններ են . եւ թէ ուրիշ շատ մը իրողու-
թիւններ ալ կան, զորս հայրենասէր Հեղինակը թե-
րեւս բարի նպատակաւ մը չէ նկարագրած իւր
գործին մէջ :

Ուստի կը յուսամք՝ որ յիշեալ լրագրաց խմ-
բագիրք մեր այս հրատարակական վկայութիւնը եւ
խոստովանութիւնը լսելով, կը վերջացնեն իրենց
անվայել հակառակութիւնը, եւ առանց կուսակցու-
թեան ոգւոյ եւ թեւադրանաց ունին դնելոյ՝ գրքին
մէջ նշանակուած աղետալի եւ ողբալի ճշմարտու-
թիւններուն՝ հաւատք ընծայելով կը խրախուսեն
զԱզգային Վարչութիւնը, որ անոր մէջ յիշուած Ս-
Աթոռին անկարգ եւ ազգախնաս ընթացքները ուղ-

դելով եւ միանգամայն առաջարկուած ազգօգուտ խնդիրներուն ալ կարելի եղածին չափ գործադրութեանը հոգ տանելով ազգին երախտապարտութիւնը գրաւէ . որոյ եւ մեք իսկ մնամք անձկանօք փափաքող :

Ն. Յակոբոս վարդապետ Զիլինկիրեան Միաբան Ս. Երուսաղէմի ականատես վկայ գոյով ստորագրեցի :

Ն. Վանահայր Կիպրոսի Աբանաս վարդապետ ականատես վկայեմ :

Ն. Պետրոս վարդապետ Բագվանեան Էրբեմն միաբան Ս. Երուսաղէմի վկայ եմ ականատես գոյով :

Այլ եւ հետեւեալ յօդուածն ալ Միութիւն սանձանադրական հանդիսին Բ. Տարի 1861 Նոյեմբեր 15. թիւ 6. ին միջոցաւ հրատարակութենէն առնելով կը գնեմք հոս , որուն գրին է Տիգրան Հայրապետ Թ. Սալաւանեանց պատուելի Զմիւռնացին , որ ինքը ութը տարի անձամբ Ս. Աթոռը կենալով՝ եւ հոն վարժապետութեան ու գրագրութեան պաշտօնը վարելուն համար՝ իրր ականատես գրքին մէջի իրողութեանց կը վկայէ այսպէս :

ՆԿԱՐԱԳԻՐ ԱՂԵՏԻՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

« Այս վերնագրովս տպեալ գիրք մի ընկալանք Պօլիսէն , որ բաւական ընդարձակութեամբ 247 երեսէ բաղկացեալ է . հեղինակն է . . . Թաղէոս Միհրրդատ Տ. Աստուածատուրեան Միհրդատեանց , պարունակած նիւթն է 1820 թուականէն մինչեւ ցվերջ Նոյեմբերի 1860 Երուսաղիմայ Աթոռոյն անցքը ,

գլխաւոր նպատակ դնելով իւրեան նոյն Աթոռոյն վերջին Պատրիարք Յովհաննէս Արքեպիսկոպոսին բարոյական նկարագիրը : Գրեթէ ծայրէ ՚ի ծայր աչքէ անցընելով ուրիշ բան չենք գտած մէջը՝ ԲԱՅՅ ՄԻԱՅՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ, որ զգուշաւոր ընթերցողին աչքին կերելի ամեն տողերուն մէջ : Անիկայ մեզ որքան ալ ցաւալի է, բայց միանգամայն եւ անհրաժարելի պարտք մի համարուած է ներկայ դարուս մէջ, որ բարերարը իւր երախտեօքը, ազգասէրն իւր ազգասիրական արդիւնքներովը, եւ ազգատեսայն ալ իւր ազգաւեր եւ ազգավնաս գործքերովը յայտնուի հատարակութեան եւ իւրաքանչիւրն ըստ իւր գործոց հատուցմունքն ընդունի պատճաթեան մէջ եւ անաչառ քննադատութեան դիմացը :

« Մենք իբր ականատես իւր պատմածներուն, կը վկայենք որ ուրիշ շատ ճշմարտութիւններ կամ գովելի խորհրդով մը եւ կամ իւր հետազօտութեանցը ծանօթ չըլլալով թերի թողուցած է. բայց այսչափ գրածն ալ կարծեմ բաւական ազդեցութիւն պիտի ընէ անոնց՝ որոնք կը կարծեն թէ իւրեանց գործքերը իրենց մահուանը հետ վերջանալով անոնց յիշատակն ալ հետերնին անմտացութեան մէջ պիտի թաղուի :

« Պարտք մի կը դնեմք բոլոր ճշմարիտ ազգասիրաց ձեռք ձգելու յիշեալ պատուական աշխատութիւնը, եւ կը յուսամ որ հեղինակին եւ մեզի հետ պիտի ախոսայ եւ պիտի սգայ անցեալ ժամանակին մէջ ազգային գործոց անխնամ եւ անխոհեմ անօրէնութեանց վրայ, որոնցմով գլխաւորապէս Ս.

Երուսաղիմայ Աթոռը վտանգուած է, եւ մեղի հետ միատեղ թող ուրախանայ դարձեալ, որ Ազգային օրհնեալ Սահմանադրութիւնը վերահաստատուելուն անկարգ եւ անոճ կառավարութիւնը հիմնական կանոններու վրայ հաստատուելով թէ ազգիս ուսումնարանները եւ թէ վանքերը յառաջադէմ շաւղի մէջ պիտի մտնեն, եթէ ընդունելի ըլլայ յարգոյ Միհրդատեանցին յայսմ մասին իւր գրքին մէջ բերած գաղափարները ու կարծիքները. որ մեզ մեծագոյն մասամբ կարեւոր եւ գործադրելի երեւցաւ . . . » :

Տ. Հ. Թ. Ստվալանեանց:

Եւ ահա մեր պատկառելի վկայներն ալ՝

Ուրեմն կըսեմք՝ թէ Չամբրճիին՝ թէ Իւթիւճիին եւ թէ ով ոք եւ իցէ մեր գիրքը կասկածի տակ ձգելով մէջի պատմուած իրողութիւնները սուտ անտեղի՝ առանց ապացուցի, եւայլն եւայլն ըսող եւ բարբանջող պատուելիներուն, թէ՛ կամ այս վրկայութիւնները տեսնելով ամչնան, եւ կամ համոզուելով եւ պատկառելով այս վերոյեղեալ վկայութիւններէն՝ այսուհետեւ եթէ հողի ու խիղճ եւ ազգասիրութիւն ունին՝ ու ճշմարտութեան պաշտպան կենալ կուզեն նէ՝ ուրեմն թող քաջալերեն եւ խորախուսեն մեղի հետ զԱզգային Վարչութիւնը եւ ձեռնհաս ազգասէր երեւելի անձինքները, որ իրենց ուշադրութիւնը գրաւելով մեր աղետալի նկարագրութեանց վրայ՝ անոնց դարմանին նային, եւ ինչ որ պէտք է նէ անօրինեն, եւ թողուն իրենց հակառակասիրութիւնները ու շահասիրութիւնները եւ

տարածայնութիւնները , որով աւելի եւս տառապանաց եւ արկածից տեղի չի տան Ս. Աթոռին . եւ ալ թողուն իրենց տգիտութիւնը ու դրպարտութիւնը եւ ասերախտութիւնը՝ որով եւ զմեզ չի թշնամանեն անխղճարար եւ անխոհեմարար՝ ասանկ թագուցեալ ճշմարտութիւնները եւ ազգիս աղէտքները ստուգապէս եւ անխղմնարար հրատարակութեամբ երեւան հանելուս համար . եւ զիսնան՝ որ ճշմարտութիւնը երբեմն թէպէտ ընդ զրուանաւ կը ծածկի՝ բայց ոչ ամենեւին ՚ի թագստեան կը մնայ , այլ անակնուենելի պահու մէջ եւ ամենաստորին անձի մը ձեռք երբեմն երեւան ելնելով՝ աշխարհիս բոլոր խարեքաները ու բոլոր իմաստունները՝ արիբերան կընէ . . . ապա թէ ոչ եւ եթէ իրենց ձեռքերնուն բան մը ընել չի դար նէ՝ կազաչեմք իրենց , որ եթէ ազգ են եւ ազգը ու իրենց եկեղեցին կը սիրեն նէ՝ մեզի անպարսաւ թողելով եւ մեզի հետ իրենք ալ սզակից եւ լաղակից ըլլալով համբերութեամբ տանին , մինչեւ որ վերին նախախնամական զթութիւնը այցելութեամբ այց արասցէ՝ ոչ միայն Ս. Աթոռոյն Երուսաղեմի , ալ եւ բովանդակ վանորէից մերոց ընդ նմին եւ Հայ Ազգիս , ամէն :

Գանք հիմայ երեւելի միանդամայն եւ տազակալի ու քսամենելի խնդրոյն մէկն ալ լուծել որ պարաքերնիս կատարած համարութիւնք , այն է երբեմն նրաշաքոծութեամբ եւ այժմ նրեշագարծութեամբ փառաւորեալ եւ հոչակեալ մեծագործ եւ մեծամամբաւ Տիրանակերտցի Ակրաիչ վարդապետ կոչուածին վրայօք խօսել , որուն համար վերոյիշ-

եալ հակառակասէր եւ շահասէր անձինք թէպէտ
եւ յականէ՛ յանուանէ՛ անոր վրայօք մեզի դէժ բան
մը չեն գրած , բայց սակայն՝ մէյ՛ր որ թէ իւթիւ-
ճեանին եւ թէ Չամուրճեանին սրշտօգանած բարե-
կամին ըբալէն զատ (եւ այս ալ թէ գիտութեամբ
եւ թէ անգիտութեամբ եղած ըլլայ) , այլ եւ թէ
իրենք եւ թէ՛ Սէր հանգիտին խմբազիրը՝ մեր գըր-
քին մէջը նշանակուած իրողութիւններուն ու սատ-
մութիւններուն համար (ինչպէս քանիցս կրկնեցինք)
անաեղի՛ յանդուզն՛ եւ առանց ապացուցական վը-
կայութեան գրուած համարելուն՝ ուստի յիշեալ
անձն ալ եւ անոր գործքերն ալ համառօտակի գըր-
քին մէջը նշանակուած ըլլալուն համար՝ հարկ հա-
մարեցի սօրացուցական վկայութիւն մ'ալ անոր վը-
րայօք բերել : Մէյ՛մ'ալ որ յիշեալ անձը վերստին
կօտանդնուպօլիս գալով՝ անդին ասդին իննալով
գայթակղութիւն տալէն ու մեզի սարսաւելէն զկնի՛
մինչեւ անգամ մեր երեսին ալ յանդգնելով՝ աներե-
սութեամբ մը իբր թէ՛ իրաւունք եւ զատ սահան-
ջելու գիտաւորութիւնը հասկցընել ուզելով՝ մենք
ալ մեր երկիւղէն ստիպուելով՝ մտածեցինք թէ՛ չըլ-
լայ թէ՛ այս էակը իր շատ մը ըրած սքանցելանը-
րաչ ազդեցութիւններէն մեզի ալ՝ սքանցելիք մը
ցոյց տայ , որով եւ մենք ալ ՚ի կորուստ մատ-
նուինք ըսելով՝ սարսաւորեցայ իրեն ըրած սքան-
ցելագործութիւններուն հազարէն մէկ քանին մեր
ձեռքը գտնուած ըլլալով հոս նշանակել՝ ու զատը
վճռելն եւ իրաւունքստայն ալ հոտարակաց գատա-
տանին ձգել , որ եթէ անգիտութեամբ անոր ամ-
բաստանութիւններուն հաւատք ընծայող կան նէ՛

կարդան մեր ձեռքը՝ գանուած վկայագիրները եւ այնպէս դատեն . ըստ որում մենք յիշեալ անձին հետ ոչ անձնական վէճ մը ունէինք , եւ ոչ ալ զինքը կը ճանաչէինք . այլ ինչ որ իրեն համար լսեր եւ տեսեր եւ արժանաճառատ անձիքներէն ալ լմացներ էինք 'նէ' անոնք միայն յիշեր էինք զբժին մէջը՝ ճշմարտութեան իրր վկայ կենալով , որպէս զի որո՞՞մը ցորենէն դատուի . եւ ապա 'նոյն խկ դորձքերէն ենթադրելով մեր կողմէն ալ խորհրդածութիւններ՝ ու քանի մը գիտողութիւններ աւելցուցեր էինք , երեւակայելով որ՝ դուցէ թէ ինքը անալ կը բուսականանայ ու իր վարքը կը շակէ , բայց գծրադարձար աղարդիւն ելաւ մեր այս ըրած խոհեմութիւնը . . . ըստ որում Աստուածային վճիռ է որ կըսէ , « չիք ինչ 'ի ծածուկ որ ոչ յայանեսցի , եւ չիք գաղտնի որ ոչ ծանիրցի , այլ եկեսցէ 'ի յայտ » . վստահորոյ եւ ահա այս վճռոյն համեմատ ինքը իրեն դատախազ ըլլալով՝ իր դորձքերը եւ ըրած անօրէնութիւնները՝ ինքնիրեն երեւան հանել կուզէ անխոհեմութեամբ Եւ մէյմ'ալ լմանալով որ այս երեւելի խարերան յանդուդն համարձակութեամբ ոչ միայն Ազգային Պատրիարքարանէն սրատիւ եւ դատ կը սրահանջէ , երբեմն Յակոբ հանգուցեալ սրբազան Պատրիարքին ըրածին նման , այլ եւ ճամաչելով ալ Հայեկի աշխատութեան Սկրտիչ վարդապետի Տիգրանեան անուհով ալ համարձակեր է՝ իրեն 25 տարիէ 'ի վեր ըրած աաղակալի եւ գաղբալի արարքները եւ շարաթոյն ու ժանտալից դայթակղութիւններն ու տարածայնութիւնն ճնշը՝ իրը թէ հարադորձութեամբ եւ խորհա-

խուժեալը մը փաստարանական կերպերով հերքել՝
այս ոչխարաղբեստը . . . մանաւանդ վրայի զգես-
տը մերկացողը . . . իբր անմեղ գառնուկ մը ձե-
ւացընել ուղելով ինքըզինքը արդարացընելու ու
սրբացընելու եւ գուցէ տօնելի ալ ընելու ձեռք
զարկիր է յիշեալ Հայէլիին մէջը . որով անշուշտ
առատել եւս գայթակղութեան եւ տարաձայնութեան
տեղի մըն ալ տխրի տայ եւ վէճ ու կռիւ մ'ալ պիտի
յարուցանէ վերտին Ազգիս մէջ* . ուստի ինքը դեռ

* Ար լսեմք, թէ այս գործին հրատարակուելուն տակաւին
պաշտպանութիւն և գուցէ ձեռնառուութիւն ընող անձինքներ
ալ կան. նաև կը լսեմք որ մեր հակառակորդներն ալ իբր թէ
իրենց ձեռքը գործիք մը ընելու և կամ մեղի դեմ յարուցանե-
լու նպատակաւ մը կը քաջալերեն կոր զինքը, որ եթէ կարելի է
նէ՛ անկից օդուտ մը ելնէ իրենց՝ այն է, կամ իրենց ձեռքը ա-
ռարկայ մը ըլլալով՝ մեր գրած ստացուցական ճշմարտութիւն-
ները (եթէ կարելի է նէ) հերքուի՝ որ իրենք ալ ամօթով եղած
չըլլած հասարակութեան առջև (որն որ եղածը եղած է . . .), և
կամ թէ շահին շահասիրութեամբ յիշեալ անձէն քանի մը ոսկիներ
առնելով ու իրենց հրատարակական թերթերը անտեղի գրու-
թեամբ լեցընելով . . . : Արսեմք քանի որ այս դէշ ընթացքը մը-
տաւ նէ աղդերնուս մէջ, անհնարին է՝ որ ճշմարիտ և ստոյգ ե-
ղելութիւնները երևան ելնելով՝ չարն ու բարին ճանչցուի, ու
ամենքն ալ իրենց ըրածին փոխարէնը ընդունին. թէպէտ և այս
գէշութիւններն ընողները սակաւաթիւ են, բայց ինչ օդուտ որ
աղդեցութիւննին կամ լաւ ևս փրաննին մեծաթիւ է տղիտաց և
աամկաց առջև. ըստ որում հրատարակական թերթ ունենալ-
նուն համար՝ շատ մարդիկ միամտաբար կարդալով կը խարուին՝
երբեմն անոնց հրատարակներէն և փրոցուողց ճարտարաբա-
նութիւններէն. բայց փորձը առնող և խոհական անձինք գիտեն
այնպիսի գրուածներուն յարգը և արժէքը քանիի ըլլալը, ուստի
եթէ մինչև անգամ կոկորդնին ալ պատու տելու ըլլան այսուհետև

մեղի հետ դատը չի բացած եւ կամ տակաւին իր
Հայեւիին մամուլ տակէն չի հանած՝ իրեն արդէն կո-
տրրտած Հայեւիին մէկ քանի կտորները կը գնեմք
հոս . որուն մէջ ոչ թէ միայն ինքըզինքը տեսնե-
լով իր կերպարանքէն ամենայ (եթէ ամենայու երես
ունի . . .) այլ եւ միամտաբար իրեն թակարթին մէ-
ջը իյնող եւ իրեն հրեղէն չըսեմ թիւնաւոր լեզուէն
խարուող ջերմեռանդ եւ բարեպաշտ անձինքներն
ալ համոզուին . եւ ըստ որում կը լսեմք , թէ ոչ
միայն յիշեալ իր Հայեւիին հանելու գիտաւորութիւն
ունի , այլ եւ միշտ կը բողոքէ թէ Ազգային Պա-
րիսարքարանը եւ թէ ով ոք որ տեսնէ , ըսելով եւ
զոչելով թէ՛ — եթէ յանցաւոր եմ նէ՛ յայտագիր
կամ վճռագիր մը (եւ Ֆրա) կախեցէք ճիստ՝ եւ
անձամբ կերթամ Պօլսոյ կամուրջին գլուխը կը կայ-
նիմ , որ անցեող դարձող մարդիկ զիս տեսնելով ե-
րեւիս թքնեն , եւ այլն — : Ապա ուրեմն եւ ան-
թող բաւական ըլլայ հետեւեալ յայտագիրը , այսին-
քըն՝ եւ Ֆրան, որն որ 1858 թուականին վերջերը
Պատրիարքարան եկած ըլլալով որուն օրինակը 1859
թուին կերպիւ մը մեր ձեռքը անցած ըլլալով կը դը-
նեմք հոս . եւ ասով կարծեմ թէ սա աղէկութիւնն
ալ կըլայ՝ որ կամուրջին գլուխը երթալու կայնե-
լու ձանձրութենէն ալ ոչ թէ միայն կը լսալով , ալ
եւ երեսը թքնել տալէն ալ . հետեւաբար քաւարու-

մտիկ ընող չի կայ . . . և գէշն սա է որ՝ եթէ ճշմարիտ և ստոյգ
բան մըն ալ երբեմն հրատարակելու որ ըլլան՝ անոնք ալ անոնց
կարգը դատուելով՝ դժբաղդաբար անոնց ալ մտիկ ընող չի պետի
ըլլայ այսուհետեւ . . . :

Թիւնն ալ կըլլայ՝ որ միայն անկից անցնող եւ դարձողները չեն կարգար դանի, հապա բոլոր աշխարհ ցրուելով՝ եւ ամենքն ալ կարգալով կրնան իրեն ինչ ըլլալը հասկանալ եւ համոզուիլ, եթէ մօտերս Մասիսի 589 թուոյն միջոցաւ Բալուէն գրուած բազմաթիւ ստորագրութեամբ բողոքոյ յայտագիրը եւ վկայութիւնը չիրաւեց հասարակութեան ուշադրութիւնը արթնցնելու ու իրեն Էաֆրան ալ տեսնելու . ուրեմն ասով կարելի է թէ՛ ո՛չ միայն ինքը մեզի անմեղադիր եւ անպարտաւ կը թողու, այլ եւ իրեն կուսակիցներն ալ համոզուելով մեր Նկարագրին մէջը գրուածներուն ալ հաւատք կընծայեն՝ ու իրենք ալ զմեղ կերպով մը չեն դատապարտեր գաղտագողի փախունքներ մըմն շնչելով . . . :

« Յայտարարութիւն գործոց Մկրտիչ վարդապետի հրատարեալ առաջնորդի Քուրտիստանու, որոյ այժմ բացարձակ եւ անսանձ շրջի 'ի Քուրտիսթան եւ 'ի Տիգրանակերտ քաղաքիս . եւ ապականէ զագգըն որոյ զարարմունսն մի ըստ միոջէ, եւ փոքր 'ի շատէ աստ զրեցաք » :

« Ա. Անգամ որ եկն 'ի Տիարպէքիր, տովէթլու Համոի փաշայէն մի զաւաս հեան առնելով, եւ երկու զաւաս մեր ազգէն թէրթիպ աննելով Ալլիւան անուամբ զաշան դնաց, անդ մեծ կռիւ եւ շամաթայ հանելով, այն տեղն Չալոյ անունով բէխի որդին այն կութիլին մէջն սևուաւ, որ իւր Հայ զաւասըն Պօղոս անուամբ հաստ փայտով զարկեր էր . տղային հայրը Տիարպաքիր եկն, եւ իւր որդւոյ արիւնն յիշեալ վարդապետէն տալայ արար . եւ յիշ-

եալ Վարդապետն բազում դրամ մսխելով, եւ մեք ըստ որում վարդապետ միջնորդ եղաք հաղիւ թէ Չալլօյի ձեռացն զինքն ազատեցաք :

« Բ. Այնիպարիկս վանքին մէջն զինի խմած ժամանակը ատրճանակ շատ պարպելով, միոյն ատրճանակի սխթի թուղթը Սարգիս անուամբ Հայոց աղգէն մէկ մարդու աչքին դիպելով աչքը կուրացոյց, աստ անդ միջնորդներ ձգելով, եօթն հարիւր զուրուշ տուգանք կուրացելոյն տալով հաղիւ ազատեցաք :

« Գ. Սղերտու գիւղաքաղաքի վրդովմունքը եւ մահաեսի Օվէի Պօլիս գալը, եւ Տ. Յօհաննէսի տարազիր սուրկուն լինելը ամենը իւր գլխոյնէրքեւէն ելաւ, եւ Սղերտու կէսն Հոովիէական եղեւ, որ մինչեւ ցայժմ չի կարացաք անոնց գործը ձանապարհ գնել :

« Դ. Պշէրի անուամբ Գաղայն Սինան գիւղն Տ. Յօհաննէս այրի քահանայէն ութն հարիւր զուրուշ առնելով պսակեց, որոյ հրամանագիրը ձէնէզեան Մարտիրոս աղայի ձեռամբ Պատրիարքարանը քան զայս յառաջ զրկեր ենք :

« Ե. Տիհու Եկեղեցւոյ քառասուն եւ հինգ կըտոր թառլաները, որ մէքթուպի սամիով պիտի դապթ անէաք, եւ Եկեղեցւոյն մալ պիտի լինէր՝ ինչպէս որ Եկեղեցւոյ սեպհական մուլքն էր, այն ժամանակին յիշեալ վարդապետը տաճկացեալ Խզաթ էֆէնտիէն ըրչտաթ ուտելով, մաղպաթան կնքեց Սղերտու մէճլիսը, որ այս թառլաները Եկեղեցւոյ մալը չէ՝ Խզաթ էֆէնտիի հայրենական ժառանգութիւնն է :

« Զ. Քուրտսթանու վանքերու ամենու մուղաթայն թամամ եւ լման եւ կրկին առնլով Պատրիարքարանը մինչեւ հիմայ մէկ փառայ չի դրկեց, եւ առեալ փառայն ինքեառ անելով մինչեւ հիմայ վանահայրներն կու չարչարէ վանքերու մուղաթան խնդրելով:

« Այն ժամանակը որ Պօլսոյ եկն, երեք չորս հազար զուռուչի գիրք ձրի բերեց, որ դպրատուն պիտի հաստատէր, ամենը կրկին գնով ծախեց՝ եւ փառայն ծոցը դրաւ:

« Է. Թէրճիլ անուամբ մէկ փոքր Եկեղեցի մը կար լճու նահանգի մէջը՝ այս յիշեալ Եկեղեցոյ մօտն երկու կամ երեք օտայ շինել տալով, Պօլիս կազէթախանայն սուտ մօհրերով խաբեց, եւ կազէթայն գրել տուաւ, թէ Մկրտիչ վարդապետը Թըրճու վանքը դպրատուն հաստատերը եւ այսքան տըղայք այն տեղը կու վարժուին, եւ դպրատուն վերակացուն Ղազարն է եւայլն, եւայլն. բայց ճշմարիտն այս է, այն տեղն ո՛չ մարդ կայ, ո՛չ դպրատուն, եւ ո՛չ ինքն ալ անդ կու բնակի, միայն թէ ազգը կու խաբէ կազէթայներն սուտ գրելով:

« Ը. Քուրտսթան պրտելով, միշտ ազգը երկու կողմ կու բաժանէ, եւ մի կողմն վէքիլ լինելով միւս կողման հետն կուգայ քաղաք մուրաֆայ կու լինի եւ աստի անտի կաշառք ուտելով ազգը կու կռոպտէ:

« Թ. Տիարպաքիրու տասուերկու սահաթ հեռի լճէ անունով գազայի մուտիրն Սահտուլլահ պէկն այն տեղի հայերն շատ նեղելով, եւ կերպ կերպ սուգանք եւ զանազան չարչարանք տալով ազ-

զին, անճար մնալով տեղոյս վալիին գանգատ արին խէ, Մկրտիչ վարդապետը այն պէկին տիրութին անելով եւ իւրեան նման մարդիկ այն տեղացիք գլուխը ժողվելով քաղաքս խրկեց, եւ սուտ վկայութիւն տալով հայերն պարտաւոր՝ եւ յիշեալ պէկն ճշմարիտ հանել տուաւ. մեր տովլէթլու Քամիլ փաշայն Ղուլք անուամբ նահանգի Ապտալ անունով մուտիրը իւր չարութեանց համար տեղս բանտարգել անելով եւ նոր մուտիր այն տեղն զրկելով անիրաւ մուտիրի հաշիւն տեսնալ հրամայեց իսայ, Մկրտիչ վարդապետը այն տեղը գնաց իբր թէ հայոց կողմանէն հաշիւ պիտի տեսնայ, այն տեղն հինկ հազար զուռուշ Գուլիեցուցմէ, այսինքն Հայերէն հինկ հազար զուռուշ, եւ Քրթերէն վեց հարիւր մէկ՝ չորս հարիւր մէկ՝ եւ երեք հեղ ըիշտէթ առնուն իմացուելով քրթերն գանգատ արին, եւ փաշայ աֆանդին զինքը բերեց մահպուս արաւ ամսաչափ, եւ կերած ըիշտէթն իւրմէ ետ առնլով թող տուաւ :

« Թ. Յիշեալ գործէն աղատելուն պէս, սկսաւ մեր ժողովրդեան հասարակութենէն ոմանս գրգռեց թէ ինձ մաղսաթայ տուէք երթամ կուսակալէն պուլրուլթի աւնում գամ. ազգի տարեկան տուրքերու հաշիւն տեսան՝ ստակն հաւաքող եազուծիւն հետ, մարդ ճալպ ըրաւ տան մը մէջ սկսաւ իւր քէֆով գրել եւ կնքել տալ. այս բանս որ իմացուեցաւ՝ այն իւրացուցած մարդիկներն քաղցրութեամբ յառաջնորդարանս կոչվելով հոգեւոր Առաջնորդն քաղցրութեամբ յորդորեց որ յիշեալ վարդապետի ազգն վրդովող խորհուրդէն ետ կենան, եւ

սիրով համոզուելով՝ գնացին յետեւեալ օրն գրգումամբ նոյն վարդապետին վերատին սկսան 'ի կրպակի գըրել եւ կնքել յիշեալ գործոյն համար . այս ալ իմացուածին պէս խորհուրդ , արարեալ վաշային իմացում եւ խնդիր տրուեցաւ որ յիշեալ վարդապետն Գուլբեցոցմէ կաշառ առնելուն համար դուք զինքն բերել տուիք առած կաշառն ետ առիք , ազատած ելածին պէս հիմայ մեր ժողովրդեան մէջ խոսովութիւն կը ձգէ . ուրեմն կը խնդրեմք զինքն դուրս հանէք 'ի քաղաքէս , եւ ասոր պատճառաւ ալ չորս անձինք ալ երկու օր բանտն դրուեցան , եւ խընդրանօք Առաջնորդիս ելին 'ի բանտէն՝ յիշեալ վարդապետն գլուխ լինելով 90ի չափ մարդիկք առաւ գնաց Յունաց եկեղեցին յունակրօնութիւնը ընդունել տուաւ անոնց իւր քարոզութեամբն եւ ինքն ալ ընդունեց նոյն կրօնն , եւ այն կրօնիւ ելաւ 'ի Տիգրանակերտու գնաց 'ի Պօլիս . թէպէտ յիշեալ կրօնատիօններէն օրէ օր վերատին առ մեզ կը դառնան մեր յորդորանօքն , եւ յիշեալ վարդապետն 'ի Պօլսոյ իւր գրովն սիրտ կուտայ թէ 'ի յունակրօնութեան մէջ հաստատ մնացէք :

« ԺԱ. Վերջապէս մէկ գիրք մի շիներ է , եւ այն գրքի անունն Գաւազան զօրութեան գրքեր է . այն գրքի մէջն կու քարոզէ , պահքը սուտ է , այրի քահանային ամուսնանալ պէտք է , որոյ որ կինն ամուլ է՝ անոր միւս կին մի տալ պէտք է . նիհայէթ , բոլոր Հայաստանեայց Եկեղեցին սուտ կու հանէ , եւ տասն , տասն եւ հինկ հազար տուն Քուրտիսթանու , եւ Տիարպաքիրու հայերն ապականեց , եւ զրեթէ կիսով չափ մարդկանց միաքը շփոթեր

է : Ուրեմն կամ Հայոց ազգին մէկ Մկրտիչ վարդապետ մի պէտք է , կամ ազգը . զիրայ ասոր մնալն այս տեղն ազգին վնաս է՝ կործանումն է . այս մարդը այս օրքայէն հեռացնելն կու խնդրեմք . ահա գրեցաք եւ հազարէն մէկը պատմեցաք , եւ ամօթ եղած գործերն ծածկեցաք . որովհետեւ հէ՛մ ասողին հէ՛մ լսողին ականջը կու պղծէ » :

(Ստորագրութիւնը):

Ահա այսքան բողոքներուն եւ աղերսներուն վերայ վերստին ոչ միայն Քիւրտիսթանու , այլ եւ Բալուխի վիճակին վրայ ալ առաջնորդ կարգեց Ազգային Ղարչութիւնը 1862 թուին , որ երթայ յաղթանակաւ ուղած չարութիւնները ազատարար եւ համարձակ գործէ եւ այս բողոքագիրը ընողներէն վերէ՛ծ առնէ . . . տես ասոր բացատրութիւնը Նկարագիր աղետից Երուսաղեմի . եր. 197. 228 : Տեսնաեւ հետեւեալը որ վերոյեղեալ բողոքագրոյն մէջ առանձին յաւելուած ըրած էին . անոնք ալ 1856 թուոյն ըրած հրաշագործութիւններն են :

« Գարձեալ պատմութիւն Մկրտիչ վարդապետին » :

« Ա. Ռուսիոյ տէրութեան պատերազմի ժամանակն , Արբազան Պատրիարք Հոգեւոր Հայր մեր հարիւր հազար զուրուշ իհանայ տուաւ մեծազօր Տէրութեանն , Մկրտիչ վարդապետը զայս լսելով Քուրտիսթանու գիւղերէն թաւգիհ անելով զբամ ժողվեց որքան եւ կարաց յանուն Արբազան Պատրիարքին , ցոյց տալով զնամակ նորին եւ զկնիք . զոր հնարեալ էր յանուն նորին սրբազնութեան :

« Բ. Նոյն պատերազմի ժամանակը յորում հա-
տաւ երթեւեկութիւն 'ի սուրբ Աթոռն Էջմիածին ,
զնաց յիշեալ վարդապետն 'ի Տէր Զահվարան առ
Պատրիարքն Ասորոց , եւ էառ անտի սակաւ ինչ
միւռոն , եւ խառնեաց 'ի նմա իւղ ձիթենոյ , եւ բա-
ժանեաց 'ի գիւղօրայս Քուրտիսթանու , առնլով յիւ-
րաքանչիւր գիւղէ որքան եւ կարաց 'ի հինկ հարիւր
ղուրուչէ մինչեւ ցյիսուն զուռուչ , եւ այլն :

« Գ. Յայս առուրս զկնի գալստեան Յակոբ ե-
պիսկոպոսի 'ի քաղաքս , Ղաֆաֆ մահտեսի Պօղոս
անուամբ ոմն կամեցաւ առնուլ ինքեան կնութեան
զսանամայր իւր , եւ իբրեւ յանդիմանեաց զնա Յա-
կոբ եպիսկոպոս առաջնորդ քաղաքիս , առեալ ըզ
կինն որ էր սանամայր իւր չոքաւ առ Մկրտիչ վար-
դապետն որ սիրով ընկալաւ զնա , եւ պսակեաց ըզ
նա ընդ սանամօր իւրում . 'ի վկայութիւն բանիս ե-
դաք ահա 'ի մէջ գրոյս երեք կնքեալ գրութիւնս ,
զորս ունիք տեսանել , եւ հաւատալ » , եւ այլն , եւ
այլն : Ըստ առածին՝ լաւ է զգարչելիսն ծածկել ,
քան թէ 'ի յայտ բերել :

Ա երջապէս կը թողունք 25 տարիի չափ առաջ
ըրածները գրել , որք տեղի ունեցան 'ի մէջ կար-
նոյ եւ Մշու . . . որոնք ըստ մեծի մասին մեզի ծա-
նօթ չեն , եւ յիշելն ալ գայթակղութիւն կը բերէ
ողջամիտ քրիստոնէին . . . : Ար թողունք՝ ասկէց 15
տարի առաջ Խարահիտարին եկեղեցիէն ըրած յա-
փըչտակութիւններն եւ ըրած անվայել ընթացքներն
ալ՝ նոյն երկրացի հայերը պատմել . . . : Ար թողունք՝
Յակոբ սրբազան Պատրիարքին դէմ ըրածները նը-
կարագրել , որն որ Պօլսեցւոց շատերուն ծանօթ է . . . :

Կը թողունք նաև Խարբերդու առաջնորդ Արիստակէս Արքեպիսկոպոսին 1859 թուին՝ Գէորգ սրբազան Պատրիարքին հրամանաւը, Քիւրախիթան եւ Տիգրանակերտ այցելութեան ու քննութեան զնացած ժամանակը՝ յիշեալ անձին վրայով տեսած ու լսածները պատմել, որն որ յիշեալ Առաջնորդը այժմ Պօլիս է . . . : Այլև կը թողունք՝ Սամաթիոյ Յէնի մահալէ կոչուած թաղին սուրբ Յակոբ եկեղեցւոյն մէջի ըրածներն ալ՝ հոն տեղի եզոզներուն՝ ու սուրբ Գէորգայ քահանաներուն զուրցել տալ, որոնք ըստ մեծի մասին մեզի ծանօթ չեն . . . : Գարձեալ կը թողունք՝ նոյն Յէնի մահալէի թաղէն ըրած յախըշտակութիւնն եւ որ աւելի նշանաւոր է, պարտիզպան խեղճ եւ միամիտ Գալուստին գլխուն բերած ձիւները, կամ Բալուի ու Տխարպէքիրու ականատեսներուն զուրցնել տալ, եւ կամ ինքը Գալուստը յախտենական ճամբորդութեան մէջէն ետին գառնալով՝ զոչել յիշեալ վարդապետին երեսն ՚ի վեր, թէ սէր է իմ ինչպէս որ երեսնն Պօլսոյ ազգային Պատրիարքարանը եւ երեսելի անձանց զոները իյնալով լալազին դիմօք զոչեց ու պաղատանօք բողոք բարձաւ, որուն դժբաղդաբար ցաւօք սրտի ականատես ալ եղանք . . . : Կը թողունք նաև՝ Տեղապահ Ստեփան Արքեպիսկոպոսին՝ երկու տարիէ ՚ի վեր անոր վրայօք տեսած ու լսած զազբալի գործքերը եւ աղեսալից բողոքները՝ երեսն հանել, եթէ արիաբար ճշմարտութեան վկայ կենալ կուզէ նէ . . . : Եւս եւ կը թողունք, որ այժմ Պատրիարքարան եկած՝ թէ Էջմիածնայ Սրբազան Քահանայապետէն, թէ Թիֆլիզու Մակար Արքեպիս-

կոպոսէն, եւ թէ Բալուի ժողովրդէն գրուած՝ եւ այլն բողոքները Ազգային Գլխանատանը ինքը 'ի յայտ բերէ. եթէ յիշեալ անձին սքանչելեօքը առջի եկած բողոքագրերուն նման 'ի կորուստ մատնուած չէ, կամ Պատրիարքարանէն յարութիւն առնելով տեղափոխ եղած չէ. . . . Եւ ահա ասոնք թող ըլլայ մեր կողմէն իրեն ճիտը կախելիք եաճտան, եւ մեր ձեռքը գտնուած ու գիտցած ապացոյցնիս. . . .

Եւ ահա ասոնք փոքր 'ի շատէ մեզի ծանօթ ըլլալով՝ այսու ամենայնիւ մեր խոհեմութիւնը չիներեց՝ որ նոյն միջոցներուն մեր գիրքը հրատարակած ժամանակնիս՝ ասոնք զնէինք՝ մի առ մի ապացուցանելով, այլ որքան որ հնար էր նէ՝ քաղաքավարութեամբ եւ համեստօրէն վարուեցանք հոն, յուսալով որ՝ ինքըզինքը վար կը դնէ, եւ մենք ալ ակամայ կամօք այս ճշմարտութիւնները երևան հանելու չեմք պարտաւորիր. այլ իբր անտեղի համարելով ազգասիրաբար կը հերքեմք կամ յետս կը կոչեմք մեր գրածները, իրեն ազգօգուտ բարի բարի գործքերը լսելով եւ տեսնելով. բայց մեր յոյսը պարսպ ելաւ. . . . զի ընդ հակառակն՝ այս պարզերես անձը ինքըզինքը վար չի դնելէն 'ի զատ՝ վերըստին Պօլիս ալ գալով ոչ միայն մեզի դէմ յանդրգնեցաւ, այլ եւ մինչեւ անգամ պատիւ. . . . պահանջելու ձեռք զարկաւ. մանաւանդ անդուն բերնովն ալ գայթակղութիւն տալով ժողովրդեան եւ միանգամայն կուսակցութիւն մըն ալ յարուցանելու եւ մարդ որսալու ալ ձեռք զարկաւ վերստին՝ տարածայնութիւն մըն ալ տարածելու նպատակաւ. որով պարտաւոր կացոյց մեզի զասոնք 'ի յայտ բերել:

Ուրեմն գուցէ ասով կը բաւականանայ, եւ լեզուն ալ իրեն քաշելով մեզի անմեղադիր եւ անսպասաւ կը թողու. ըստ որում — թռչուն կայ՝ որ միսը կուտուի, եւ թռչուն ալ կայ՝ որ միս կը կերցընեն — . նաեւ առած է որ կըսեն, թէ՛ — ամեն ազազազ իր ազբանոցը կը խօսի — . ուրեմն կըսեմք, հոս ո՛չ Տիարսէքիր է, ո՛չ Բալու է, ո՛չ Մուշ է, ո՛չ Կարին է, ո՛չ Խարահասար է, եւ ո՛չ ալ Քիւրտիսթան է . այլ հոս թագաւորաբնակ Մայրաքաղաք է, եւ գոհութիւն Աստուծոյ որ հոս կայսր կայ եւ իրաւանց ու արդարութեան Ատեան ունի Եւ գիտցած ըլլայ՝ որ իր ձեռքը ունեցած խարդախ ու շինծու մահսերադիրները եւ վկայագիրները՝ այս անգամ ստակ չընեն, քանզի անոնց ալ արժէքը քանիի ըլլալը հասկցուեցաւ . Այլ եւ գիտցած ըլլայ՝ որ իր սքանչելիքները մեզի չազգեր, եւ հոս Պօլիս ալ ստակ չընեն այսուհետեւ այն սքանչելիքները, եթէ իրօք մինչեւ անգամ մեռեալներ ալ յարուցանելու որ ըլլայ Եւ որովհետեւ խարէութիւն ըսած բանդ որքան որ ոսկեզօծեալ ըլլայ՝ անհնարին է՝ որ օր մը երեւան չենէ . ուրեմն մէյմը չէ երկուք չէ այս անձին փորձը որ կըլլուի . ուրեմն փորձեալը կրկին եւ երեքկին փորձելն մե՛ծ յիմարութիւն է եւ եթէ 'ի փոքուն հաւատարիմ է, եւ 'ի բազմին հաւատարիմ է . եւ եթէ 'ի փոքուն անիրաւ է, եւ 'ի բազմին անիրաւ է

Ազաքէն կըսեմք, եթէ այս մարդը սուրբ է, թող երթայ առանձին ճգնութեան պարապի՝ որ ամենքը իր սօքը ուխտի երթան, ինչ կայ՝ որ քաղաքէ քաղաք եւ լեւոնէ լեւո կը շրջի ու դայթակ-

դուժիւն կուտայ . . . Եթէ ընտիր հովիւ եւ Քրիստոսի հետեւող աշակերտ է, ուրեմն այսքան ժամանակէ 'ի վեր իր վիճակներէն եկած բողոքներուն եւ իրեն դէմ ելած արգելքներուն նայելով կամ ամընչայ, եւ կամ թոթուելով ոտքին կօշիկները ձգէ ու փախչի . ինչ կայ յարածամ տարածայնութիւն յարուցանելով թէ Պատրիարքարանին մէջ եւ թէ դրսերը կազ եւ կռիւ կը սերմանէ, եւ յարածամ բողոքներու դուռ կը բանայ ձանձրութիւն տալով . . . թէ եւ կուսակից ալ ունեցած ըլլալով զինքը փափաքելով խնդրելու ալ ըլլան՝ այսու ամենայնիւ Քրիստոսի պատուէրին մտադիր ըլլալով քանի որ ժողովուրդը իրմէն դայթակղած է՝ պէտք է որ մինչեւ անգամ ինքըզինքը ծովը ձգէ երկանաքար մը կախելով վիղը . եւ ոչ թէ ընդհակառակն բարձրագոյն աստիճաններու ձգտի, եւ ալ ոչ թէ մէկէն ու միւսմէն բողոքներ բառնալով տարածայնութիւն յարուցանէ . . . Եթէ ճգնազգեաց եւ առաքինի անձ մըն է, ուրեմն իր վարդապետական աստիճանը անգամ իրեն շատ է, հապա ինչու փառք վնասելու ելնելով ոչ թէ միայն խարէական ձեռնարկութեամբ Բ. Գոնէն նշանի պատիւ առնելու ձեռք զարկաւ անարժանութեամբ, այլ եւ մինչեւ անգամ մեծամեծ աստիճաններու ալ ձկտելու ցանկալով կեղծաւորութեամբ մէկը ու միւսը կը շողոքորթէ՝ (երբեմն եւ դեռ այժմ՝ Երուսաղիմայ միաբան Վարդապետներէն մէկուն ըրածին նման . . .) որ իրեն վկայագիր առնելով Եպիսկոպոսութիւն առնել տան . . . որուն համար մինչեւ անգամ յանդգնելով ու չամաչելով ալ այս ինքնակոչ եւ ինքնընծայ ընտրեալը . . . այժմեան

Սրբազան կաթուղիկոսին աղերս ալ կը մատուցանէ՝ որ Եպիսկոպոսութիւն տայ իրեն :

Ուրեմն այս ընթացքներուն որին հաւատալով այս մարդու կերպարանքով խաբերային՝ սուրբ է , ընտիր է , առաքինի է , հրաշագործ է՝ ըսելու է . . . եւ եթէ իրեն ձեռօքը եղած սքանչելեացը նայելով բարեպաշտ քրիստոնեայք կը յափշտակին կոր նէ՝ գիտնան որ մինչեւ անգամ Քրիստոսի առաջին դարերուն ալ՝ ասանկ հրաշքներ եւ սքանչելիքներ ցոյց տուողներ կար . որոնց մէկը օրինակ եւ իբր խրատ ըլլալու համար իրենց բաւական է , այն է Սիմոն կախարդին գործքերը , որն որ մինչեւ անգամ երկինք կը բարձրանար հրաշքներ եւ սքանչելիքներ ցոյց տալով . բայց Աստուած ՚ի կորուստ մատնեց Սրբազան Առաքելոյն աղօթիւքը . . . :

Վերջապէս մեր կողմէն սա հետեւեալ երկու դիտողութիւննիս ալ ընելով՝ կը կնքեմք սոյն պժգալի եւ աղետալի նկարագրութիւնը . այսինքն՝ կամ այս անձը տօնելի ու Քրիստոսանման մէկն է* . . . որ այսքան դժբաղդութեանց եւ հալածանաց դէմ դընելով կը տանի կոր այսքան անարգութիւնը , հետեւաբար ասոնց բոլորն ալ զրպարտութիւն են եւ տեղի մը չունին մինչեւ ցարդ եղածներն ու զուրցուածները . եւ կամ այս անձը միայն արտաքուստ

* Ինչպէս որ ինքը իրեն վրայ օրինակ բերելով ըսաւ , 1865 Գեկտ. 22. Ալերակի օրը Պատրիարքարանին մէջ՝ յորդորելով իրեն ունկնդիրները . որոնցմէ մէկն էր Չրածեան Ա. Սարգիսը , որ իր զուրցածներուն հաւատք ընծայելով՝ զինքը առաւ իր տունը տարաւ նոյն օրը՝ Զերմեւանդութեամբ պատուելու համար :

Քրիստոսի Մկրտչին (այսինքն Մկրտիչ) անունը վըրան կրելով՝ բայց եւ 'ի ներքուստ գերաքրիստոսին Կարապետն է, որ այսքան վրդովմունք եւ չարութիւն ընկէն զկնի, այսու ամենայնիւ յաղթող ալ կը հանդիսանայ կոր ամեն ժամանակ ամեն իրաց մէջ. գուցէ եւ այս անգամ այսքան բողոքներուն եւ տարածայնութիւններուն վրայ ալ արդար եւ իրաւացի դատուի Ազգային Վարչութենէն . . . եւ ահա ասոր համար էր որ զրքին մէջը ենթադրելով մը ըսինք թէ՛ այս անձը գեր 'ի վերոյ մեկ եակ մըն է . . . տես Նկար. աղետ. եր. 228 :

Ուստի որն որ հաճելի երեւի ընթերցողաց զնոյն կալցի . . . միանգամայն մեր կարծիքը եւ համոզումը աւելի երկրորդին վրայ է՝ քան թէ առաջնոյն . . . Բայց սա ալ կըսեմք, որ եթէ իրենց կարծիքն ալ ետքինին վրայ ըլլալու որ ըլլայ՝ ուրեմն կը խընդրեմք, որ ասի իրենց ձեռքը առարկայ մը ընելով չի գայթակղին բոլոր եկեղեցականաց դասէն՝ ու մէկ ջրով չի լուան ամենքն ալ . քանզի մէյմը որ ատի ալ մահացու մեղք է, մէյմ'ալ որ ամեն ազգի եկեղեցականաց դասուն մէջ ալ կրնայ պատահիլ ասոր նման գուցէ եւ ասկից աւելի գայթակղութիւն տուող անձինք ալ . . . ուստի գիտնալ պէտք է, որ Աստուած երբեմն ասանկները կը թոյլատրէ՝ որ ընտիրները երեւին՝ ինչպէս որ երկոտասան Առաքելոց մէջէն Յուդաս ելաւ . նմանապէս տօնելի հայրապետաց դասէն ալ Արիոս, Մակեդոն, եւայլն մուրեցուցիչներ ելան . ահա ասոնք գիտնալով աղօթելու եմք ասանկներուն համար, որ Աստուած դարձ եւ զղջում տայ, ու մեզի ալ համբերութիւն

եւ խոհեմութիւն , եւ իր Եկեղեցւոյն ալ ինքը Քրիստոս հասնելով պահէ այս օրինակ մոլորեցուցիչներէն եւ գայթակղութեան քարերէն , ամէն :


“Ամենայն որ զչար գործէ ասեայ զլոյսն . . . ,” :

“Իսկ որ առնէ զճմարտութիւն գայ առ լոյսն . . . ,” :

(ԱԻՅՏ. ՅՈՎ. Է.)

“Բայց հիմայ գրեցի ձեզի որ չի խառնուիք , Թէ որ , , եղբայր ըսուած մէկը , կամ պոռնիկ ըլլայ կամ կուսակաշս , , կամ ազահ կամ բամբասող կամ զինով կամ յափշտակող , , այնպիսեաց հետ հաց ալ մի ուտեք : Գուրսինները դասել , , ինչերն՞ուս պէ՞սք է . չէ՞ մի որ դուք ներսինները պիտի , , դասէք . դուրսիններն ալ Աստուած պիտի դասէ . (կըսեմ , , ձեզի) , չարը մէջերնուդ վերցուցէ՛ք . . . ,” :

(Ա. ԿՈՐՆԹ. Ե. 11—15) :



Ք Ա Ն Ի Մ Ը Խ Օ Ս Ք

Արդ՝ կըսեմք մեր հակառակորդներուն , թէ՛ այստեսետեւ ձեռքերնուն եկածին չափ մեզի դէմ գըրեն ու գրեն , եւ տպեն ու տպեն . եւ ալ ձեռքերնուն ինչ գէշութիւն մըն ալ կրնայ գալ նէ՛ թող ընեն . եւ , թող ուզածնուն չափ մեզի վատաբանեն . մենք ալ իրենց առաջը դնելով բարոյական ճշմարտութիւնը կըսեմք , թէ — Անունէն ինչ կելնէ — վարդին ինչ անուն որ տալու ըլլանք՝ արդեօք իր վարդ ըլլալը կը կորսնցունէ . յայտնի է որ՝ ո՛չ վարդութենէ կելնէ , եւ ո՛չ ալ իր ազնուութիւնը կը կորսնցունէ : Ուստի մեզ վատահամբաւել ուզողը թող վատահամբաւէ , մեզ զրպարտել ուզողը թող զրպարտէ , եւ մեզ մատնել ուզողը թող մատնէ . . .

մենք գիտենք որ իժիհն բնութիւնն է խայթել, Բայց եւ այնպէս՝ մեր հակառակորդները գիտնան՝ որ Միհրրդատեանը մէկ սեպհական զօրութիւն մը ունի, որ Աստուած իրեն պարգեւեր է. որով զինքը շատ ժամանակներ եւ շատ մը նեղ պարագաներու մէջ պահպաններ ու պարզերես հաներ է. եւ այսուհետեւ ալ կարող է նոյն Բարձրելոյն տուած բարոյական եւ մտաւորական զօրութեամբը՝ իր հակառակորդներուն թունաւոր խայթուածներուն դէմ դնել ու զինքը պահպանել . . . Բայց սա կըսեմք թէ՛ փայտ դայար կարծուածները՝ ասոնք կընեն նէ՛ հապա ջոր փայտ համարուածները ինչէր չեն ըներ . . . Այսինքն՝ գիտուն եւ իմաստուն համբաւուածները այսպիսի եպերելի ընթացից մէջ որ կը գտնուին նէ՛ ապա ուրեմն տգէտ ու յիմար համարուածները ինչէր չեն ըներ . ո՛չ ապաքէն աւելի եւս գիտութեան յարգը կորնչելով հասարակութիւնը կը զզուի՝ ո՛չ թէ միայն գիտութենէն, այլ եւ գիտնականներէն խորշելով . . . եւ ահա ազգիս ուսումնականաց վիճակը . բայց սա կայ որ բարեբաղդաբար քիչ կը գտնուին այսպիսի անձինք . . . :



Խ Օ Ս Ք

ԱՌ ԱՆԿԵԱԿՆ Ի ՃՇՄԱՐՏՈՒԹԵՆԷ

ՅՕՀԱՆՆԷՍ ԶԱՄՈՒՐՃԵԱՆ

« Ո՞ տայր զգլուխ իմ՝ ջուր և զաչս իմ՝
« յաղբիւրս արտասուաց. զի մենացեալ
« նստէի և հանապազ լսյի 'ի վերայ Ազ-
« գիս Հայոց . . . »

(ՈՂՐ. ԽՈՐԵՆԻ)

Արդ՝ փորձով տեսած եւ պատմութիւններէն ալ տեղեկացած եմք, որ թէպէտ եւ ամեն ազգի մէջ կերպ կերպ աղէտքներ պատահած են, սակայն նոյն աղետալի ժամանակներուն մէջ գրեթէ մէկ մէկ երեւելի անձինք ելնելով՝ անոնց դէմ իբր ախոյեան կանգնելով զանոնք բարձեր են 'ի մխիթարութիւն ազգին եւ 'ի փառս իրենց անուան :

Ապաքէն թէպէտ եւ ամաչելով չեմք համարձակիր ընդ գրով արկանել եւ վկայել, բայց ճշմարտութենէն բռնադատուելով ցաւօք սրտի կըսեմք, թէ մեր ազգին մէջ ('ի բաց առնելով առաջին դարերունը) գրեա թէ՛ կէս դարէ 'ի վեր՝ բաց 'ի Յարութիւն Պէդճեան իշխանէն՝ չերեցաւ Տաճկաստանի ազգայնոցս մէջ անանկ մէկ երեւելի ու պատկառելի եւ առաքինի Անձ մը, որ ազգիս զլիսուն եկած արգելքներուն եւ աղէտքներուն դէմ գնելով իբր ախոյեան կանգնէր, որով ոչ թէ միայն իր Ա-

նունք փառաւորէր, այլ եւ՝ բովանդակ Աղգերնիա
 ալ։ Ուր ընդհակառակն մեր բոլորաիքը գտնուող
 ուրիշ ազգերուն մէջ կը տեսնեմք եւ կը լսեմք յա-
 բաժամ այնպիսի հայրենասէր եւ առաքինի անձինք,
 որք իրենց ազգը միշտ կը փառաւորեն թէ դրով՝
 թէ բանիւ եւ թէ արդեամբ, իւրաքանչիւր ոք ի-
 րենց կարողութեանը չափ։ Ընդհակառակն մեր ազ-
 գը ոչ թէ միայն հակառակասիրութեան եւ վիճա-
 բանութեան ու ատելութեան մէջ կը լողայ յարա-
 ժամ, այլ եւ դոնէ այն ազգաց բարի օրինակին չի
 հետեւելով, միշտ անոնց ունեցած շոյլութեանը ու
 զեղխութեանը կը հետեւի. որով ոչ թէ միայն զի-
 րենք կործանեցին ու դեռ կը կործանեն, այլ եւ ի-
 րենց ազգին փառքն ալ եւ պատիւն ալ ազարտե-
 ցին՝ այս վերջի քանի մը տարուանս մէջ. եւ այս
 ալ թէ հոգեւորականաց դասէն ըլլայ՝ թէ ձեռնհաս
 երեւելի իշխան ու ամիրայ կոչուող անձանց եւ թէ
 ուսումնականաց։ Այո՝ թէպէտեւ եղան ու գտնուե-
 ցան անանկ երեւելի անձինք ալ որ ոչ իրենց եւ
 ոչ ալ ազգին օգուտ մը չընելէն ՚ի դատ, չարիքներ
 ալ հասուցին. թէեւ բարեգործութիւններ ըրին ալ
 նէ՝ մէկ մէկ կուսակցութեամբ կամ մէկ մէկ նպա-
 տակաւ ըրին, վասնորոյ ոչ օգուտ մը ունեցաւ եւ
 ոչ ալ յարատեւեց նոյն ըրած բարիքնին։ Քանզի
 նախ կերպը չի գիտցան, երկրորդ գաղափարները
 տարբեր ըլլալով՝ գործ մը չի կրցին տեսնել, կամ
 նոյնն է ազգին ապագային բարիք մը չի կրցին ձը-
 գել. հետեւաբար յարգերնին ալ կորուսանելով՝ ան-
 միաբանութեան եւ տարաձայնութեան հեղեղներուն
 սուսուել եւս յորդելուն պատճառ եղան. եւ որով

կերպ կերպ կուսակցութեանց եւ գաղափարներու տարբերութեանց եւ աղետից ենթակայ ըրին Ազգը, Գուցէ ոմանց անհաւատալի եւ չափազանց թուրայս մեր ճշմարիտ եւ անկեղծ խոստովանութիւնը. ուստի համառօտակի կը դնեմք հոս մեր գիտցած ճշմարտութիւնները, եւ ընդարձակն ալ հանդերձ ապացոյցներովը Տեսարան Հայկական Եկեղեցւոյ վերնագրով աշխատութեանս մէջ կրնայ տեսնուիլ, եթէ բարերարի մը նպատիւք 'ի լոյս ընծայի:

Արդ՝ ինչ է եւ որո՞նք են արդեօք ազգիս մէջ մտած այս աղետից պատճառները. ահա ասկից 45 տարիի չափ առաջները Ազգիս մէջ ('ի շնորհս Հռովմի) մտած տարածայնութիւնը բառնալու նպատակաւ միաբանութիւն մը հաստատելու ջանացին, նոյն ժամանակի գտնուող թէ հոգեւորականներէն եւ թէ աշխարհականներէն քանի մը երեւելի անձինք, որոնց գլուխ կը համարուէր Անդրիանուպօլսեցի լուսահոգի Պօղոս եւ յաւերժայիշատակ Սրբազան Պատրիարքն Պօլսոյ, վառօղապետ Տատեան Սիմոն եւ ճարտարապետ Պալիեան Գրիգոր ամիրանները. բայց գիցուք թէ՛ թէ՛ անխոհեմութեամբ եղած ըլլայ եւ թէ՛ ազգիս զժբաղդութենէն՝ նոյն միաբանութիւնը բուրորովին անմիաբանութեան, եւ նոյն սիրոյ ճրակերը իբր թէ սրոյ եւ ատելութեան փոխարժուեցաւ. եւ ապա Ազգը ու Ազգին Եկեղեցին ու կրօնքը երկուքի բաժնուեցաւ՝ քանի մը տարի ետքը, եւ ասկից մտաւ ընտանեկան վէճ ու ատելութիւն մը՝ եւ նոյն երեւելի անձանց ու ընտանեաց մէջն ալ գաղափարներու եւ կարծեաց տարբերութիւն մը. ըստ որում գիտութեան բարւոյ եւ չարի ծառերուն՝ արգիլուած

պտուղները ոչ թէ միայն փոքր ինչ կերած էին հին թշնամուտն արբանեկացը ձեռքը, այլ եւ շողոքորթ օտարամուլ եւ օտար ուսումն առնող մէկ քանի անձինք ալ բնականաբար իրենց քովը գտնուելով կրկու կողմէն ալ զայրացուցին, թէ յիշեալ երեւելի անձինքը եւ թէ հասարակ ժողովուրդը, հետեւաբար տարածայնութիւն ու գաղափարներու տարբերութիւն մը աւելցուցին ազգիս մէջ, ուսկից միմեանց ցուրտ նայիլ մըն ալ մտաւ, նոյն իսկ երկու կողմին բաժանման մէջ՝ հանդերձ գէշութիւններովը, այն գէշութիւնները՝ որոնք շատերը գիտեն, եւ որոնց դառն պտուղներն ալ ամեն հայ անունը կը բող անձինք ամեն օր ձաշակելովը՝ աւելորդ կը համարիմք հոս մի առ մի յիշել . . . :

Եւ ահա նոյն աղետալի ժամանակէն մնաց ազգիս մէջ կուսակցութեան մարմին մը, եւ այս ալ թերեւս մեզնէ բաժանող կղերները իբր որսի թակարթ ըլլալու համար որսորդներ ձգեցին զանոնք ազգիս մէջ, որպէս զի հայ անունը կրելով վրանին եւ իրենք ալ ազգեցութեան տէր գտնուելով գիւրին կերպով մը անոնց ձեռքը՝ որսան տակաւին Հայաստանու գիրկը մնացած անմեղ գառնուկները ու միամիտ աղանձիները . եւ այս որսորդներուն շատերն ալ գուցէ չի գիտնալով անզգալի կերպով մը միամտաբար ինկած էին եւ են այս թակարթին չըսեմ այս անվայել պաշտօնին մէջ : Ասոնք թէ բարի նըպատակաւ եղած ըլլայ եւ թէ գէշ (գործը ինքնին կը ցուցնէ) մէկ կուսակցութիւն մը յարուցին կուստանդնուպօլսոյ ազգայնոցս մէջ, որուն դառն պտուղներն ալ մեր Հայաստանու անմեղ ժողովուրդը-

ները վայելցին եւ դեռ կը վայելեն ասա օր . ոչ ,
ասոնց վրայ նայող եւ լացող ու դարման մը տանող
չի գտնուելով դեռ կը շարունակէ մինչեւ ցայսօր՝
նոյն կուսակցութիւնը , այս աւերակ դարձած արիւ-
նալից դաշտին վրայ . . . եւ չեմք ալ յուսար , որ
Սահմանադրութեան շնորհիւն այ՛ պիտի վերնայ Ազ-
գիս մէջէն նոյն կուսակցութիւնը եւ նոյն ազէտք-
ները . քանի որ գաղափարները տարբեր են ազգիս
մէջ . . . : Եւ անս այս մարմինին , կամ այս կու-
սակցութեան եւ կամ այս գէշութեանը գոյութեան
պատճառ եւ առաջնորդ ու բերան կրնայ համարուիլ
երբեմն Չամուրճեան եւ այժմ Տէրոյեան կոչուող
Յովհաննէս Պատուելին . . . :

Արդ եթէ հարցընէ մէկը , թէ արդեօք բնաւ
բարիք մը չըրին այս մարդիկը . կշսեմք այ՛ , բայց
ըրին ալ 'նէ՛' մէյմը որ իրենց ո՛ եւ իցէ օգտին հա-
մար աշխատեցան , մէյմ՛ալ որ կերպը չի գիտցան ,
եւ գիտցան ալ 'նէ՛' գաղափարները աւրուած ըլլա-
լով եւ թշնամին իրենց մէջը սնուցանելով ո՛չ ի-
րենց եւ ո՛չ ալ ազգին օգուտ մը չի կրցին ընել ,
բայ 'ի վնասէն . ըստ որում առաջնորդնին կամ խը-
րատատունին օտարամոլ , չըսեմք 'ի բնէ սնտի չար
եւ շահատէր ըլլալուն համար , ո՛ եւ իցէ կերպիւ-
ազգին յառաջ երթալուն արգելք եղան . եւ որ
մեծն է ազգիս սիրոյն եւ փառացը համար աշխա-
տողներն այ՛ մէկ մէկ կուսակցութեամբ կամ հա-
լածեցին եւ կամ այնպիսեաց փառքը ազարտեցին
հակառակութիւն ու վէճ յարուցանելով թող եւ
ճիզուիթական դարաններ գործածելով այնպիսեաց
դէմ ըզրորովին յուսահատեցուցին զանոնք . եւ ընդ

հակառակը տմարդի եւ ազգակործան անձանց իբր թէ օգնական ձեւանալով անոնց անօրէնութիւնները ծածկեցին՝ եւ կամ լուսթեամբ պատուեցին, եւ գուցէ գաղտնի ձեռնտուութիւն մ'ալ ընելով թոյլատրեցին ու սլաշտսանութիւն ալ ըրին՝ որ ազգը բոլորովին պաղելով եւ յուսահատելով իր եկեղեցիէն ու եկեղեցականներէն՝ Հոովմի ծոցը իյնայ դիւրութեամբ, որով եւ իրենք ալ իրենց նպատակնին կամ ուխտերնին կատարած ըլլան . . . : Աս մեր բոլոր ըսածները հանդերձ ապացոյցներով Ազգասէր անձին մէկը հաւաքած է, բայց տակաւին հրատարակութեամբ երեւան հանած չըլլալուն՝ եւ այժմ մեր գործին ալ չի վերաբերելուն՝ մանաւանդ թէ՛ խօսելու ժամանակն ալ չըլլալուն համար, զանց կընեմք զանոնք մի առ մի նշանակել, միայն թէ անկից մէկ կտոր մը առնելով արժան կը դատեմք հոս դնել, որպէս զի մեր ճշմարտասիրութեան ոգին եւ զգացած ցաւերնիս յայտնուի, ու զրպարտութիւն ըրած չի համարուինք :

Յիշեալ Հայրենասէրը կըսէ թէ՛ — Յիրաւի մեր ազգին մէջ ալ ուրիշ ազգաց մէջ եղածին պէս ժամանակ ժամանակ երկպառակութիւն ծագելով խրոտովութիւններ կըլլար, եւ կանուխ ու անազան կը վերջանար . ոչ միայն կրօնափոխութեան նման ծանր յանցանք մը չէր գործուեր, այլ եւ ան մասին ըսպառնալիք մը անգամ չէր պատահեր, (բայց ՚ի երբեմն տիրող բռնակալներէն . . .) բայց քանի որ ճիշտութեամբ մարմինը կամ կեղրոնը մեր դժբաղդ ազգին մէջ արմատացեր է, գրեթէ ամեն հայաբնակ երկիր շարունակ յուզման ու վրդովման ալեաց

մէջ կը տատանի, եւ կրօնախօսութեան վաւթար
ախտէն չարաչար կը տանջուի: Ազգին ազգու գրիչ-
ները բողոքականութեան ոյժը բաւական կոտորեցին,
եւ նորահաւատութեան եռանդը ազգին մէջ կարի
տկարացուցին. (բայց միանգամայն կը խոստովա-
նիմք ալ, որ զղուելով եւ գայթակղելով յիշեալ
կեդրոնէն, նա մանաւանդ օտար ուսմունքներ առ-
նելէն՝ ոմանք ալ յուսահատարար եւ աղիտարար
անհաւատութեան դիմեցին. . .) ինչու որ բողոքա-
կանութիւնը ակն յանդիման ասպարէզ ելնելով դէմ
առ դէմ կը մարանչի. եւ ով որ իր գինուց վրայ
վտանաութիւն ունի, անոր դէմ կրնայ մաքառիլ եւ
յտղթանակել: Ասոր հակառակ անխորհրդաբարձր՝ ինչ-
պէս որ յայանի է լօյլօլայի սկզբանայ տեղեակ եզոզ-
ներուն, դարան կը գործէ, իրբեւ վատասիրա հուղ-
կահար աներեւոյթ հարուածներ կուտայ, եւ մինչեւ
անգամ առ երեսս վշտակից եւ բարեկամ ձեւանա-
լով իր տուած վէրքերն անձամբ դարմանելու վա-
տութիւնը յանձնառու կըլլայ. որպէս զի թէ որայն
վէրքերը վտանգաւոր չեն նէ՝ թիւնաւոր սզեղանի-
ներով զանոնք մահացուցիչ յարդարէ. . . , Ո՛հ, կրք-
նանք ըսել թէ՝ սատանայական դասն անգամ ճիզ-
ուիթութեան չափ մարդկային ազգին ազգուներ եւ
չարիքներ չէ հասուցած*, — Ի վերայ այսոր ամե-
նայնի Չամուրճեան Տէրոյնցը իրեն փառք կը հա-

* Թէպէտ և այս վերջի կտորը մեզի չափազանց կը թուի. ըստ
որում սատանան միշտ սատանայ է. բայց այսքան մը կրնայ ըս-
ուիլ թէ՝ իր շքրածները՝ երբեք մարդիկ իրեն դարանը ձգելով
առաւել ևս անոնց ձեռքը գործադրել կուտայ իր չարութիւն.

մարէ ճիգուիք կոչուիլը, ինչպէս որ իր բերնէն ալ լսած եմք, եւ ինչպէս որ անոնցմէ ընդունած պատուոյ միևնուայն ալ տեսած եմք, որ իբր պարգեւ իրենն տուած են հաւատարիմ ծառայութեանը համար . . . :

Ինչ կրսես Պատուելի, շարունակենք արդեօք . . . չէ՛ նէ այսքանն ալ ձեռք տուաւ . . . քանզի յոյս ունիմք, որ ասոնց բացատրութիւնները ընելու չեմք պարտաորիք այսուհետեւ . ըստ որում մէյմբ որ փորձը վարպետ ըրաւ ամենքս ալ, մէյմ'ալ որ՝ գրելով եւ զուրցելով ալ չի լիննար ազգիս գլխէն անցած դացած աղէտքները, եւ ընթերցողաց ալ ձանձրութիւն կը պատճառէ . մանաւանդ թէ՛ ազգասէր սիրտերուն ալ առտել եւս վիշտ տալով արիւննին կը բորբոքի, եւ բորբոքելով ալ՝ ածիւն կարծուած ու մոխիրին տակը մնացած բոցերն ալ կսկըսի կայծել . որով բան մըն ալ չենք վատարկիր, ինչպէս որ մինչեւ ցարդ գրելով եւ զուրցելով ալ բան մք չի շահեցանք, բաց 'ի վնասէն . այլ լուծեամբ պատուելով կը ծածկեմք առ այժմ զասոնք . թող երթայ մոխիրին տակը ծածկուած մնայ . եւ երբ (Աստուած մի՛ արասցէ) մէկ հով մըն ալ փչէ՛ այն ժամանակը ակամայ կամօք կը պարտաորիմք նոյն ծածկուած բոցերը երեւան հանելով ճշմարտութիւնը ցուցընել . ուրեմն առ այժմ այսքանս բաւ համարելով, զառ-

ներք, ըստ որում մարդս ազատ է եւ անձնիշխան, ուստի աղէկութիւն ալ կրնայ գալ իր ձեռքէն շարութիւն ալ . . . ուստի բարութիւն գործելով Աստուծոյ կը նմանի, եւ շարութիւն գործելով ալ շարին սատանայի . . . :

նանք քեզի հետ ուրիշ խօսելիքներնուս :

Է՛յ, Պ. Չամուրճեան ասոնք մէկզի թողլով, եկուր հիմայ քեզի հետ հաշուետումարը բանանք ու միւս հաշիւներդ տեսնենք, ու հասկնանք թէ մինչեւ ցարդ ազգին ինչ արդիւնք ցրցուցեր ես եւ քու բոլոր կենաց ընթացքիդ մէջ ինչ նպատակի ծառայեր ես . կարծեմ այս վերոյիշեալները քեզի ծանօթ չեղած չըլլար, ու չես կրնար ալ ուրանալ . քանզի ասոնց բոլորին ալ մէջը մատ ունենալէդ զատ, մինչեւ անգամ թէ գրով եւ թէ բանիւ անոնց գործադրութեան աշխատութիւնն ալ վրադ առած էիր, ուրեմն վարձքդ Աստուծոյն առնես Բայց սա պիտի հարցընեմ քեզի, որ եթէ դուն Հայ եւ Լուսաւորչական Եկեղեցւոյ հարազատ որդի եւ ազգին ԿՐՕՆԻՅԸ, ԻՐԱԻԱՆՅԸ եւ ՍՏԱՅՈՒԱԾՈՅԸ պաշտպան էիր՝ ինչո՞ւ քու եկեղեցւոյդ ԿՐՕՆՔԸ չի պաշտպանելով՝ օտար սկզբունքներ մտցնելու ալ աշխատեցար՝ անոր սուրբ պարզութիւնը պղտորելու յանդըգնելով . որով պատճառ եղար երկպառակութեան եւ տարաձայնութեան, եւ մինչեւ անգամ տեղի տուիր՝ խելքը հասնող ու չի հասնողներուն, որ զայրանալով մը քեզի գէ՛մ ազգասիրաբար Հայաստանեայց Եկեղեցւոյ սուրբ սկզբունքները իրենց կարողութիւնը տանելուն եւ իրենց գիտցածին չափ պաշտպանել ուզեցին, թէպէտ եւ ՚ի կրից շարժեալ տգիտաբար բերներնուն ու գրիչներնուն եկածը դուրս տրւին . այսինքն՝ ո՞մանք մինչեւ անգամ յանդգնեցան Հռովմի Հայրապետը իրենց Եկեղեցւոյն խամկոչ անգամ չի կացուցանել, ինչպէս Խթիւճեանն Վարապետը . ո՞մանք Եկեղեցին Սահմանադրական

անուանեցին, քու Միապետական քարոզելուդ դէմ՝
 ինչպէս Այվատեան Մատթէոսը, ոմանք Պսակի խոր-
 հուրդը կերպով մը անտեղի ցըցունելով՝ ու Եկեղե-
 ցին տուն եւ տեղի ու բնակարան ճշմարտին Աս-
 տուծոյ չի համարելով՝ իբր հասարակաց տուն եւ
 աղօթատեղի մը ձեւացուցին, ինչպէս Փանոսեան
 կարապետը եւայլն, եւայլն* : Բայց ասոնք շիտակը

* Թէպէտ և այս օրերս անոնց դէմ Ազգային կրօնական Ժո-
 ղովոյ կողմէն տետրակ մը հրատարակուեցաւ « Քրիստոսի Ա-
 Եկեղեցին ու անոր հակառակորդները » մակագրով . բայց որքան
 որ մէջի եղած խորհրդածուծիւններէն գոհ եղանք ալ նէ՝ մի-
 անգամայն անոր մակագրոյն վրայ ունեցած դժգոհուծիւննիս
 ալ կը յայտնեմք՝ զանի գրող Գերապատիւ Հեղինակին . վասն զի
 Ա. Եկեղեցւոյ հօգուտ կոչել այնպիսի անձանց ծանր երեւ-
 ցաւ մեզի, որոնք որ յարաժամ իրենց կարողուծիւնը տանելուն
 չափ՝ իրենց կրօնքը, և ազգիս իրաւունքը՝ շատ մը նեղ պարագա-
 ներու մէջ պահպանած ու պաշտպանած են : Ուստի կրօնական
 մասանց վրայօք փոքր ինչ պակասուծիւն մի ալ ունէին նէ իրենց
 դրուածոցը մէջ՝ (ինչպէս որ կը խոստովանիմք) ներող գտնուե-
 լով բաւական էր գիտնալ, թէ յիշեալ անձինքը նոր վարդապե-
 տուծիւն մը չէին հնարած, այլ դիտողուծիւն ու առաջարկու-
 լծիւն մի էր ըրածնին . ուստի իրենց ըրած պակասուծիւնն ու
 տգիտուծիւնը պէտք էր որ համեատօրէն իրենց ցուցուէր հան-
 դերձ բացատրուծիւններով ինչպէս ըստ բաւականին ըրած ալ է
 Կ. Հեղինակը Բայց սակուցեմք միանգամայն իմացունել, թէ
 այդ վերնագրով պատասխան մը աւելի Չամուրճեանին նոր վար-
 դապետուծեանցը վրայօք կը վայլէր մինչեւ ցարդ տալ, քան
 թէ վերոյիշելոցս . . . նա մանաւանդ այս նոր և օտար վարդա-
 պետուծեանց առաջնորդը յիշեալ Չամուրճեանն էր՝ մեր Եկե-
 ղեցւոյն մէջ մտցընել ու զողը, քան թէ երիտասարդուծիւնն էր,
 որոնք անոր տուած գայթակղուծենէն ու տարածայնուծիւն-
 ներէն գրգռուելով՝ այդ օրինակ գրուծիւններու ձեռք զարնել

խօսելով յանցաւոր չեն համարուիր, (թէ եւ մեզի թչնամի ալ են . . .) քանզի մէյմը որ պատճառը դուն ես այս մեղադրելի տարածայնութեան . մէյմ'ալ որ ազգիս դժբաղդութենէն օրինաւոր դրչի տէր կղերներ չըլլալուն եւ եղածներուն ալ յարգ չի արուելուն համար, այս գէշութիւնները եղան ու կըլլան հարկաւ . եւ առաւել եւս պիտի ըլլայ անշուշտ, մինչեւ որ մեր հոգեւորականները տակաւին 'ի խոր քնոյ մէջ թաղուելով օրինաւոր կրօնական հանգէս մը կամ կրօնական լրագիր մը հրատարակելու ձեռք չի դարնեն եւ Հայաստանեայց Ա. Եկեղեցւոյ սկըզբունքները չի պաշտպանեն : Ահա ասիկայ չընելովնին առաւել եւս վտանգի տակ պիտի ձգեն Եկեղեցին Հայկական եւ իրենց պատիւն ալ առաւել եւս պիտի կորուսանեն :

Ասոնք ալ մէկդի կենայ, Գանք Ազգիս ԻՐԱԻԱՆՅԸ եւ ՊԱՏՈՒՈՅՆ վրայ ունեցած անվայել վարմունքներուդ համար խօսիլ, Գարձեալ, եթէ դուն Հայ էիր եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ հարազատ որդի, ինչո՞ւ համար 12 տարիէ 'ի վեր ազգիս ԻՐԱԻՈՒՆՔԸ չի պաշտպանեցիր, երբոր Եկեղեցւոյդ թըշնամիները ատելութեան ոգւով իբր հեթանոսական կրօն մը ձեւացընել ուղեցին եւ յանդուգն համար-

Համարձակեցան՝ անոր բաջաղանքներուն գէմ'դնել ուղելով քանի մը տարիէ 'ի վեր. ուստի այնքան մեղադրելի ու պակասաւոր չեն համարուիր անոնք, քան թէ անոնց տեղի եւ պատճառ տուող Չամուրճին . . . բայց այսու ամենայնիւ նա՛ իր ըրածներուն փոխարէն իբր թէ յաղթանակ ընկալաւ, բայց ասոնք սո՛ւր . . . խոչեմութի՛ւն, խոչեմութի՛ւն, ս՞ւր ես արդեօք . . . :

ձակութեամբ հերետիկոս վճռեցին Հայաստանեայց Ս. Եկեղեցին, եւ դուն լռութեամբ պատուեցիր. մինչեւ անգամ երեկեան ուսումնասէր երիտասարդներէն չի պատկառեցար, որք իրենց կարողութեանը չափ հերքեցին ու բողոքներ արձակեցին Եկեղեցւոյս թէնամնացը դէմ. բայց ամենավատթար օրտով մը ոչ միայն հանդիսատես եղար՝ այն նողկալի տեսարանին . . . այլ եւ յանդգնեցար անոնց կողմը տաշել, անոնց դրութիւնը պաշտպանել օւղելով . . . եւ ինչ հեռուն կերթամք, դեռ մօտ օրերս պատահած վէճին, այսինքն՝ Տատեան Պօղոս Պէյլին թաղման կարգը կատարելու խնդրոյն համար ալ բան մը չի խօսեցար. որուն վրայ թէ Ազգային Պատրիարքարանը իր իրաւունքը մէջ բերելով պաշտպանեց, եւ թէ լրագրաց խմբագիրք իրենց կարողութեանը չափ իրենց Ազգային Եկեղեցւոյ իրաւունքը եւ պատիւը պաշտպանեցին՝ Եկեղեցւոյս հակառակորդացը դէմ, որն որ առաւել եւս քեզի կիչնար նոյն իրաւունքը պաշտպանել. քանզի քու դրութեանդ ու քու քանի մը տարի յառաջ հրատարակած շաղիազփութեանցդ դէմ էր, որ կըսէիր թէ՛ « Հայաստանեայց եւ Հռովմի Եկեղեցւոյն հաւատոյ էական մասանց մէջ տարբերութիւն չի կայ. եւ թէ ասոնցմէ հեռացողը բողոքականութեան կը մօտենայ » . ուրեմն կը հարցընեմք քեզի, թէ՛ այսօր Հայոց Եկեղեցին մօտեցած է Բողոքականութեան, Հռովմի Եկեղեցին է, չէ՞նէ Հասունեանին կուսակցութիւնն է. ասոնց օրն է, որ մինչեւ ցարդ այս կնճիւղը լուծելով չի հրատարակեցիր. որն որ ընդհակառակն Հռովմէն խրկուած Աքքեպիսկոպոս մը քու դրութեանդ դէմ բողոքելով

հերքեց՝ յայտարարութեան միջոցաւ իր անայլայլելի սկզբունքովը Հասկմէն դուրս եղող բոլոր եկեղեցիները, եւ այս իր դրութիւնն ալ եակեան մաս քարոզեց. 'ի վերայ այսր ամենայնի տակաւին բերանդ առաջ չի գնաց բան մը զուրցել անոր վրայոք . . . : Ասոր ինչ կը հրամես . . . աս ալ թող մընայ: Գանք հիմայ ազգիս իրաւունքը պաշտպանողներուն համար ըրած ատելութիւններուդ :

Գարձեալ, դուն այս անվայել վարմունքներուն մէջ տողորելով, միանգամայն այս ճշմարտութիւնները երեւան հանող, ու քու եւ կուսակիցներուդ ապօրինաւոր դրութիւններնուդ դէմ ազգասիրարտր մարտնչող անձինքներն ալ կերպ կերպ զբարատեցիր մուր քսելով որին անհաւատ, որին ազանդապետ, որին բողոքական, եւ մինչեւ անգամ որ մէկուն ալ ազանդաւորի անուն գոյացնելով դունամիջեան անուն մ'ալ աւելցուցիր ազգիս պատմութեանը մէջ, չը գիտեմ թէ քեզի ու քու կուսակիցներուդ ինչ ըսելու եւ ինչ անուն տալու է . . . եւ եթէ այդ երիտասարդութիւնը թէ անգիտութեամբ եւ թէ զայրացմամբ մէկ պակասութիւն մ'ալ ըրաւ ալ նէ՛ դուն հայրաբար եւ հմտաբար քաղցր քաղցր խօսքերով եւ յորդորներով համոզելու եւ իրենց պակասութիւնները առանց կուսակցութեան ուղւոյ աչառութիւն չընելով առջեւին դնելու էիր, եւ ոչ թէ առաւել եւս զայրացընելով տարածայնութեան տեղի տալու էիր, մանաւանդ թէ անձնականի ալ դպչելով արատաւորելու չէիր զանոնք . . . : Բայց ասոնց ամենքը լմնցաւ, հիմայ մենք մնացինք միայն, մեզի ալ այն արատները կամ լաւ եւս այն

մուրերը չի կրնացիր քսել նէ, ուրիշ կերպերով յանդրգնեցար անոնց կարգը դասել զմեզ ու զբարտել եւ ըսել, թէ՛ Հանգուցեալ Երուսաղիմայ Պատրիարքին հետ յիս ունի, կամ թէ՛ ատելութեան ողի ունի, եւ այն, Բայց կարծեմք թէ՛ ըստ բաւականին հասկըցուցինք, որ ոչ անոր հետ, ոչ քեզի հետ, ոչ Մկրտիչ վարդապետին հետ, եւ ոչ ալ Նկարագրին մէջ նշանակած անձանց հետ ատելութիւն մը ունէինք եւ ունիմք ալ. այլ միայն եղելութեանց ստուգութիւնը երեւան հաներ էինք եւ հանեցինք. ըստ որում այն ստուգութիւնները եւ այն ճշմարտութիւններն էր, որ ազգիս պատուոյն ու կրօնիցը եւ իրաւանցը նաեւ սեպհականութեանցը կը վերաբերէր. եւ քանզի երբ որ՝ ո՞ եւ իցէ մէկու մը այնպիսի իրողութեանց մէջ ձեռք ունենալը կը տեսնեմք, եւ երբ որ այնպիսի իրողութեանց մէջ ապօրինաւոր ընթացից տէր կը նշմարեմք, յայնժամ անիկայ ո՞վ կըլլայ նէ թող ըլլայ՝ մինչեւ անգամ ծընօղս ալ ըլլայ, կը պախարակեմք զանի. եւ ճշմարտութիւնը կը պաշտպանեմք, եւ այսպէս ընելու ալ պարտաւոր եմք. քանզի ոչ միայն խղճերնուս կը դպչի, այլ եւ մինչեւ անգամ սրտերնուս ալ սուր մը խօթած կըլլայ այնպիսին. Թէպէտ եւ ըստ որում մարդ մը կրնայ ամեն չարութիւնները դործածել, սակայն երբ որ ընդհանուրին գայթակղութիւն կուտայ եւ այն ըրած վնասներն ու չարութիւնները Ազգին ու Եկեղեցւոյ կը վերաբերի, այնպիսին նշանակելու եւ նշաւակելու պարտաւոր եմք. եւ քանզի անոնց ըրած չարութիւնները նշանակելինք նէ՛ զմեզ անմեղ ձեւացնել չէր՝ եւ ոչ ալ ա-

նոնց ունեցած իշխանութեան ու փարթամութեան վրայ նախանձել էր եւ է . միայն թէ անոնց ո՞վ ըլլալը եւ ինչ ընթացքի ծառայելով ազգիս տուած վնասները ցըցունել էր եւ է : Այն՝ քանի որ մարդ եմք գանուեր , կրնայ պատահիլ որ՝ շատ մը բարեկամ ունենայնէս զատ՝ թշնամի ալ ունենասնք եւ այնպիսեաց հետ ատելութեամբ վարուինք , ինչպէս որ բնական եղած բան մըն է . բայց երբէք գրքին մէջը յիշեալ անձանց հետ եւ ոչ ալ քեզի հետ ատելութիւն մը ունէինք եւ ունիմք ալ . ինչպէս որ քեզի համար զուէն ինքզ կրնաս վկայել , եւ այսքան յանդգնութիւննիս ալ քեզի դէմ որ ըրինք՝ զուէն եղար պատճառ , եւ ոչ մենք : Պատուելի , եթէ ոյս ու ատելութիւն ցըցունելով եւ կամ ատելութեան ոգեով մարդ պախարակելու ելնելու գէլինք , մինչեւ ցարդ մեծաւ իրաւամբ ազգային Արօնական նախորդ ժողովոյ անդամներէն ոմանց անունը տալով պէտք էր որ պախարակէինք իրենց ապօրինաւոր ընթացիցը համար . որ մեր արդարացի իրաւունքները ձեռու ընիս ըլլալով ալ՝ պատիւնիս եւ իրաւունքնիս ալ հինգ տարիէ ՚ի վեր զոհուած կեցած է , ու բնաւ երբէք հոգ տանող մ'ալ չի կայ , եւ ոչ ալ հարցնող կայ . . . թողունք այս անձանց առջին իբր խաղալիք ըլլալնիս . թողունք մեր հաղարատ որ անգամ բողոք բառնալով իրենց գիմնինիս . թողունք մեզի հետ առ երեսս բարեկամ՝ ձեւանալնին . թողունք ամենքն ալ զիս ճանաչելնին , եւ մենք ալ զանոնք ճանաչելնիս եւ ինչ եւ ո՞վ ըլլալնին գիտնալնիս , եւ այլն , եւ այլն : Ասոնցմէ ՚ի զատ , եթէ ատելութիւն ունեցած ըլլայինք , մինչեւ ցարդ պէտք

էր որ Աիկոմիդիոյ առաջնորդ Մաղաքեան Ստեփանն Յպիսկոպոսին հետ ունենայինք, եւ ունենալու ալ բաւական պատճառ եւ իրաւունք ունէինք, մանաւանդ մեր ըրած բարերարութեանը եւ համետութեանը փոխարէն մեզի դէմ մօտերս անոր ըրած զրպարտութեանը եւ ատելութեանը համար, բայց ազգասիրարար տարինք ասոնց ամենքն ալ ըստ որում այս եղածները ըստ մեծի մասին մեր անձնականին վերաբերեալ իրողութիւններ էին եւ են. եթէ այն իրողութիւններն ալ ըստ մեծի մասին եկեղեցւոյս եւ ազգիս ընդհանրութեանը վերաբերելու ըլլային՝ յայնժամ անոնք ալ մի առ մի կը նշանակէինք: Այսու ամենայնիւ զանոնք ալ որ մը երեւան պիտի հանեմք, ոչ միայն մեր պատիւը եւ իրաւունքը պաշտպանելու, այլ եւ Յկեղեցւոյս ու Ազգիս իրաւունքները պահանջելու եւ պաշտպանելու համար... քանզի անոնց մէջն ալ իրողութիւններ կան՝ (մանաւանդ վերջինին վրայօք) որ ազգիս ընդհանրութեան ուշադրութեանը կը վերաբերին... Բայց Արուսաղիմայ Պատրիարքին ու Մկրտաւիչ վարդապետին, եւ կամ քու ըրածներդ մեր անձնականին միայն վերաբերեալ չըլլալուն համար՝ պարտաւորեցանք թագուցեալ ճշմարտութիւնները անաչառապէս երեւան հանել, ճշմարտութեան եւ իրաւանց վկայ կենալով... Ասոնք ալ անցնինք:

Յկուր քեզի հետ մէկ հաշիւ մ'ալ տեսնենք ու վերջ տանք. այն է Ազգիս սուացուածոցը վրայօք ունեցած թշնամութիւններուդ համար խօսինք, ինչպէս որ վերերը մէկ քանին ալ ցըցուցինք:

Եւ դարձեալ, եթէ դուն Հայ էիր եւ Հայաս-

տանեայց Եկեղեցւոյ հարազատ որդի , ինչու մինչեւ
ցայժմ դանդաղելով այս վերոյիշեալ աղետալի միջոց-
ներուն մէջ եւ կամ գոնէ մեր հրատարակած Նկա-
րագրին մէջի աղէտքները ու Ազգիս սեպհականու-
թիւններուն 'ի կորուստ մասնուիլը տեսնելով եւ լը-
սելով հանդիսատես եզար ու զանոնք լուսթեամբ
պաշտպանեցիր , եւ մինչեւ ցարդ անոնց վրայօք
բան մը չի գրեցիր իրաւունք մէջ բերելով : Եւ որ
մեծն է՝ ինչո՞ւ գրքին մէջը նշանակած Ս. Համբարձ-
ման հսկայաչէն վանքերնիս փլցունեննուն եւ որիչ
չատ մը անոր նման աղետալի եւ ողբալի կորուստ-
ներնուս ու նկարագրութիւններնուս համար մինչեւ
ցայժմ բան մը չի գրեցիր , ու Ազգիս ունեցած սեպ-
հական ստացուածոցը պաշտպան կայնելով՝ անոր
իրաւունքը եւ պատիւը չի պահանջեցիր . . . որոնք
ըստ մեծի մասին քեզի ալ ծանօթ էր , եւ յարա-
ժամ երթեւեկութիւն ալ կընէիր ու կընես ալ Պօլ-
սոյ Երուսաղիմատունը . ուստի չի գիտցած չես կըր-
նար ըլլալ , եւ եթէ չէիր գիտեր նէ՝ գրքին մէջը
նկարագրելովնիս՝ հարկաւ անկից տեղեկութիւն ըս-
տացար . ուրեմն ինչո՞ւ անոնց վրայօք բան մը չի
խօսեցար . . . քանզի բերանդ առաջ չի գնաց . . . :
Գիտեմ , գիտեմ՝ չի խօսելուդ պատճառն ինչ ըլ-
լալը . քանզի տակաւին անոնք բոլորովին Լատի-
նաց ձեռքը չանցան , որ անոնց կողմը պաշտպանե-
լով իրաւունք ցըցունէիր , ինչպէս որ Յովակիմ Ան-
նայի Եկեղեցւոյն համար ըրիր . ասանկ չէ՞ մի , սով
բարեկամ Հայոց Ազգի , եւ սով իրաւարար փաստա-
բան Լատինաց . . . :

Արդ՝ Պարոն Չամուրճեան՝ դուն « 1698 թուա-

կանէն 'ի վեր Յովակիմ Աննային տունը կը պահանջէին Վատինք՝ ուրիշ քանի մը սրբազան տեղեաց հետ», կրսես. եւ յիշեալ Եկեղեցին ՓԱ. ԲԳ կը գնես. կըսեմք քեզի, ուրեմն հանդստացիր ու փառաւորուէ, քանզի ոչ թէ միայն յիշեալ տունը ձեռք բերին Վատինք 1856 թուոյն, այլ եւ 1859 թուին ալ՝ Ս. Ծննդեան գրան բանալին, նաեւ նոյն տաճարին մէջ 60 տարիի շափ առաջները մեր դասին մէջէն պատը ծակելով անիրաւի դուռ բացած էին, որն որ քանի մը տարի ետքն ալ մեր ազգասէր միաբանութիւնը բողոք բառնալով նոյն միջոցներուն գոցել տուած էր. այն եւս յիշեալ թուականին դժբաղդարար մեր ազգը հիմակուան պէս անհող ու տարածայն եւ անպաշտպան դտնելով շատ մը ապօրինատպէս պահանջած տեղերէն՝ յիշեալ դուռը բանալու արտօնութիւնը ստացան, եւ ինչպէս ըսինք տաճարին գրան բանալին ալ ձեռք բերելով միայն անոնցմով բաւականացան՝ սուրբերին Հայոց խեղճ եւ անտերունջ ազգին վրայ փորձել ուղելով . . . (ըստ որում թէ եւ Յունացմէ ալ շատ բաներ պահանջեցին՝ բայց չի կրցին ձեռք երկնցընել . . .) մընաց որ Հայոց ձեռքը մնացած սեպհական ստացուածքներէն՝ Վատինք չի կրցած ձեռք բերածնին ալ իբր զօրէն հրէի եւ հեթանոսի՝ Յունաց հետ միանալով հիմնայատակ ընել տունն՝ 'ի նախաալինս քըրիստոնէութեան ու մարդկութեան . . . այն է՝ Ս. Համբարձման հոլայաշէն վանքերնիս եւ սրբազան ուխտատեղին . . . :

Հեռուն չերթանք ս' Չամուրճի, քեզի ասկից աւելի դեռ մօտ ժամանակիս եղածը ցրցունեմք, որն

որ կարելի է միտքէդ ալ ելած չէ . արդ՝ եթէ Լատինաց իրաւունքը պահանջել եւ երեւան հանել կուղես , ահա անոնց ալ վարձքը կատար , եւ քուկինն ալ . քանզի 1859 Յունիս 19 մնացած կամ յուսացած ու մինչեւ ցարդ փափաքած սրբազան տեղերուն ալ (որով կերպիւ եւ իցէ) արտօնութիւնը ձեռք բերին լուսնայն Լատինք . որոնց ցաւերը ու տարածայնութիւններն ալ՝ անշուշտ ժամանակէ մը ետքը պիտի երեւան ելնեն . (ինչպէս որ արդէն մէկը 1861 Յունիս 6ին երեւան ելաւ Ս . Մինչեւան Տաճարին մէջ , ու քանի մը միաբան վարդապետնիս ալ ճղակտոր ելան : Ի վերայ այսր ամենայնի Լատին կղերաց ըրած անօրէնութիւններն ինքովերին մնալէն ՚ի դատ , ուղածնին ալ բռնի յափշտակեցին , եւ նոյն յափըշտակութիւնն ալ դեռ մնաց ձեռուրնին . այսու ամենայնիւ բան մը խօսող եւ իրաւունք պահանջող ալ չի կայ . . . այլ միայն տարածայնութիւն ու մէկզմէկ թշնամանել ու մէկզմէկու անուն կտարել կայ մեր մէջը . . .) եթէ չես իմացած , կարդա ուրեմն Մասիս լրագրին 587 թիւը , որ հասկանաս թէ կուսակցութեամբ եւ գաղտագողի ինչ արտօնութիւններ տակաւին ձեռք բերին Լատինք . . . եթէ այսուհետեւ մեր ձեռքը մնացած սրբազան տեղերէն մէկ բաժին մը յափշտակելու որ ըլլան Լատինք , պատրաստ կաց , որ եթէ ինձ նման Հայուն մէկը նոյն ժամայն ելնէ ու բողոքելով աղղին իրաւունքը յայտնելու որ ըլլայ , պատասխան տալով Լատինները պաշտպանես հրապարակական թերթերով , (եւ կամ պապանձելով իբր լուսնայն պաշտպանես անոնց անիրաւութիւնը . ինչպէս որ Ս . Համբարձման

վրայօք 24 տարիէ 'ի վեր բան մը չի խօսեցար, եւ ինչպէս այս վերջի Ս. Մննդեան վրայօք ըրածնունդէմ երեք տարիէ որ լսելեայն սպաշտպանեցիր՝ ու բերանդ յառաջ չի դնաց երկու խօսք ալ անոնց վրայօք շտուրցելու . գուցէ Զաքարիային բաղդին դիպած ես՝ այս կէտերուն վրայօք . . .) եւ ըսես թէ՛ 1859 թուոյն այս ինչ այն ինչ սրբազան տեղերը իրենց վաղեմի իրաւունքը ըլլալով ձեռք բերին Լատինք: Որոնց ցուցակն ալ անշուշտ ձեռք ձգած ես եւ ինչ ըլլալն ալ գիտես . ուրեմն կարելի է որ չես հասնիր այն օրին, ուստի այս օրուրնէ աշխատէ, մի վարանիր, եւ մի դանդաղիր, կամ առանձին գրութեամբ մը, եւ կամ 25 տարիէ 'ի վեր յայտարարութեամբ համբաւ հանած եւ շատ մըն ալ ստակ հաւաքած ուրուական եւ առասպելեալ Եկեղեցական պատմութեանդ՝ կամ լաւ եւս շահասիրական գրութեանդ մէջ անցուր ժամ յառաջ, որ ետքը Լատիններէն փառաւորուելով, ու մեր Ազգէն ալ ողորմիս հանել տալու ձգած շատ մը գրաւոր եւ անգիր յիշատակութեանդ պէս յիշատակ թողուս ապագայից . . . : Հիմա հասկըցար ո՞վ Տրոհնց . ինչո՞ւ հետուն երթալով ընդունայն տեղը կաշխատիս . եթէ հասարակութեան բան հասկընե՞լ՝ ու Լատինաց իրաւունքը սպաշտպանել կուզէիր նէ՛՝ ուրեմն Մասիսի յիշեալ թիւը, կամ անոր մէջի փարիզէն Պէլճիքայի Էնտեբանտանս լրագրին միջոցաւ հրատարակուած յօդուածին թարգմանութիւնը ցոյց տալիր . որուն վերջը այսպէս գրուած է . « Լատինները քանի մը նոր արտօնութիւններ ձեռք բերեր են (Նրուսաղիմայ մէջ) , որոց երկար ժամանակէ 'ի վեր

կը փափաքէին» , Ուրեմն փնօք Հոովմի , եւ աչքը լոյս Չամբարձեանին . . . եւ եղևկ ու վնյ Ազգիս Հայոց , որ անշուշտ ժամանակին անոնց ցաւերուն արտասուքն ալ պիտի թափէ . ո՛հ , ո՛հ . . . :

Ա՞՞՞վ թշուառութեանս եւ աղետալի արկածիցս . . . Արդե՞ս՞ք չարչարանաց գիշերը քանի մի կանայք , որք կուլային եւ կոծ կը դնէին 'ի վերայ Տեառն մերոյ երբ Գողգոթայ կը տանէին խաչելու նէ՛ միթէ նոյն կանայք Հնայ էին ազգաւ , եւ միթէ նոյն միջոցին Տէրն մեր յատկասէս 'ի վերայ Ազգիս մարգարէացաւ ասելով կանանց , թէ՛ « Գատերք Երուտաղեմի՛ մի լայք 'ի վերայ իմ . այլ լացէ՛ք 'ի վերայ անձանց եւ որդւոց ձերոց . զի թէ ընդ փայտ դալար դայս առնեն՝ ընդ չորն գլն՛ն լինիցի » : Ահա այսու մարգարէութեամբ ես համարիմ թէ՛ ո՛չ միայն Վեսպասիանոս եւ Տիտոս գալով Երուտաղեմի բնակիչներուն վիշտ եւ տառապանք պիտի տային (ինչպէս կը մեկնեն նախնի Հարք Եկեղեցւոյ) . այլ միանգամայն իր սուրբ պատուէրները բռնող եւ իրեն հետեւող ճշմարիտ աշակերտաց եւ քրիստոնէից ալ պիտի ընէին՝ իրեն կամացը եւ պատուիրանացը հակառակողք . եւ այս ալ ո՛չ միայն Հրէայք եւ Հեթանոսք , այլ ընդ հակառակն մինչեւ անգամ իրեն անուամբը պարծնցող սուտ քրիստոնեայք ալ պիտի տային յարածամ նոյն վիշտերը եւ հալածանքները . . . ինչպէ՞ս եւ կը ճշմարտէ այս մարգարէութիւնը Քրիստոսի՛ մի միայն 'ի վերայ Հայոց . որովհետեւ Քրիստոնէական լոյսը ընկալած օրէն 'ի վեր , ո՛չ միայն հեթանոսներէն , այլ առտեղ եւս քրիստոնեայ անուանող եղբարցմէն կրեց , եւ զեռ կը կրէ վասն

ճշմարտութեան եւ սիրոյն Քրիստոսի : Եւ քանզի զարմանք չէ այս . ըստ որում — վայտ դալարին Քրիստոսի՝ որ արարին յայնժամ Հրէայք , եւ առնեն խօս մինչեւ ցարդ իրեն անուամբը պարծենցողք՝ իրենց անարժան ընթացիւքը . ապա ընդ չորին , այսինքն՝ հետեւողաց ճշմարտին Քրիստոսի՝ զինչ լինիցի — : Ուստի կը մակաբերեմք , թէ անշուշտ նոյն ցաւակից եւ լացող կանայքն աղգաւ Հայ ըլլալու էին , եւ Քրիստոս ՚ի վերայ Ազգիս մարգարէացաւ յասելն որպէս թէ՝ — մի լայք ՚ի վերայ իմ դստերք Հայաստանի . այլ լացէք ՚ի վերայ անձանց եւ ՚ի վերայ որդւոց ձերոց — :

Եւ քանզի Հայոց Եկեղեցիէն զատ՝ մէկ քրիստոնէ ազգ մը չեմք կարեր գտնել , որ այնքան եւ անշափ վիշտեր ու տառապանքներ կրելով՝ արտասուք թափէ , եւ միանգամայն Քրիստոսի սուրբ պատուիրանացը հետեւելով՝ զինքը հալածողներուն ու նեղողներուն հետ սիրով եւ եղբայրաբար վարուի . եւ զարմանալին ու առաւելն է՝ անոնց համար ալ աղօթէ . ինչպէս որ Տէրը սորվեցուց — Օրհնեցէք զանիծիչս ձեր . բարի արարէք ատելեաց ձերոց , եւ աղօթս արարէք ՚ի վերայ այնոցիկ , որք լլկենն ըզ ձեզ եւ հալածեն — : Եւ այս պատուէրին համեմատ յարածամ Հայկական Ս. Եկեղեցին կաղօթէ ալ իր պաշտամանը մէջ ըսելով — Ղաան ամենայն անձանց քրիստոնէից եւ տանց հաւատացելոց՝ զՏէր ազաչեցուք — : Եւ ահա ինչպէս ըսինք , թէ Հայկական Աթոռղիկէ Քրիստոսական Ս. Եկեղեցւոյ վրայ կերելի մի միայն այս ճշմարտութիւնը եւ պատուիրանազահութիւնը , հետեւաբար Հայկական Ե-

կեղեցւոյ վերայ կը ճշգրտէ այս մարգարէութիւնը Տեառն մերոյ, Ղաւանորոյ ուշ գնելով Առաքելոյն զուրցածին, եւ անկից օրինակ առնելով համբերութեամբ կը տանի այն վիշտերը, որք յարածամ կուգան իր վերայ, եւ որն որ Սրբազան Առաքեալն ալ երբեմն կը կրէր. այսինքն — վիշտս 'ի հեթանոսաց, վիշտս 'ի քրիստոնէից, վիշտս 'ի սուտ եղբարց. վիշտս յընտանեաց եւ յազգականաց. կամ նոյն է՝ վիշտս 'ի հայ անուամբ պարծենցողաց — :

Ապա ուրեմն կըսեմք, թէ Չամուրճեանի պէս անձինք ինչ որ կուզեն՝ թող ընեն, եւ ինչ որ կուզեն թող զրուցեն. գիտնալով որ՝ անոր պէս անձինք շատ պիտի գային, որպէս զի գիրն 199ի . . . ինչպէս որ անոր պէս շատերը եկան ու շատ ալ անօրէնութիւններ ըրին Հայկական Ս. Եկեղեցին քայքայելու համար. բայց Եկեղեցիին բան մը չի կարացին ընել, այլ միայն թէ իրենք փշրեցան ու կորսուեցան. . . եւ չը գիտեմք թէ արդեօք տակաւին ինչեր եւ որպիսի անձինք պիտի գան ու երեւին եւ ազգիս վերայ պիտի յառնեն . . . եւ ահա ասոնք գիտնալով երկայնատութեամբ եւ համբերութեամբ տանելու եմք, որ ստանամք մեր հոգին. ինչպէս որ կը պատուիրէ Տէրն մեր, ասելով թէ՝ « Համբերութեամբ քննելով ստասջիք զոգիս ձեր » :

Անիք բանիս, ահա մինչեւ ցայս վայր տեսնուեցաւ, եւ կարծեմք թէ՝ կրցինք հասկցընել եւ ապացուցանել թէ՝ Յօհաննէս Պատուելին, ո՛չ միայն ճշմարտութենէ ինկած կամ խոտորած է, այլ եւ Հայ ազգիս եւ Հայկական Ս. Եկեղեցւոյս՝ կրօնիցը, իրաւանցը, պատւոյն, եւ ստացուածոցը թշնամի է

ու խանդարիչ . եւ որ մեծն ու ցաւալին է , Ազգիս
 իրաւունքը եւ պատիւը տեղը տանելու համար աշ-
 խատող եւ ջատագով կեցող Անձանց ալ՝ թշնամի
 է , զբպարտիչ է , պախարակիչ է , եւ մինչեւ ան-
 դամ մասնիչ է Ուրեմն այս ամենայայտնի ա-
 պացոյցներնիս տեսնուելէն եւ յայանուելէն ետքը՝
 այսուհետեւ ինչ յարգ եւ ինչ պատիւ տալ կը վայ-
 լէ նէ՝ յիշեալ Պատուելիին թող տայ Ազգը ու նոյն
 աչօք նկատելով չըլլայ թէ վերստին խաբուի զա-
 նի Հայ եւ Հայ ազգիս ու Ս . Եկեղեցւոյս բարեկամ
 եւ հաւատարիմ որդիներէն մէկը կարծելով . եւ ե-
 թէ մինչեւ ցարդ զինքը չը գիտցող ու չի ճանչցող
 կար նէ՝ ահա փոքր 'ի շատէ իրեն սով եւ ինչ ըլլալը
 յայանեցինք ու տեսանք իր նկարագիրը Արկին
 կըսեմք , չըլլայ թէ այսուհետեւ անոր երբեմն պօս-
 պօսող ձեւերէն ու վարմունքներէն , եւ երբեմն ալ
 պոռոտող ձայներէն ու զրուցուածքներէն խաբուի
 Ազգը . որով չըլլայ թէ յետինն լինի շար քան զա-
 ռաջինն քանզի փորձեալն կրկին փորձել յխա-
 բութիւն է , է , եւ է : Եւ քանզի « ծառ շար սը-
 տուզ բարի չի կրնար առնել այլ իւրաքանչիւր
 ծառ 'ի պողոյ իւրմէ ճանաչի » . Աստուածային է
 վճիռս այս

Աերջապէս զիտեմք , որ այս զուրցածներնիս՝ ի-
 բրեն իրր թէ փառք մըն է , չըսեմ թէ՝ իրեն հացին
 եղ քսել մըն է . ըստ որում կուզէ որ այս օրինակ
 անարգական խօսքերով պսակեն զինքը , որ իր ձեռ-
 քը առիթ մը ունենալով զանոնք լատինաց կամ
 ճիզուրիթաց ընկերութեան ներկայացընէ եւ անոնց-
 մէ իրաւունք պահանջէ , ըսելով թէ՝ — տեսաք ձեր

Յկեղեցին ու ձեր իրաւանցը պաշտպան կենալովս՝
 ինչեք կըսեն ու կը գրեն ինձ համար . վասնորոյ
 դուք ալ այն աչօք նայեցէք ինծի, եւ այլն ըսելով
 աւելի փառաւորուի անոնցմէ . . . չէ նէ ազգին գը-
 րիչները անխօսուն մնան նէ՝ ինչ կը շահի խեղճը . . .
 այլ ազգին գրիչները գրգռելու նիւթեր ու առիթ-
 ներ կը փնտռէ յարաժամ, որ իրեն դէմ գրելով պա-
 խարակեն զինքը, որ ինքն ալ կամ տեղեկութիւն
 ստանայ եւ կամ շահի անկից՝ որով կերպիւ եւ ի-
 ցէ, (եւ այս վերջինն ալ բազում իրաւամբ, վասն
 զի ազգէն ինչ սորվելիք ունի խեղճը, քանզի աս օր
 կայ նէ վաղը չի կայ . . .) եւ ահա այս օրինակ պատ-
 ուելի մըն է այս անձը . ուստի բան չունիս նէ՝ գրէ
 ու գրէ, տպէ ու տպէ . նայէ կրնաս իրեն բան հաս-
 կըցըներ ու վերջը կրնաս բերեր նէ՝ ճակատդ կը
 դիզեմ, քանզի մէկուն տասը գրելէն ետքը՝ վիճա-
 բանութեան ու կռուոյ դռներ ալ կը բանայ առջիդ,
 որով տարածայնութեան ալ պատճառ կըլլաս . անոր
 աղէկը այս մարդուն ինչ ըլլալը այսքան յայտնուե-
 լէն ետքը լռութիւնը պատուելով՝ լռու կենալու ու
 անոր դէմ բան մը գրելու չէ, եւ ոչ ալ պատաս-
 խանին պատասխան տալու է, որով ոչ միայն յար-
 գըդ կը կորսնցընես, այլ եւ անոր գրածին ու խօ-
 սածին ալ կերպով մը յարգ տուած կըլլաս : Աւրեմն
 եթէ այս կերպը բռնուի՝ իսկոյն ինքն ալ բռնուե-
 լով խաղաղութիւն կըլլայ ազգիս մէջ՝ եւ ինքն ալ
 լռելով իսկոյն կը ճաթի . . . քանզի այն սովորած է
 միշտ կռիւ յարուցանելու եւ ատելութիւն սերմա-
 նելու . ուստի եթէ անոր մտիկ ընող չըլլայ ու պա-
 տասխան տուող մ'ալ չըլլայ՝ իսկոյն կը ըմնայ . . .

եւ Թոնն այս էր Հանգուցեալ Յակոբ Սրբազան Պատ-
րիարքին պատուէրն ալ . . . : Նա մանաւանդ քանի
որ անոր դրութիւնները եւ վարդապետութիւնները
քանի մը անգամ ժողովիւք հերքուեցաւ, ու իբրեւ
մոլորամիտ եւ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ թշնա-
մի վճռուեցաւ նէ՝ — Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ
հաւատոց եւ կարգադրութեան անբիծ եւ անարատ մը-
նալուսն պաշտպանութեան սահմանուած ատեաննէ մը* —
ուրեմն իրաւունք չունինք, մանաւանդ թէ անպատ-
ուութիւն է վերստին անանկ մոլորամիտ մարդու մը
դէմ խօսիլ ու գրիչ շարժեցընել. ասոնք զիտցած
ըլլալով՝ կը յորդորեմք ազգիս գրիչներն՝ որ համ-
բերութեամբ տանին ու իրենց գրչին պատիւը պա-
հեն . . . :

Բայց 'ի վերայ այսր ամենայնի՝ մեր քրիստոնէա-
կան պարտաւորութիւնն է դարձեալ, որ ոչ թէ
միայն ազօթելու եմք այսպիսեաց սուրբ դարձին
համար, այլ եւ յորդորներ ու խրատներ տալու պար-
տաւոր եմք. եւ քանզի զիտնալով որ՝ մեր Պատ-
ուելին որքան որ ըստ աշխարհի գիտուն ճանչցուած
ալ է նէ՝ սակայն մարդ է սխալական. եւ անոր պէս
շատ զիտնականներ ու շատ փիլիսոփաներ եւ երե-
ւելի իմաստուններ սխալած ու մեղանշած են. ու-
րեմն մեր Պատուելի Յովհաննէսն ալ նոյն աղետից
ենթակայ ըլլալը տեսնելով կը դարձունեմք մեր գը-
րիչը ու ցաւալցարար եւ անկեղծարար յորդորելով

* Տես Քրիստոսական Եկեղ. կառ. ամբ. տետր. Յառաջաբա-
նին ԺԶ, որ հրատարակեց ինքը Չամուրճին 1861ին.


մը կըսեմք իրեն, թէ՛ դարձիր Պատուելի, դարձիր այդ ճանապարհէդ . եւ գիտցիր որ ոչ միայն խնաստուն փիլիսոփայք, այլ եւ մինչեւ անգամ Առաքելոց գլուխն Պետրոս՝ քեզի պէս երբեմն իր մարդկային տկար դատողութեամբը դատելով՝ Տեառն մերոյ ըրած անօրէնութիւններուն դէմ կազելով՝ յանդիմանութիւն կրեց իր Աարդապետէն, եւ որ առաւելն է, երբեմն ալ Չարչարանաց ու մատնութեան ժամանակը՝ իր Տէրը եւ Աարդապետը ուրացաւ՝ աշխարհային վտանգներէն երկիւղ կրելով, Բայց երբոր Տէրն մեր գթառատ սիրովը դարձաւ եւ հայեցաւ նէ՛ ՚ի Պետրոս, յայնժամ նա պատկառելով՝ սորջաց ու լացաւ իր ըրածներուն վրայ ու դարձի եկաւ . եւ դառնալովը Տէրն մերներեց անոր տկարամտութեամբ ու մարդկութեամբ ըրած ու գործած յանձանացը, ու վերստին հաստատեց զանի՛ իրեն առաքելոց դասուն դասակից ընելով:

Ուրեմն եւ դու ալ այժմ օրինակ առնելով քեզի նոյն Ա. Առաքելալը, խրախուսուէ՛, որքան ալ քու տկար մարդկային բնութեամբդ եպերելի յանցանք գործեր ես նէ՛ առ Նկեղեցին Քրիստոսի եւ առ Ազգըն Հայոց, գիտցիր՝ որ այժմ Նկեղեցին որ է Հարան Քրիստոսի՝ դառնալով երեսդ կը հայի պատկառանօք, եւ իբր լսելեայն քեզի կաղաչէ ու կը խնդրէ, որ իր վսեմ նայուածքէն պատկառելով, կամ նոյն ինքն իսկ Փեսային Նկեղեցւոյ աներեւութարար երեսդ հայելէն դարհուրելով՝ պատկառիս եւ ամչնաս ու սորջանաս, քու մինչեւ ցարդ թէ՛ գիտութեամբ եւ թէ՛ անգիտութեամբ, երբեմն ըրած անօրէնութիւններուդ եւ երբեմն տուած գայթակղութիւններուդ

վերայ, որով յայնժամ ներող եւ դժառաստ Հարսէն Քրիստոսի՝ ներողութիւն առնելով՝ քու առջի պատիւդ ստանաս եւ միաբանիս քու հարազատ Հայ եղբարցդ հետ, եթէ ճշմարիտ Հայ ես եւ ճշմարիտ քրիստոնեայ: Ապա թէ ոչ՝ անանկ Արծնական ժողովէն՝ նոր ՚ի նորոյ հակառակ քեզի համար արուած առջի վճռոց վերստին պատիւդ տեղը բերելու համար ընդունած վկայագրովդ չես կրնար ստորագրեա ելլալ, եւ անանկ ո՛ր եւ իցէ կուտակցութեամբ Արբազան Աթոռովիկոսէն քու նոր վարդապետութիւն ներդ հաստատելու ու քեզի Հայաստանեայց Եկեղեցւոյ իբր հաւատարիմ որդի ճանաչել տալու նպատակաւ ծանուցադրելով ու կոնդակներով չես կրնար ազատիլ ու արատը վրայէդ բառնալ, եթէ մինչեւ անգամ յերկնից հրեշտակ աւետարանէ քեզի համար ընդունանն է . . . այլ մինչեւ որ քու ըրած անօրէնութիւններդ ու դրած մոլորական նոր վարդապետութիւններդ յետս կոչելով դայթակղութիւնը վրայէդ չի բառնաս: Քանզի այնպիսի վկայագրաց արժէքը քանի՛ն եւ ինչ նարատակաւ ըլլալը ազգիս ողջամիտ մասին ու ներքին ցաւոցը տեղեակ եղող անձանց շատերուն ծանօթ է . . . եւ ըստ որում պէտք է որ դուն՝ քու գործ քերովդ ճանաչել տաս ամենուն ինչ ըլլալդ, եւ ոչ թէ վկայագրոց կարօտելով դուն զքեզ հաւատարիմ ցըցունես Ազգին: արդեօք ինչ պէտք էր որ 70 տարիքդ անցընելէն ետքը քու Հայաստանեայց Եկեղեցւոյ հաւատարիմ որդի ըլլալդ հաստատելու համար Ազգային Արծնական ժողովէն եւ կամ Արբազան Աթոռովիկոսէն վկայագրի առնելու ստորագրեցար, ուրե-

մըն հարկաւ մէկ կասկած մը կար քու վրադ . . . ուրեմն ամօթ եւ մեծ ամօթ է քեզի ատոնք՝ քան թէ պատիւ . . . գոնէ Քրիստոսին շնորհից տուած վրձինն ալ չի մտաբերեցիր՝ որ շնորհից Աբրահամով կը պարծենային նէ՝ Տէրն մեր շնորհից դէմ գոչեց ըսելով — Եթէ որդիք Աբրահամու էիք, զգործսն Աբրահամու գործէիք — ուրեմն կըսեմք մինք ալ քեզի, եթէ դու ալ Լուսաւորչական Եկեղեցւոյ հարազատ որդի էիր՝ զգործսն նոյն Եկեղեցւոյ գործէիր . . . եւ ոչ միայն Լուսաւորչայ անուամբ պարծենայիր . . . : Ո՛հ Պատուելի քու ամեն մէկ ընթացքներդ մէկ մէկ մոլորութիւնն են եւ քեզի ալ անպատուութիւն . . . : Ուրեմն դարձեալ կըսեմք, դարձիր Պատուելի դարձիր այդ վարմունքներէդ, եւ դիտցիր որ ատոնք քեզի պատիւ չի բերեր . այլ քու պատիւդ տեղը բերողը՝ միմիայն քու սուրբ դարձդ է : Քանզի գիտնաս որ ինչպէս ըսինք, սուրբն Աեսորոս անգամ մեղանչեց՝ ու քեզի պէս ալ կերպ կերպ մոլորեցաւ ու քեզի պէս ալ անկաւ ճշմարտութենէն . բայց վերստին դառնալովը՝ իր պատիւը տեղը բերաւ ու մինչեւ անգամ Առաքելոց գլուխ ալ կոչուեցաւ : Ուրեմն կըսեմք վերստին, թէ օրինակ առնելով անկից՝ դարձիր վերստին, դարձիր ազաչեմ, եւ Առաքելոյն պատուիրածին պէս — յոր կոչումն կոչեցար Պատուելի, ՚ի նմին կայջիբ — որ վառաւորիս ոչ միայն Ազգէն Հայոց, այլ եւ Քրիստոսէն : Քանզի օտար վարդապետութիւն, օտար գրութիւն, եւ միանգամայն օտարի դուռը կորուստ է . . . եւ Քրիստոսի ուղղափառ նախնական Եկեղեցւոյն սկզբանց եւ ընթացից

հակառակ եւ ընդդէմ է այդ վարմունքներդ , հե-
տեւաբար Հայ Ազգին ու անոր մխիթարութիւն մը-
նացած սրբազան կրօնին դէմ մեղանշում մըն է . . . :
Ապա ուրեմն դարձիր աղաչեմ եւ դարձուր եւ յոր-
դորէ քու մտորցուցած եւ գայթակղութիւն տուած
ընկերներդ ալ . . . եւ քու բարի գործքերդ եւ հա-
ւատարմութիւնդ ցըցունելով քեզի ծնող Հայաս-
տանեայց ամենամաքուր կաթողիկէ Եկեղեցւոյն ,
եւ իբրեւ անստակ որդի մեզայ գոչէ անոր գիրկը
իջնալով , որ եւ նա ալ համբուրելով քո հակառդ իր
գիրկը առնու գքեզ , որմէ դուրս եւ հեռի մնալովդ
կորստեան չի մատնուիս . . . այն ատեն ողջ լեր ո՞
Հայրապատիւ եղբայր : — Ա՛հ երբ իցէ զի տեսից
զօրն այն . . . :



Ա Ձ Գ

Ահա այսքանը բաւ համարելով մնացածն ալ
պիտի կրնաս տեսնել՝ մեր 1864 թուոյն հրատարա-
կած աշխատութեանց ցուցակին մէջ ակնարկած
5, 6, 7, 8, 9, 10, 17, 18, 20, 21 գործքերնուս
մէջ քու նոր վարդապետութեանցդ եւ քու անվա-
յել շարժմանցդ արդիւնքը եւ արժէքը ինչ եւ
քանիի ըլլալը , եթէ զանոնք ազգասիրաց օժան-
դակութեամբը 'ի լոյս ընծայի . եւ կամ թէ դու
ալ ողջ առողջ ան օրուան հասնելու արժանանաս՝
յայնժամ ո՞չ միայն դուն՝ այլ եւ Ս . Եկեղեցւոյս
դէմ մարանշող հակառակորդներն ալ պիտի կա-
րենան տեսնել . բայց աւանդ աշխատութեանս , որ ե-
րեսի վրայ մնացած է . . . :

Խ Օ Ս Ք

ԱՌ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

« Որովհետև չկարէ ամենայն մարդ միօ-
« բինակ կեալ, մին 'ի միւսմէն կառաւիա-
« բի. վասնորոյ ամենեքին որ դահակալեն՝
« ոչ անձանց պարտին գրել զիշխանութիւն
« կարգին, այլ հայել 'ի հանդամանս վի-
« ճակին. և ոչ խնդամտել ընդ վերագոյն
« լինել իւրեանց քան զայլ մարդիկ, այլ
« օգտել նոցա » :

(ԳՐ. ՀԱՅՐ. ՀՈՎ.)

Թէպէտ եւ կը գրէ Յսայի մարգարէն ըսելով, թէ
— Արդարութեան պաշտօնը լուծիւնն է — բայց
սակայն երբեմն մարդս՝ լուծեամբ ոչ միայն իւր
անձին, այլ եւ բարեկամաց՝ եւ մինչեւ անգամ աղ-
ղին ալ մնաս կուտայ. ինչպէս որ մեր այս խօսքը
կերպիւ մը կապացուցանէ Մեծն Գրիգոր Հռովմի
Հայրապետը, ըսելով թէ՝ — Յորժամ կարի լուկացք
կրեն ինչ յանիրաւի, եւ ցորչաւի ոչ ինչ խօսին զայն-
մանէ զոր կրենն՝ սաստիկ յոյժ ցաւագնին . . . վասն
զի վերք թագուցեալք առաւել չարչարեն (ղմարդ).
բայց յորժամ ներքին փտութիւնն 'ի դուրս գայ,
կենսատիթ լինի յայննութիւն ցաւոյն. վասնորոյ քաջ
գիտասցեն զայս տարադէպ լուկացք, զի մի 'ի վիշ-

տըս անդ զոր կրեն , սլինդ ունելով զլեզուն՝ սաստկացուն զբռնութիւն ցաւոյն . եւ վասն այսորիկ յուչ ասնել նոցա պարտ է . . . զի ՚ի ձեռն դեզոյ բարբառոյն՝ դարման լինի առողջութեան — :

Եւ ահա այս Արքայան Հայրապետին վկայութենէն համարձակութիւն ասնելով կը բարբառիմք եւ յուչ կտանեմք Ձեր պատկառելի Արժնական եւ Քաղաքական ու Երեսփոխանական Վարչութեան Ատենիդ , որպէս զի դարման առողջութեան վիրացս գըտանիցեմք . ուստի կաղաչեմք , որ Ձեր ուշադրութիւննիդ զբաւէք յայտնած վէրքերնուս ու ցաւերնուս վրայ : Եւ թէպէտ ասկից յառաջ ըստ բաւականին նկարագրեցինք եղած ու ունեցած վիշտերն ու ցաւերն Ազգիս , բայց դժբաղդարար նոյն միջոցներուն ազգը տարածայն գտնուելով , եւ կամ վատթար անձանց շողօքօրթական ու շահասիրական գըրութեանցը ու բանդագօշանացը նայելով մեր ազերսին՝ մեր սղրին՝ մեր հառաչանացը՝ ու մեր ցաւակցութեանը , եւ մեր ազգօգուտ առաջարկութիւններնուս ու դիտողութիւններնուս նայող ու գթացող մը չեղաւ : Սակայն այժմ առիթ ասնելով սոյն գառաքննական աշխատութենէս՝ որոնք որ ազգիս ունեցած վիշտերուն եւ Երուսաղիմայ Աթոռոյն կըրած աղէտքներուն վրայօք էր , եւ տեսնելով ալ Ձեր Ազգասիրական փախաքը՝ որ Ազգօգուտ իրողութեանց ձեռնամուխ կըլլաք , ուստի համարձակեցանք հետեւեալ առաջարկութիւններնիս ընելով մեր դիտողութիւններն ալ մէջ բերել՝ կամ թէ կրկնել Ձեր Մեծապատուութեանը . եւ այս ալ միմիայն ձեր աւժանելի աշխատութեանց դիւրութիւն մը կամ խոր-

հուրդ մը տալու փախաքանօք . եւ եթէ զանոնք հաճելի եւ ընդունելի դատէք՝ կը խնդրեմք որ անոնց գործադրութեանը աշխատիք . ապա թէ ոչ՝ եթէ հաճելի չի դատէք՝ կամքը ձեր Մեծապատուութեանն է . յայնժամ մենք ալ մեր սովորական լուծիւնը պատուելով՝ լուռ կը կենամք . մտածելով եւ կամ համարելով որ՝ Գուք առաւել քան զմեզ գիտէք ու կը ճանաչէք անոնց օգտակար կամ անօգուտ ըլլալը , եւ թէ անոնց գործադրելու ժամանակը ըլլալն ու չըլլալը . եւ այս Ձեր բարեհաճ կամացը ու խղճմը-տանացը կը թողումք . . . :

Ապաքէն ինչ է մեր զգացած ցաւը , եւ ինչ է մեզի վիշտ եղած ազգիս վէրքերը , եւ ինչ է արգեօք մեր խնդիրներն ու առաջարկութիւնները . եւ ահա մենք հոս մի առ մի կը նշանակեմք համառօտակի , եւ դուք ալ Տեւորք՝ առանց կուսակցութեան ողբոյ ուշի ուշով նկատելով եւ կարդալով զանոնք , 'իսէր Աստուծոյ եւ 'իսէր Ազգիս՝ անոնց գործադրութեանը ձեռք զարկէք . ազաչեմք :

Նախ եւ յառաջ Երուսաղիմայ մէջ ունեցած աղէտքներնուս ու կորուստներնուս վրայօք խօսիմք . որոնք մեր այս դատաքննական ու վիճաբանական գրուածոցս նիւթ եղան , եւ որոնց պատասխանն ալ արդէն տուինք , ինչպէս որ տեսնուեցաւ հանդերձ ապացուցական ճշմարտութիւններով : Այսու ամենայնիւ հոս դարձեալ զանոնք կը նշանակեմք , եւ անոնց բացատրութիւններն ալ՝ կրնայ տեսնուիլ՝ մեր հրատարակած Նկարագիր աղետից Երուսաղեմի մակադրով գրքերնուս 124—155 էջերուն մէջ . որք են հետեւեալները :

Ա. Ս. Ծննդեան տաճարին բաժանորդութիւնը , եւ Անոր Գրան բանալին ձեռք բերուելուն խնդիրը որն որ նշանակեր եմք յիշեալ աշխատութեանս մէջ :

Բ. Հոն տաճարին մէջ մեր դասին մէջէն դուռ բանալով Լատինք՝ քանի մը տարիէ 'ի վեր անոնց ըրած անօրէնութիւնները՝ մանաւանդ 186 Վին ալ բռնի ճանապարհ պահանջելով մեր բաժինէն ձեռքերնիս բան մը չի ձգելու ու միշտ խռովութիւն յարուցանելու նպատակաւ անցուդարձ ընելնուն արգիլուիլը եւ յիշեալ դրան գոցուիլը կը խնդրուի . որոնց բնաւ իրաւունք մը չունին Լատինք . . . :

Գ. Ս. Յարութեան տաճարին շինութեանը վրայ ակնարկածնիս ալ հոն գրքին մէջ կրնայ տեսնուիլ . . . :

Դ. Ս. Գողգոթային վրայօք ըրած գլխողութիւննիս՝ նմանապէս . . . :

Ե. Աշխարհամատրան տաճարին՝ այսինքն Ս. Յարութեան տաճարին մէջ ունեցած ջրհորնիս , որ 1859 ին Յոյները բռնի յախշտակելով իրենց խրացուցին) . . . :

Զ. Քրիստոսի Ս. Համբարձման օտնակոխ տեղւոյն խնդիրը . . . :

Է. Հոն բոլորաթիքը ունեցած հողերնուս ու գետիններնուս յախշտակուիլը , որոնք որ 1856 թուոյն Աթոռը բազմագումար գրամ վատնելով ձեռք բերած ու վանք ալ շինած էր նոյն ձիթենեաց լերան վրայ , ուստի այն կորուսաներուն ձեռք բերուիլը . . . :

Ը. Յուլակիմ Աննայի տանը վրայօք բաւականէն աւելի տեղեկութիւն տուինք վերերը , անոր ալ խնչպէս ընելը դարձեալ Ձեր կամայք կը յանձնեմք . . . :

Թ. Եաֆայի Գարաւնքիւնային տեղւոյն խնդիրը՝ որն որ երեսի վրայ կեցած է . . . :

Ժ. Հիւպատոս Մուրատ իշխանին հոն Եաֆայու մէջ Աթոռին կտակաւ ձգած մեծաշէն տունը ու ազարակը՝ ետ առնուելուն խնդիրը, որն որ Ազգիս ունեցած ցաւերուն վրայ ցաւ մըն ալ զանի ապագայիցս յիշատակ թողուց հանգուցեալ Յօհաննէս Պատրիարքն Երուսաղեմի . . . :

ԺԱ. Ս. Աթոռին ունեցած թէ Եաֆայի, թէ Շամ Թարապուսի, թէ Եգիպտոսի, թէ Ալպրոսի, եւ այլն եւ այլն սեղերուն ու երկիրներուն մէջ ունեցած կալուածաբեր յիշատակները (վազըֆները) յափշտակութենէն ձեռք բերուելուն հնարը նայվի, որոնք որ քիչ օգուտ չեն բերեր Աթոռին՝ հետեւաբար Ազգիս . . . :

ԺԲ. Ս. Յակոբայ վանքերնուս սեղանատան կից աւերակ մնացած ձմերանոցին պարտէզը՝ որով կերպիւ եւ իցէ ձեռք բերուի, որ ապագայ դալիք գէշութիւններէն վանքն ալ ազատի . . . :

ԺԳ. Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ Լուսարար կանգնեցընելու համար արտօնութիւն մը ձեռք բերուի, որուն արգելք կըլլան Յոյն կղերները, եւ որմէ գոյացած արգիւնքն ալ իրենք կը յափշտակեն . . . : Ահա այսքանը գրքին մէջի ակնարկածներս ու նըշանակածներս են . եւ ասոնց հետ հետեւեալներն ալ կը խնդրուի :

ԺԴ. Ս. Արօնին քովի եղած պարտիզին վրայօք ալ վերը յիշեցինք՝ Դատաքննութեանս մէջ, անի ալ ժամ յառաջ ձեռք բերուի. որոնց սէնեւոնէրն ալ կեցած են, ու կորուստն ալ հինցած չէ, ու կրնայ գիւրին կերպիւ ալ յաջողիլ գործը . . . :

ԺԵ. Ս. Յարութեան տաճարին փոքրիկ դրան բա-

նային վերստին ձեռք բերուելուն արտօնութեանը ջանք ըլլուի . որն որ մեր անարժան միաբաններէն մէկուն ձեռօքը յափշտակեցին Յոյն կղերները , ասկից 25 տարիի չափ առաջները . . . :

ԺԶ. Բեթլեհէմի մէջ՝ մեր Ազգին գերեզմանատան վրայօք ըրած ցաւակցութիւննիս նայվի՝ դեռ բուրովին Յոյները չի յափշտակած՝ որուն վրայօք ալ տեղեկութիւն տուեր եմք , յիշեալ զրքին , եր. 57-ին մէջ :

ԺԷ. Յիշեալ զրոյն մէջ՝ 154—168 էջերուն մէջ Երուսաղիմի բարեկարգութեան վրայօք պէտք ըլլալիք Ղիտողութիւններնիս ըրած եմք , ուստի անոնց դործադրութեանը վրայօք նայուի , ու այնպէս բարեկարգութիւն տրուի Ա. Աթոռին :

ԺԸ. Երուսաղեմայ Աթոռոյն Պօլսոյ մէջ ունեցած փոխանորդութեանը համար ալ կըսեմք , թէ ինչպէս որ Աթոռին 'ի վաղուց անտի անօրէնութիւնն է , որ իր վիճակին մէջ եւ իր իրաւասութեան տակը գըտնուած թեմերուն տարեկան Տեսուչ կը կարգէ , նոյն օրինակ ալ ըլլայ Պօլսոյ մէջ ունեցած փոխանորդութիւնն ալ , որպէս զի տարածայնութեան ու կուսակցութեան պատճառներն ու առիթներն ալ վերնայ . . . որով թէ Աթոռը անգորր մնայ , եւ թէ Պօլսոյ Ազգային Վարչութիւնը . . . :

ԺԹ. Ո՛հ , դարձեալ թշնամի մըն ալ պիտի յարուցանեմք մեր վրայ . . . դարձեալ ատելութեան ողի մ'ալ պիտի ունեցած ըլլամք . . . եւ դարձեալ տարածայնութեան տեղի մ'ալ տուող պիտի համարուինք . . . քանզի այս է միայն բաժին ճշմարտասիրաց եւ ազգասիրաց . . . : Բայց մենք սովրեր ու

յանձնատու ալ եղեր⁷ հմք մինչեւ ցարդ ճշմարտութեան եւ ազգիս⁷ իրաւանցը ու պատուոյն պաշտպան կենալու² համար վնաս կրելու՝ հալածանք քաշելու եւ² անարդու թիւն⁷ տեսնելու . վասնորոյ ասի ալ անոնց կարգը դասելով, լսածնիս ու գիտցածնիս հոս կը նշանակեմք . (որուն ստոյգ ըլլալը ու չըլլալն ալ Ձեր⁸ խուղարկութեանը կը թողումք յայտնել եւ ինչ պէտք է նէ տնօրինել անոր վրայօք :

Արսեն թէ 'ի տէր հանդուցեալ . . . Երուսաղեմի Յօհաննէս Պատրիարքը³ 1857 թուին Ազգային Վարչութիւնը երբ ժամանակ որ Պօլիս բերել պիտի տայր, յիշեալ Պատրիարքը վախնալով չըլլայ թէ Վարչութիւնը իրեն ըրած անվայել վարմունքներուն համար զինքը անգամ մ'ալ Աթոռը չի վերադարձնէ . վասնորոյ (Աթոռին գանձէն չգաղտագողի 20,000 լիրա ոսկի հանելով չըէայ սեղանաւորի մը տուաւ, որուն անունը Եազուպ Տէպպահ կամ Տնապպահ կը կոչուի (այսինքն մսագործ — խասապ — Յակոբ կըսուի), ու Երուսաղեմի չըէից ժողովին ալ խորհրդականներէն մէկն է . որով կամ ապստամբելով չի պիտի դայր Պօլիս, եւ կամ զինքը Աթոռէն վար առնէր Ազգային Վարչութիւնը՝ յայնժամ հանգիստ կեանք վարելով այն դրամով պիտի ապրէր . բայց նոյն միջոցին խնդիրը ուրիշ կերպարանք առնելով Պօլիս չեկաւ նէ՝ յիշեալ դրամոց գումարն ալ յիշեալ չըէինքովը մնաց պահեստի՝ որուն տոկոսը կառնէր : Եւ ըստ որում Յօհաննէս Պատրիարքը մեռնելը ինչ բան ըլլալ մտածողներէն չէր . . . ուստի 1860 թուին վերջերք կաթուածով մը յանկարծամահ ըլլալովը՝ կը մակարեբին ունանք թէ՛ յիշեալ դրամոց գումարը նոյն

Հրէին քովը մնացած ըլլայ . եւ որովհետեւ կարծիք
ընող կայ, որ յիշեալ ստակը Պատրիարքին ներքին
մտերիմ փասքալ կոչուած Պ. Յակոբին ձեռքը կամ
անոր խորհրդովը տրուած է յիշեալ Հրէին, վասնոր
րոյ կը կարծեն թէ՛ յիշեալ գումարը՝ յիշեալ Պա-
րոն փասքալը ձեռք բերած ըլլայ . . . : Եւ այս ալ
հաւանական կերեւի մեղի . քանզի լսածնուս նայե-
լով՝ Պատրիարքը մեռնելէն ետքը բաւական հարըս-
տութիւն ձեռք բերած ըլլալով անշարժ կալուած-
ներ առեր՝ ու շինութեանց ձեռք զարկեր է, ուստի
ինքը Հիւպատոսարանի մը գործակալ ըլլալով միայն
իր առած ամսականովը հաղիւ թէ կրնայ ապրիլ,
ուրեմն ինչպէս կրնայ այդքան հարստութեան ու
կալուածոց տէր ըլլալ քիչ ժամանակի մէջ . . . : Եւ
եթէ այս պատմածնին իրաւ չէ նէ, ուրեմն կըսեմք,
թէ կամ զետնէն դանձ գտած է, եւ կամ Պատրիար-
քի վախճանէն ետքը միաբանութիւնը ինքնիրեն
Պատրիարքարանը բացած ժամանակը՝ այս անձն ալ
հոն գտնուելով ինքն ալ իրեն ինկած բաժինը առած
է, միւս հոն գտնուող քանի մը միաբանից նման . . . :
Եւ ասկից 'ի զատ հետեւեալ տեղեկութեանս վը-
րայ ալ ուշադրութիւն կը խնդրուի :

Ի. Այլ եւ կը թողունք մեր Ս. Յակոբայ հիւսի-
սային կողմը եւ անոր սեպհականութիւնը եղած լայ-
նատարած հազար կամ հազար հինգ հարիւր կանգունի
չափ պարտէզին տեղը՝ Հանգուցեալ Պատրիարքը
յիշեալ Պ. Յակոբին ընծայելը 1858 թուին, ուր մե-
ծաչէն տուն մ'ալ շինեց . եւ այն ալ գուցէ զինքը
Պօլիս բերել չի տալու համար աշխատելուն՝ (տես
Նկար. 46 թիւ ծանօթ. մէջ) իբր պարգեւ մը ըրած

է անոր. . . բայց ցաւալին սա է որ՝ քաղաքին մէջ չի կայ բնաւ նոյն դիրքով պատուական տեղ մը, եւ այսօր եթէ ծախել հարկ ըլլայ նէ՝ օտար ազգի քրքրիստոնեաները չորս հազար քօակէն դուցէ աւելի կուտան յիշեալ տեղւոյն համար, եւայն, եւայն. կը թողումք նաեւ ցաւը չի կրկնելու համար Չաքարիա Պատրիարքին բողոքականաց տուած տեղն ալ՝ որ յիշեալ տեղւոյն մօտ է, ուր ժողովարան ալ շինեցին իրենց ու քաղաքին մէջ մնացած ժողովուրդնիս կորսան ալ* . . . : Ահա ասոնք Չեղի կը ձգեմք որ ասոնց վրայ դարձնէք Չեր ուշադրութիւնը, եւ այնուհետեւ սրպիտի անձանց կը վայլէ Պատրիարքութիւն եւ իշխանութիւն տալ նէ՝ կուսակցութիւնը վերցընելով՝ անոր վրայ մտածեցէք եւ լնա մը տածեցէք. . . եթէ Ազգին ու Աթոռին ապագան բարւոքելու եւ Չեր ուխտը կատարելու փոյթ ունիք, ու առաջի Աստուծոյ եւ առաջի Ազգիս պա-

* Ասոնք նկարագրելով՝ չըլլայ թէ Միաբանութիւնը քարկոծել տալու առիթ տուած ըլլամք, այլ քարկոծելու ու պարսաւելու անձինքը մեք եմք, որ ազգասիրաբար և առաքինական ոգւով մեր սեպհական ստացուածոցը ու ժառանգութեանցը վրոյ սէր չի ձգելով՝ միայն քանի մը անօգնական եւ անպաշտօն միաբան անձանց ձեռքը ձգեր եմք՝ որով և այսքան կորուստներ ալ ունեցեր եմք քիչ ժամանակի մէջ. . . ինչ բնէ արդեօք խեղճ միաբանութիւնը, քանի որ ազգին կողմէն ձեռք կարկառող օգնական մը չունի, և այս օրուան մնացածներն ալ՝ եթէ Աստուծոյ համար պիտի խօսիմք նէ՝ նոյն Միաբանից պահպանութեամբ մը նացած է՝ հետեւաբար հրաշք է. . . ո՛հ արթննանք Տեա՛րք, ալ արթննա՛նք. քանզի բաւականէն աւելի եղաւ կորուստնիս ամենայն կերպիւ. . . :

տասխանատուութենէն աղատելու փափաք . . . Եւ այս Պատրիարքութեան ընտրութեան վրայօք ալ խոնարհաբար կը ռեմք, թէ՛ եթէ արժան դատէ Ձեր Մեծապատուութիւնը մեր կարծիքը անկողմնաբար եւ անկեղծաբար կը յայտնեմք Ձեզի որը ըլլալը, եւ ասոր կարծեմք թէ՛ նոյն իսկ միաբանութիւնն ալ (մէկ երկուքէն դատ . . .) մեր վրայ վստահ ըլլալով կը բարեհաճին. եթէ ոչ այն մասին ալ կամքը Ձեր ու Միաբանութեանն է. միայն թէ սակը ռեմք թէ՛ չըլլայ թէ փորձը ու օրինակը առջեւնիս ըլլալով ալ՝ կուսակցութեամբ յետինն չար քան զառաջինն ընեմք . . . թէ եւ զաղանի քուէարկութեամբ եղած ալ ըլլայ . . . քանզի անոր ալ փորձը տեսանք, եւ ինչ ըլլալն ալ հասկըցանք, որ մեր ազգին համար դեռ կանուխ է, ու շատ ժամանակ կուզէ՛ որ անոր արդարապէս գործադրութիւնը ընէ . . . Ահա այսքանը Երուսաղիմայ աղէտքներուն ու կորուստներուն վրայօք բաւ համարելով, հիմայ դառնանք միւս ունեցած վէրքերնիս ու ցաւերնիս յայտնել :

Նախ եւ յառաջ մեր կարծիքը սա է որ՝ քանի որ օրինաւոր վարչութիւն դրուեցաւ Ազգիս մէջ, եւ քանի որ օրինաւորապէս ազգը յառաջացընելու փափաք կայ ամենուս ալ սրտին մէջ (թէպէտ եւ չի մոռնանք՝ որ խօսքով է շատերունն ալ . . .) ուրեմն հարկ է որ Օրինաց գիրք կամ Ղատաստանագիրք մը ունենայ Ազգը, որով կարող ըլլայ Ազգին վարչութիւնը օրինաւորապէս գործ տեսնել ու կուսակցութիւններն եւ ապօրինաւորութիւններն ալ վերցընել Ազգիս մէջէն, մանաւանդ թէ վարչութեան վրայ եղող Անգամոց ալ ծանրութիւն մը չըլլալու ու

բամբասանաց տեղի չի տալու համար ալ ամենահարկաւոր է . ինչպէս որ այս խնդրոյն առաջարկութիւնն ալ քանի մը անգամ եղաւ 1860 թուին . բայց դժբաղդարար օղղային տարածայնութիւնը վրայ գալով մանաւանդ թէ քանի մը անձանց ներքին ջիղերուն ալ դպչելուն համար՝ մնաց այն ամենակարեւոր խնդրոյն գործադրութիւնը ու հաստատութիւնը . եւ յիշեալ խնդրոյն օրինակն ալ դրեր եմք Նըկարագրին մէջ . տես եր . 206 : Ուստի կը խնդրեմք որ անոր հաստատութեանը հոգ տարուի :

Բ. Ուսման ու դաստիարակութեան վրայ է խօսելիքնիս . ասոր վրայօք թէպէտ շատ մը գրիչներ , ու շատ մը մեզնէ աւելի գիտնական եւ ազգասէր անձինք բաւականէն աւելի իրենց գիտողութիւնները ճառեցին ու յայտնեցին : Միայն թէ այս մասին վրայօք մենք երկու գիտողութիւն ու առաջարկութիւն ունիմք ընելու . մէյմը որ՝ Պ. Չամուրճեանը Ուսումնական խորհուրդի անգամ ընտրուած է կըսեն . այս մասին մեր գիտողութիւնը սա է որ՝ Պ. Չամուրճեանը երբեմն կը պարսաւէր իրեն գրութեանը մէջ Այվատեան Պ. Մատթէոսին դէմ գրած ժամանակը , ըսելով թէ՝ « դուն քեզ ամեն մարդու , մանաւանդ Ազգային կարեւոր խորհուրդի մը անգամ ըլլալու արժանի տեսնողներուն իմացուր . այն ալ անանկ խորհուրդի մը՝ որ ազգին ապագան անոր յանձնուած է . մատաղահասակ տղայոց կրթութեան վրայ պիտի հսկէ , անոնց ուրիշ բաներու հետ հաւատք եւ կրօնք ալ սովբեցընել պիտի տայ » . (Քըրիստո . Եկ . կառ . վրայ գրած տետ. եր . 14) : Մենք Պ. Այվատեանը՝ նոյն խորհրդոյ պաշտօնին վրայ անց-

ներու արժանաւորութիւն ունենալուն ու չունե-
 նալուն ըսելիք մը չունիմք . բայց սակըսեմք , թէ՛
 այս խօսքը այն ժամանակը Չամուրճեանը՝ յիշեալ
 Այվատեանը Ուսումնական խորհուրդին անդամ ըն-
 րուելուն վրայ՝ արժան չի տեսնելով այսպէս վճռեց ,
 հապա իրեն կասկածոտ եւ մոլորամիտ ըլլալն ալ՝
 նոյն իսկ « Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ հաւատոց եւ
 կարգադրութեան անբիծ եւ անարատ մնալուն պաշտ-
 պանութեան սահմանուած ատեանէ մը » , (տես յիշ-
 եալ տետրին Յատաջարանը) վկայուած ու վճռուած
 է նէ՛ ապա ուրեմն իրեն ինչ ըսելու է , եւ զինքը
 ինչպէս ընդունելու է այսօր նոյն իրեն հակառակօր-
 դը արժան չի տեսած Ուսումնական խորհուրդին՝ —
 որ Ազգին ապագան անոր յանձնուած է . մատաղա-
 հասակ տղայոց կրթութեան վրայ պիտի հսկէ , (մա-
 նաւանդ) անոնց ուրիշ բաներու հետ հաւատք եւ
 կրօնք ալ սովրեցընել պիտի տայ — . ուստի Չա-
 մուրճեանին իրեն վճռովը ինքը անարժան է յիշեալ
 խորհուրդին անդամակից քլլալու . եւ ասիկայ մեծ եւ
 կարեւոր խնդիր մը ըլլալուն Չեր ոչադրութեանը
 կը յանձնեմք Եւ եթէ պատճառ բերուի , թէ
 կրօնական ժողովէն վկայագիր տրուած է անոր Հա-
 յաստանեայց Եկեղեցւոյ հարազատ որդի ըլլալուն,
 վերը ըսինք դարձեալ կը կրկնեմք հոս եւ կը-
 սեմք , թէ ընդունայն է . . . քանի որ իր մոլորու-
 թիւնները յետս կոչած չէ , մանաւանդ թէ տակա-
 ւին իր դրութիւնը կը շարունակէ բարեպաշտ ան-
 ձինքները իրենց անարատ Եկեղեցիէն մոլորցընելու
 նպատակաւ . նա մանաւանդ Պ. Չամուրճեանը ոչ
 միայն Հայաստանեայց Եկեղեցւոյ դէմ մաքառեցաւ

ու կը մտքառի՝ այլ եւ Սահմանադրութեան՝ Ազգային Վարչութեան՝ եւ անձնակաւորի դէմ ալ . այսու ամենայնիւ անոր դրիչը կարկելու համար իրմէն ըստորագրութիւն չի պահանջելէն ետքը Ազգային Վարչութիւնը , ընդհակառակն միւս լրագրաց խումբագիրներէն ստորագրութիւն պահանջեց՝ որոնք որ այս օրինակ յանցանք մըն ալ չի կար վրանին , եւ եթէ կար ալ նէ ինչպէս ասպացուցինք վերերը՝ պատճառը Չամուրճեանն էր եւ ոչ թէ անոնք էին . . . ուրեմն թէ եւ յետս կոչելու ալ ըլլայ իր ըրածները վերստին կը կրկնեմք թէ արժանաւոր չէ՝ Ուսումնական խորհուրդին անդամ ըլլալու , քանզի կասկած կրնայ ըլլալ դարձեալ իր վրան . . . : Եւ դարձեալ կըսեմք , մենք այնքան թեթեւամտ չեմք , որ զմեզ աղանդաւոր կամ դոկտրինայիցեան աղանդաւորաց գլուխ եւ առաջնորդ քարոզելէն վախնալով անոր քղանցքին կամ սեւաներկ ու տղմաթաթաւ գրոշակին տակը անցընելու նպատակաւ՝ վկայագիր տանք իր ձեռքը . . . թէպէտ եւ ատանկ վկայագիրները արժէք չեն կրնար ունենալ . քանզի կը համարիմք թէ (ըստ վկայութեան Չամուրճեանին) աղանդաւոր մը մէկ ուրիշ աղանդաւորի մը ձեռքը վկայագիր մը տուած է : Ուրեմն թող բաժանեն այդ վկայագիրը մէջերնին , այսինքն՝ այդ օրինակ վկայագիր մ'ալ Չամուրճեանը թող անոնց տայ եւ պարտաւոր է տալու ալ . վասն զի ինչպէս որ այժմեան կրօնական ժողովը հակառակ առջի տրուած անոր դէմ վճռոյն կերպիւ մը անոր նոր եւ օտար վարդապետութիւնները ընդունելով վարձատրեցնէ զանի , նոյն օրինակ ալ Չամուրճեանը պէտք է որ իր

վկայած աղանդաւորներուն ձեռքը վկայագիր մ'ալ ինքը կամ իր գաղափարակիցները տան եւ ասով սա աղէկութիւնը կըլլայ՝ որ երկու կողմն ալ մէկըմէկ պատուած կըլլան՝ ու կոխն ալ կը վերջանայ . . . Ուրեմն «կըմնայ այժմ մեզի ըսել՝ Չամուրճեանին գաղափարակիցներուն, ինչ որ Եղիա մարգարէն Բահաղ կուռքին քուրմերուն ըսաւ . — մինչեւ ցերբ կաղայք յերկուս հետս, եթէ Տէր է Աստուած՝ երթայք զհետ նորա . եւ եթէ Բահաղն իցէ՝ երթայք զհետ նորա . — (Գ. Թագաւ. ԺԿ. 21). Թէ որ ուղղափառ քրիստոնեայ էք նէ՝ ահա ձեզ ծնող Հայաստանեայց Ա. Եկեղեցին՝ անոր ետեւէն գնացէք . Թէ որ Պապականներուն կամ Ուննիթոսեանց աղանդին պիտի հետեւիք նէ՝ շիտկէ շիտակ անոնց ետեւէն գացէք : Հիմայ կրօնից ազատութիւն կայ . մարդ ձեզի բան չըսեր . բարեպաշտ Հայոց մէջ ինչո՞ւ մնացեր էք . եւ գիրքեր ու գրուածներ եւ կամ վկայագրեր տըպելով կապականէք հասարակաց միտքը, ինչպէս որ օձը ըրաւ, եւ ինչպէս որ դուն Պ. Չամուրճեան, Հայոց պարզամիտներուն ընել ուղեցիր «Վանլը Էրմէնի իլէն պիր բրօթէստանդ քարողիչի» մակագրով տետրերը գրած ժամանակդ, եւ Զօնայ անուն տետրակներովդ Պապականներուն հակառակ ձեւանալով եւ Ուննիթոսեանց մոլար սկզբունքները ուղղափառ ազգիդ մէջ ալ մտցընել ուղեւով : (Տես Եկեղ. տետ. եր. 52. Չամուրճեանէն հրատարակուած 1861) :

Եւ մէյմ'ալ արտաքին գիտութեանց եւ ուսմանց վրայօք աւելի ուշադրութիւն ըլլալով միանգամայն քիչ մ'ալ Հայկաբանութեան վրայ դատափարակելու փոյթ տարուի . քանզի մեր ազգը 'ի բնէ անտի

օտարասէր՝ չըսեմ օտարամոլ ըլլալով՝ ուստի օտար ուսումն ատենելնուն պէս՝ կսկըսին ո՛չ միայն օտար սկզբունքներ մտցընելով ազգիս մէջ՝ տարածայնութեան ու գաղափարներու տարբերութեան տեղի տալ, ինչպէս որ ՚ի սկզբանէ մինչեւ ցայսօր կը տեսնուի մեր մէջը, եւ որով Ազգային Եկեղեցիին ալ վտանգի մէջ ձգեք եմք, այս անխոհեմ վարմունքներով . . . այլ եւ անոնցմէ ոմանք ալ ազգին թշնամի ձեւանալով՝ յարածամ մատնութեան՝ դաւաճանութեան եւ կռուոյ պատճառ ալ կըլլան. ինչպէս որ օրինակը Չամուրճեան Պատուելիին վրայ ալ տեսնուեցաւ . . . Ուստի կաղաչեմք, որ այս մասին աւելի ուշադրութիւն ըլլայ, չըլլայ թէ ազգը յառաջացընեմք ու ազգին ապագայ սերունդին բարիք մը ձգենք ըսելով ընդհակառակը Ազգիս դահիճները մեր ձեռքը մենք պատրաստած ըլլամք, որոնց օրինակները տեսանք, ու շատ ալ կը գտնուի մեր Ազգային պատմութեանը մէջ . . . :

Գ. Եթէ կարելի է նէ՝ այսուհետեւ դասատու վարժապետներ հասցունելու փոյթ տարուի Ազգիս մէջ՝ մանաւանդ Հայկաքանութեան եւ Քրիստոնէական պարզ եւ ընտանի վարդապետութեան . . . որով ո՛չ միայն մեր լեզուն ու գիտութիւնը նաեւ կրօնքնիս կը ծաղկի, այլ եւ մեր ընտանի ու պարզ սկզբունքներն ալ ընդ հակառակն մեր ազգը այս օրինաւոր ընթացքէն խոտորելով՝ ու դասատուներուն յարգ եւ պատիւ չի տալով՝ եւ անոնց ապրուստը ինչով կըլլայ նէ անոնց վրայօք չի մտածելով իրենք ալ իրենց պաշտօնին մէջ թուրութիւն կընեն. մանաւանդ թէ՛ դասատուութեան ալ փափաք չին ունե-

նար . եւ աւելի դէշն է , որմէ ուսանողք ալ տեսնելով իրենց դասատուին անարգութիւնը ու խեղճութիւնը նաեւ անպատուութիւնը . ուստի կը խորշին դասատուութեան պաշտօնէն . թող թէ՛ դասատուք իբր կտակ ալ կաւանդեն իրենց աշակերտացը՝ որ երբէք նոյն պաշտօնին փափաքող չըլլան . ինչպէս որ շատ ժամանակ տեսեր ու լսեր եմք ալ : Թող այս զուրցածներուս օրինակ համարուի՝ մեր գիտցած՝ լսած՝ ու տեսածները մօտ ժամանակներուս մէջ , եւ այս ալ անանկ նեղ պարագայի ու ժամանակի մը մէջ , որ այսօր թէ Պօլիս եւ թէ գրսերը լապտերով կը փնտուռի անոնց կիսոյն չափ դասատուներ՝ բայց դժբաղդաբար չի կայ ու չի գտնուիր , քանզի մեզնէ առաջ եկողները եւ կամ մենք չորցրնելու ու չի յառաջացրնելու պատճառ եղանք մեր անխոհեմ ընթացքովը :

Զոր օրինակ , Պալատցի Գէորգ Պատուելին , որուն գիտութիւնը ու ազգին ըրած ծառայութիւնը թող երթայ իր բազմահարուստ գրութիւնները վկայէ , եւ այս ալ ասկից 50 տարի առաջ մեր ազգին համար խաւար կարծուած ժամանակները երեւցած է . այսու ամենայնիւ իր խեղճութեամբ ապրիին ալ նոյն ժամանակի գտնուող անձինք թող պատմեն . . . : Նմանապէս Սամաթիոյ Անդրանիկ վարժապետն ալ որ մենք տեսանք , ու կրնամք ըսել թէ՛ իր ժամանակին մէջ եւ գուցէ այժմ անոր չափ Տրամբան մը չի կայ ու չերեւցաւ ալ , բայց ինչո՞վ կապրէր խեղճը , թող տեսնողները վկայեն . . . : Նոյնպէս Բէրիացի Մուրատ բազմազէտ եւ բազմաբեղու աշխատասէր վարժապետը՝ որն որ Նիկոմիդիոյ գաւա-

սին եւ Արմաշու վանուց ուսման մասին իբր լուսաւորիչ եղաւ : Բայց վերջապէս 'ի նախատինս յիշեալ վանքին վանականներուն՝ խեղճութեան մէջ մընալով մինչեւ անգամ յուսահատելով բոլոր դասատուութիւնը դադրեցընելով ախտերուքեան արհեստի հետեւելով իր օրական հացը կը ճարէր : . . . ու զկնի վախճանին ալ՝ գոնէ աննշան չի թողելու համար զթալով մը իր յիրմին վրայ դամբանաքար մի ալ չի ձգեցին , արդեօք կը լսէ ու կիմանայ Ատաբաղարցի եւ այժմեան նոյն վիճակին առաջնորդ ընչաւէտ Ստեփան Եպիսկոպոսն Մաղաքեան , որ յիշեալ Պատուելոյն կարծեմք թէ աշակերտն ալ է . . . : Նաեւ չի մոռնանք յիշելու Փեշարմալճեան Գրիգոր բաղմարդիւն վարժապետը , Ֆիզիքայ Պօղոսը , Սաղմրկեցի Յովսէփը , Զմիւռնիոյ Անդրէասը , եւ դեռ ձօս ժամանակներս Չախրաստճեան Գէորգ Պատուելին , եւ անոր որդւոյն Պ. Գարեգին բաղմալեզու երիտասարդին կրած խեղճութիւններնին նկարագրել , որոնք որ շատերուն ծանօթ է , թէ ինչ դառն վիճակի մէջ կնքեցին իրենց կեանքերնին . . . : Այլ միայն նոյն հին աշխատաւոր եւ արդիւնաւոր դասատուներէն մնացող , եւ դեռ նոր օրերս անկողին ծառայող խեղճ Մալէղեան Յովսէփ վարժապետին համար կըսեմք , որ քանի մը ամիսէ 'ի վեր հիւանդ պառկած է՝ ու իրեն այսքան տարի ազգին՝ մանաւանդ թէ Պատրիարքարանի Մայր դպրոցին ծառայութիւն ընելովն ալ , իր աշխատութեանը փոխարէն գոնէ անոր խեղճ ու ննդ պարագայից մէջ օգնելու փոյթ տանող մը չի կայ . . . : Ուրեմն ինչ յառաջադիմութիւն , եւ էնչ լուսաւորութիւն կսպասեմք Ազգէն . տհն արդիւնք-

ները Ուստի չըլլայ թէ մենք ալ աչառութեամբ դատող դատաւորներուն պէս դատելով միայն այլոց ունեցած պակասութիւններուն վրայ անխոհեմաբար դատաւոր ձեւանալով (ինչպէս որ Ազգիս սովորութիւնն է միշտ . . .) եւ անոնց ունեցած արդարացի իրաւունքն ալ չի պաշտպանեմք, ու վասն Աստուծոյ չի խօսիմք. քանզի ատի ալ մեծ մեղք եւ անօրէնութիւն է. ուրեմն հարկ կը համարիմք ըսել թէ՛ անս այս գէշութիւնները տեսնելով ու գիտնալով Չամուրձեան Պատուելին ալ, վասնորոյ իր յոյսը կտրած ըլլալով ազգէն՝ փոխանակ ազգին ծառայելու՝ պարտաւորուած է օտարաց դուռը իյնալով եւ անոնց թարգմանութիւն ընելով իր ապրուստը ճարել. եթէ անի ալ Աստուած իրեն չի պարգեւերնէ՛ անշուշտ իր ընտանեօքը հանդերձ անօթութենէ յուսահատաբար պիտի մեռնէր խեղճը. վասնորոյ կերպիւ մը կրնայ իրաւունք տրուիլ այն անձին ըրած անվայել ընթացքներուն, թէ եւ ինքը՝ ի բնէ անտի գէշ մարդ մըն ալ համարուած է. բայց այս մասին իրաւունք ունի. եւ քանզի ըստ առածին՝ — անիրաւին հացը ուտողը՝ անոր թուրը քաշելու պարտաւոր է — . վասն զի եթէ ինքն ալ յապուշ մնալով միայն ազգին ձեռքը նայէր՝ մինչեւ ցայսօր իր օսկորներն անգամ մնացած չէր : Ուրեմն այս փորձերը եւ օրինակները տեսնելով Չեր Մեծապատուութիւնը, Ազգասիրաբար օր յառաջ այս խնդիրներնուս վրայօք ալ խորհել բարեհաճեցէք. եւ գիտցէք ալ, որ գըլխաւորապէս ազգիս վրդովման ու տարածայնութեան եւ դաղափարներու տարբերութեան չըսեմ կործանման հիմնական պատճառներուն մէկն ալ այս է . . . :

Դ. Ասոր պէս ալ Վանքերուն վրայօք խուզարկութիւն մը ըլլայ, այսինքն՝ որուն մէջ օրինաւոր անձինք կան նէ՛ զանոնք յառաջ քաշել, եւ նոյն վանքերուն ցաւերը հասկանալով ինչ պէտք է նէ տնօրինել, եւ գլխաւորապէս վանքերուն մէջ գըպրոցներ բանալ ժառանգաւոր հասցընելու համար, եւ անոնց մէկ երկու երեւելի վանքերուն մէջն ալ Վարժանական յրազիր յօրինել ու հրատարակել տալ, որով ոչ թէ միայն իրենք պարապ չի մնալով դայթակղութեան տեղի չեն տար, այլ եւ իրենց գրիչներն ալ վարժուելով կարգիւնաւորին, եւ ետքն ալ արժանաւոր ու պիտանի եւ բանիբուն Յկեղեցական ալ կըլլան, ու իրենց Յկեղեցիներն ալ թշնամոյն ժանիքներէն խաշելու կարողութիւն ալ կունենան . . .

Նմանապէս օրինաւոր Առաջնորդաց օգնական ըլլալ, եւ ասօրինաւորներն ու անկարողներն ալ՝ թէ եւ հրեշտակ ալ համարուած ըլլայ, քանի որ արդիւնք մը չունին՝ ու գայթակղութիւն են ազգին, անանկները բոլորովին երեսէ ձգելու է, որ միւսներն ալ տեսնելով կամ քաջալերուին իրենց պաշտօնին մէջ, եւ կամ յուսահատելով պաշտօններուն մէջ պակասութիւն ու անհողութիւն չընեն . . .

Եւ եթէ կարօտ տեղուանք կան նէ՛ այնպիսի վիճակները, միւս . . . զուրցնմ արդեօք . . . եթէ մեղք ալ է նէ՛ այս մասին թողութիւն ըրէք, ս Տեսնոք . . . հոս Պօլիս հանգըստութեամբ կեանք վարող Յկեղեցականները ուղարկեցէք, որ երթան իրենց պաշտօնին համեմատ աշխատին՝ ու իրենց բանաւոր հօտերը դարմանեն՝ ու գիշատիչ եւ ապականիչ գայլերէն պահպանեն . . .

Ինչ կայ որ հանգիստ նստեր են եւ ուղածնուն պէս

ալ կը դատեն մեծ մեծ ջարդերով . . . որով զիտու-
թեամբ եւ անզիտութեամբ կուսակցութիւն ալ ու
վրդով ալ կը յարուցանեն ազգիս մէջ , ու հող չեն
ըներ , թէ գրսերը ինչ վիճակի մէջ են եւ ինչ կըլ-
լան . . . եւ թէ բարոյապէս ու նիւթապէս ինչ պէտք
է անոնց յառաջանալուն ու զարգանալուն . եւայլն ,
եւայլն : Ուրեմն աղաչեմք որ ասոնց դարմանիննայ-
վի : Այս թէպէտ եւ կը դանուին ալ այնպիսի ան-
ձինք , որք կը յօժարին եւ կը փափաքին այնպիսի
վիճակները երթալ , բայց մէյմը որ առջեւնին գըտ-
նուած օրինաւոր անձանց օգնութիւն մը չընելուն
համար Ազգային վարչութիւնը՝ վասնորոյ կը տարա-
կուսին՝ ու չեն ուզեր երթալ . այս զուրցածիս օրի-
նակ կրնայ ըլլալ , Երեմիա վարդապետը Բաղիշ , ու
Խրիմեան Մկրտիչ վարդապետն Մշու , Արիստակէս
Եպիսկոպոսն Խարբերդու , եւայլն , եւայլն : Եւ մէյ-
մ'ալ առջեւնին ելած արգելքներուն դէմ չի կրնար
դնելնուն , եւ կամ թէ դէմ դրած ժամանակնին ալ
օգնութիւն մը չի տեսնելնուն համար , կսկըսին յու-
սահատիլ՝ մարիլ եւ իյնալ . . . որոնց օրինակներն ալ
չատ են եւ մօտերս ալ մէկ քանին տեսնուեցաւ այս
վերոյիշեալ Հայրենասէր եւ առաքինասէր Առաջնոր-
դաց վրայ . . . : Աւանորոյ կաղաչեմք որ այնպիսի ան-
ձանց թեւ թիկունք ըլլալով օգնէք ու քաջալերէք
որ Ազգը խեղճութենէ ու թշուառութենէ եւ ամե-
նայն արկածից աղատի ու չոչընչանայ . . . : Նա մա-
նաւանդ դուք ալ մ ձեռնհաս Պայազատք , դուք
կըսեմ , սհ , քիչ մ'ալ մէկ քանինիդ փոխանակ Եւ-
րոպա ճանապարհորդութիւն ընելնուդ , եւ փոխա-
նակ Պօլիս հսկայաչէն պալատներու մէջ բնակելով

հանդիստ կեանք վարելնուդ՝ դո՞նէ քիչ մ'ալ մեր
 դժբաղդ Հայրենեաց մէջ ճանապարհորդութիւն ը-
 նելով աչօքնիդ տեսէք Ձեր հայրենակից եւ արեւա-
 կից ծնողքներնուդ՝ եղբայրներնուդ՝ ու քոյրերնուդ
 եւ զաւակներնուդ կրած վիշտերը ու խեղճութիւն-
 ները . եւ անոնց ձեռքերնուդ եկածին չափ օգնե-
 ցէք , եւ ինչ պէտք է նէ տնօրինեցէք՝ մէկ մարմին
 մը ըլլալով , եւ ոչ թէ հանապաղ շոյայլութեան ու
 զեզխութեան մէջ լողալով եւ միմեանց ընդ ախամբ
 նայելով՝ կուսակցութիւն յարուցանէք , այլ միաբա-
 նութեամբ եւ սիրով դէմ դրէք եկած արգելքնե-
 րուն՝ եւ մարդասիրաբար օգնեցէք ազգիս խեղճե-
 րուն . . . եւ այս ընելովնիդ՝ յայնժամ ոչ միայն այն
 դրսի անօգնական խեղճերն ալ կը մխիթարուին , այլ
 եւ մխիթարուելով ալ չեն կորնչիր հեաղհետէ օտա-
 րաց դուռը իցնալով . . . եւ Գուք ալ այս բարեգոր-
 ծութիւնները ընելով ոչ միայն Աստուծմէ կը փա-
 ռաւորիք , այլ եւ Ազգէն ալ միշտ եւ հանապաղ
 օրհնութիւն լսելու կարժանանաք . . . :

Ո՛հ , զժրն ասեմք , եւ Ազգիս կրած աղետալի
 վէրքերէն ու կորուստներէն զժրն 'ի ներքոյ գրի առ-
 նեմք . . . :

Վերջապէս Ազգիս ներկայ վիճակին օգնելու ,
 մանաւանդ թէ Ազգիս ապագան լաւցընելու համար
 ամենաօգտակար եւ ամենակարեւոր ու ամենափա-
 փաքելի երկու խնդիրներ ալ կան , որոնք թերեւս
 ազգիս շատերուն ծանօթ չէ . բայց այժմ անոնց վը-
 րայ կը լռեմք եւ պիտի ալ լռեմք . քանզի մէյմը
 որ՝ մինչեւ ցարգ քանի մը իրողութիւններու վրայօք
 ազգասիրաբար տեղեկութիւն տուինք ալ նէ՝ այսու

ամենայնիւ ոչ թէ միայն անարդու թիւն կրեցինք քանի մը ազդատեաց անձանց երեսէն* . . . այլ եւ բան մ'ալ չի շահեցաւ ազգը անոնց գործադրութիւնը չընելով . եւ ընդհակառակն ազգիս թշնամիները իմանալով զանոնք ու տեղեկութիւն ստանալով ամենք դեռ հակառակութեան եւ ատելութեան մէջ կը թաւալիմք . . . եւ այսքան դրելնուս ու վէրքերնիս հրատարակութեամբ երեւան հանելնուս շարժառիթն ու պատճառն ալ՝ յիշեալ քանի մը անձանց ատելութեան ոգւով մեզի դէմ անբաւականութեամբ գրած դատաքննական վիճաբանութիւնն եղաւ . ըստ որում մենք գիտաւորութիւն ունէինք՝ առանձին տեղեկագրով մը Ձեզի ներկայացընել զանոնք՝ Ձեր ուշադրութիւնը անոնց վրայ գրաւելու համար . բայց այժմ սարագաններն ստիպեց զմեզ՝ որ հրատարակեմք

*Եւ այս ալ իրենց պարտքն էր որ կատարեցին . . . քանզի ո՞ր Ազգասէր անձինքը, և որ Ազգիս սիրոյն և փառացը համար աշխատողները՝ չանարդեցին՝ չի հալածեցին ու խելադարի տեղ չի դրին . . . և կամ թէ ո՞ր առաքինի և ճշմարտասէր անձինքները չի շարժարեցին ու դառնութեամբ չի լեցուցին անոնց սրբտերը՝ անոպայ ազգայինք մեր . . . և փոխանակ զանոնք պատուելնուն տամարդի՝ սոպր՝ ազգատեաց և խարերայ անձինքը պաշտպանեցին և փառաւորեցին՝ դովելով և հռչակելով . . . ուրեմն հա՛րկաւ մենք ալ նոյն բաժինը պիտի առնէինք, և հա՛րկաւ սյս գէշութիւնները մեզի ալ պիտի ընէին . մանաւանդ թէ այն տօնելի և պատկառելի Անձանց՝ ոտաց փոշին անգամ չեմք ու չեմք կրնար ըլլալ . . . ուստի եթէ մենք ալ յանցաւոր համարուեցանք նէ՛ վերջիչեալ անձինքներուն առջին՝ իրենցմէ ներողութիւն կը խնդրեմք, քանզի գիտնան՝ որ ճշմարտութիւնն էր խօսողը և ոչ մենք :

զանոնք, միանգամայն գիտնալով ալ՝ որ մեր մէջը դադանի ու ծածուկ բան չի կրնար ըլլալ ու չը պիտի ըլլայ . եւ մէյմ'ալ մինչեւ որ այս վերոյիշեալ կորուստներնուս ու աղէտքներնուս եւ առաջագրութիւններնուս դարման եւ օգուտ մը չըլլայ՝ կամ անոնց դործադրութիւնը մինչեւ որ Չեղնէ շիտանմեմք, չի պիտի հաղորդեմք յիշեալ աղգօգուտ երկու խընդիրներն ալ . . . 'ի վերայ այսր ամենայնի՝ կթէ տեսնեմք Ձեր սէրն ու փափաքը՝ ու զմեզ ալ ապահովցնէք որ զանոնք աղգասիրաբար պիտի դործադրէք, յայնժամ կարելի է որ աղգասիրաբար հաղորդեմք Ձեզի զանոնք ալ :

Բայց այժմ տն կաղաչեմք Ձեր պատկառելի Ատենէն, որ մեր Նկարագրին վերջը դրած յորդորներնուս վրայ ուշադրութիւննիդ դարձընելով 'ի սէր Աստուծոյ եւ 'ի սէր Ազգիս տարածայնութիւնը ու ասելութիւնը մէջերնուդ վերջացուցէք . Ազգիս ներկան ու ապագան բարեօքելու փոյթ տարէք . թողէք մինչեւ ցայժմ եղած գացածները . այլ արթնցէք Տեւորք, եւ արթնամք մենք ալ . քանզի ապագայ սերունդը մեզի կը նայի, եւ Ազգիս ապագայ բաղդը Չեղնէ կախեալ է . ուրեմն եւ Գուք ալ այն մըտօք եւ այն գիտողութեամբ ընտրեցէք, թէ մըն է հաճելին եւ օգտակարն . չըլլայ թէ այս օրուան զուրցածնիս ու սնօրինածնիս վաղը մեր ձեռքովը կամ աւրեմք եւ կամ դործադրութիւնը չընելով՝ եւ կամ թէ հոգ չի տանելով երեսի վրայ ձգեմք՝ ընդունայն տեղը աշխատելով ու պօռչըտալով . . . ինչպէս որ ազգիս սեպհական բնաւորութիւն մը եղած է այս զուրցածներս . ուրեմն կրկին կաղաչեմք, որ այսու-

հետեւ այն հինցած ու արմատացած մնասաբեր բը-
 նաւորութիւննիս ու սովորութիւննիս մէկգի թողով
 ուրանամք անոնց ամենքն ալ, եւ դուք ալ անհետ
 ընելով զանոնք ազգասիրաբար դարձուցէք Ձեր աչ-
 քը Ազգին վրայ. որ յայնժամ մենք ալ մեր արտա-
 սուքը սրբելով միանգամայն Ձեր կենացը ազօթող
 ըլլամք ազգովին, ինչպէս որ մինչեւ ցարդ մեր բա-
 րեխնամ Օդոտտախառ կայսեր անգլին կենացը եւ
 Անոր բոլոր Բարձրաստիճան Նախարարաց կենացը
 համար ազօթող կըլլամք նէ : Ապա թէ ոչ՝ քանի
 որ շունչը բերաննիս է, պիտի բողոքեմք՝ ձանձրու-
 թիւն տալով. եւ քանի որ խիղճը վրանիս է, պի-
 տի լամք, լամք, եւ դարձեալ պիտի լամք պաղա-
 տելով եւ գոչելով. մինչեւ որ կամ զուրցածներնուս
 դորձադրութիւնը տեսնեմք, եւ կամ հողինիս Ա-
 ւանդեմք . . . այնուհետեւ մեղքը ձեր վիզը, եւ ա-
 րիւն ձեր 'ի գլուխս ձեր եղիցի . . . քանզի ըստ ա-
 ռակի Աւետարանին՝ — *Գողո՞ւ հարաք Ձեզ՝ եւ ոչ*
կաքաւեցիք . ողբացաք՝ Ձեզ՝ եւ ոչ լացիք . գոչե-
ցաք Ձեզ՝ եւ ոչ լուայք —

— 5 ЮНЬ 1898




БНТР. Б. П. С. Т. Ч. И. Т.
 Благ. Общ.

Ա Ջ Դ

Աշխատութեանս տպագրութեան ժամանակը անցած դէպքերուն վրայօք (որոնք որ նիւթիս կը վերաբերէին) քանի մը դիտողութիւններ աւելցուցինք, ինչպէս որ՝ վերջի Մասերուն, այսինքն՝ 111—115—129—145 եւ այլն երեսներուն մէջ կը տեսնուին :

Վ Մարտ 1864



ՄԻԱԿ

ՈՒՂԻՉ

ՀՋ 302	
29—7 երկնից	յերկնից
29—47 արհամարհած	արհամարհուած
30—43 զառանցքներուն	զառանցանքներուն
38—48 դիակոյզ	Թիակոյզ
67—1 շաւղէ	շաղուէ
92—15 1862	1864
116—27 զիս	զմեզ
126—16 կը դիզեմ	կը Թիզեմ
144—18 անցընելու	անցնելու

